

ԻՏ ԱՍԿԵՐԻՍ
ԻՏ ԸՆԿՐԱՆԻՇ

Իրականացում

01

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

էջ 3-14

Ամերիաբանկ համառոտ ակնարկ
Խորհրդի նախագահի ուղերձը
Գլխավոր տնօրենի ուղերձը
Պատմական իրադարձություններ
Միջազգային գործընկերներ

02

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

էջ 15-52

Արտաքին միջավայր
ՀՀ բանկային համակարգը
Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում
Մանրածախ բանկային գործառնություններ
Կորպորատիվ և Ներդրումային բանկային գործառնություններ
Առևտրային գործառնություններ
Բիզնեսի պատասխանատու վարում

03

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

էջ 53-70

Ռիսկերի կառավարման նպատակները և սկզբունքները
Ռիսկերի կառավարման համակարգ
Ռիսկերի գործընթացների կազմակերպում և կառավարում Ռիսկի ախորժակ
Հիմնական ռիսկերը և ռիսկերի կառուցվածքը

04

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

էջ 71-90

Կորպորատիվ կառավարման կառուցվածքը
Տնօրենների խորհուրդ
Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ
Տնօրենների խորհրդի անդամներ
Տնօրինություն և գլխավոր տնօրեն
Կազմակերպական կառուցվածքը
Մեր անձնակազմը

05

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

էջ 91-178

Անկախ աուդիտորական եզրակացություն
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
Ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրություններ
Պատասխանատու անձանց հայտարարություն

06

ՀԱՎԵԼՎԱԾ

էջ 179-180

Հապավումներ

01



Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ

Ամենախոշոր վարկատուն Հայաստանում

ՀՀ տնտեսության խոշորագույն վարկատուն, որի վարկային պորտֆելի մասնաբաժինը բանկային ոլորտում կազմում է 21.7%

Ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ հարթակ՝ թվային լուծումների լայն կիրառմամբ

Բեռնաթափման գործակից՝ 99%, ինտերնետբանկինգի օգտագործման գործակից՝ 82%, ամսական ակտիվ օգտատերերի թվի արագ աճ

Հաճախորդների և աշխատակիցների բարձր գոհունակություն

Սպասարկման բարձր որակ և հաճախորդների գոհունակություն, աշխատակիցների բավարարվածության և ներգրավվածության բարձր մակարդակ, առաջատար դիրք ըստ կորպորատիվ մշակույթի և արժեքների

Բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման լավագույն մեթոդները

Բիզնեսի պատասխանատու վարում, բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման մշակույթի խթանում, «Կանաչ» պարտատոմսերի առաջին թողարկողը Հայաստանում, լավագույն փորձի վրա հիմնված կորպորատիվ կառավարման համակարգ, արհեստավարժ խորհուրդ և փորձառու ղեկավարներ

Բարձր շահութաբերություն և կայուն աճի ներուժ

Եկամտաբերության մշտապես բարձր ցուցանիշներ, բիզնեսի կայուն բարձր աճ վերջին տարիներին, դիվերսիֆիկացված վարկային պորտֆել և եկամտի աղբյուրներ, ռիսկերի արդյունավետ կառավարում

Գրավիչ մակրոտնտեսական միջավայր

Տարածաշրջանի ամենաարագ զարգացող տնտեսություններից մեկը, ՀՆԱի բարձր աճ 2025թ., բարձր տնտեսական աճի հեռանկարով

Վարկանիշներ.

S&P BB-

Moody's Ba3

Հիմնական ցուցանիշները

ՀՀ բանկային համակարգի առաջատարը հիմական ֆինանսական ցուցանիշներով.

Ակտիվներ
2,335 մլրդ ՀՀ դրամ
↑
+24.0%
ՆՏՀ

18.2%

Շուկայի մասնաբաժին

Պարտավորություններ
1,998 մլրդ ՀՀ դրամ
↑
+22.9%
ՆՏՀ

18.7%

Շուկայի մասնաբաժին

Կապիտալ
337 մլրդ ՀՀ դրամ
↑
+31.5%
ՆՏՀ

15.5%

Շուկայի մասնաբաժին

Ավանդներ²
1,530 մլրդ ՀՀ դրամ
↑
+19.0%
ՆՏՀ

19.5%

Շուկայի մասնաբաժին

Զուտ վարկեր և փոխառվածություններ
1,672 մլրդ ՀՀ դրամ
↑
+27.7%
ՆՏՀ

21.7%

Շուկայի մասնաբաժին

Զուտ շահույթ
72.6 մլրդ ՀՀ դրամ
↑
+21.0%
ՆՏՀ

17.2%

Շուկայի մասնաբաժին

Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ

Ամերիաբանկը Հայաստանի առաջատար ֆինանսական հաստատությունն է և ՀՀ տնտեսական ոլորտի առավել նշանակալի դերակատարներից մեկը:

Հանդիսանալով դինամիկ զարգացող ունիվերսալ բանկ՝ Ամերիաբանկն իր սպասարկման բազմաֆունկցիոնալ հարթակի միջոցով մատուցում է Նորարարական բանկային ծառայությունների ընդարձակ փաթեթ՝ թվային պրոդուկտների հստակ շեշտադրմամբ:

Բանկն առաջնորդվում է հաճախորդամետ քաղաքականությամբ՝ թվային ժամանակակից միջավայրում սպասարկման բարձր որակ և բանկային փորձառություն ապահովելու նպատակով:

Ամերիաբանկը որդեգրել է բիզնեսի պատասխանատու վարման քաղաքականությունը՝ նպաստելով Հայաստանի անցմանը դեպի կայուն ապագա:

Ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ հարթակ՝ թվային լուծումների լայն կիրառմամբ

99%

Բեռնաթափման գործակից¹
Տարեկան աճ 1 տոկոսային կետով

53%



(դեկտ.դեկտ.)

Ամսական ակտիվ օգտատերերի թիվը (ըստ գործարքների)

47%

Թվային գործարքների մասնաբաժինը

82%

Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակից
Տարեկան աճ 5 տոկոսային կետով

50%




ՆՏՀ

Գործարքներ մոբայլ և ինտերնետբանկինգ համակարգով

92%

Կանխիկ գործառնությունների գծով բեռնաթափման գործակից²



Հաճախորդների գերազանց սպասարկում.

NPS 79.7%

CEI³ 9.8

¹ Share of transactions performed via distant and digital channels in total number of bank's transactions
² Share of cashless transactions performed via distant and digital channels in total number of cashless transactions
³ Client Experience Index with max possible value of 10

Մեր մրցանակները 2025թ. ընթացքում

2025թ. նշանավորվեց մի շարք կարևոր միջազգային մրցանակներով: Ամերիաբանկն արժանացավ հեղինակավոր Euromoney ամսագրի կողմից «Գերազանցության մրցանակի» որպես «2025թ. լավագույն բանկը Հայաստանում»: 2011թ. ի վեր մենք այս պատվավոր մրցանակին արժանանում ենք արդեն 11րդ անգամ:

2025թ. վերահաստատվեց նաև մեր առաջատար դիրքը մի քանի ոլորտում: Global Finance ամսագրի կողմից Ամերիաբանկը ճանաչվեց «Լավագույն բանկը Հայաստանում կայուն ֆինանսավորման գծով» և «Լավագույն ներդրումային բանկը Հայաստանում» ևս մեկ անգամ հաստատելով մեր բարձր ցուցանիշները կայուն ֆինանսավորման լուծումների ոլորտում, ինչպես նաև մեր առաջատար դիրքը ներդրումաբանկային գործունեության և կապիտալի շուկաների ոլորտներում:

Թվային բանկինգի ոլորտում մեր նվաճումները բարձր գնահատանքի արժանացան Global Finance ամսագրի կողմից, որը Ամերիաբանկին ՀՀ-ում հաղթող ճանաչեց ամենամյա «Լավագույն թվային բանկ» մրցանակաբաշխության չորս անվանակարգում. «Լավագույն փոխակերպումը», «Լավագույն օնլայն պրոդուկտները», «Լավագույն վարկավորումը» և «Լավագույն նորարարական թվային բանկը»:

Բացի այդ, երկրորդ տարին անընդմեջ Euromoney ամսագիրն Ամերիաբանկին շնորհեց «Անշարժ գույքի ձեռքբերման լավագույն բանկը Հայաստանում 2025թ.» մրցանակը՝ վերահաստատելով մեր կայուն դիրքը հիփոթեքային շուկայում և նորարարական բնակարանային լուծումներ ապահովելու մեր հանձնառությունը:



2025թ.-ին Ամերիաբանկի բոլոր մրցանակները՝ ներքևում

- Ամերիաբանկը ճանաչվել է Հայաստանի լավագույն բանկն անշարժ գույքի ձեռքբերման ոլորտում Euromoney ամսագրի կողմից
- Ամերիաբանկը լավագույնն է ճանաչվել Global Finance ամսագրի «Լավագույն թվային բանկ 2025» մրցանակաբաշխության 4 անվանակարգում
 - «Լավագույն փոխակերպումը»
 - «Լավագույն օնլայն պրոդուկտները»
 - «Լավագույն վարկավորումը»
 - «Ամենանորարար թվային բանկը»
- Ամերիաբանկն արժանացել է Euromoney ամսագրի «2025 թ. լավագույն բանկը Հայաստանում» գերազանցության մրցանակին
- Ամերիաբանկը ճանաչվել է 2025 թ. կայուն ֆինանսավորման գծով Հայաստանի լավագույն բանկը Global Finance-ի կողմից
- Ամերիաբանկը ճանաչվել է 2025 թ. Հայաստանի լավագույն ներդրումային բանկը Global Finance-ի կողմից

Խորհրդի նախագահի ուղերձը



Անդրեյ Մկրտչյան

Տնօրենների խորհրդի նախագահ

2025 թվականին համաշխարհային միջավայրը շարունակեց դինամիկ կերպով զարգանալ՝ պահպանելով իր բարդ կառուցվածքը: Աշխարհաքաղաքական իրադարձությունների, զարգացող առևտրային հարաբերությունների և փոփոխվող տնտեսական քաղաքականության պայմաններում միջազգային շուկաների վերածնավորման գործընթացը շարունակվեց: Չնայած որոշ խոշոր տնտեսություններում գնաճի մեղմացմանը՝ համաշխարհային տնտեսության անհավասարաչափ աճի միտումը պահպանվեց, իսկ ֆինանսական շուկաները շարունակեցին հարմարվել քաղաքական և տնտեսական նոր իրողություններին: Փոխակերպման և անորոշության նշված միջավայրում առավել քան երբևէ կարևոր էին դիմադրողականությունը, հարմարվելու ունակությունը և հստակ ռազմավարությունը:

Հայաստանը ևս մեկ անգամ աչքի ընկավ իր տնտեսության ամրությամբ և ճկունությամբ: 2025 թվականին իրական ՅՆԱ-ի աճը կազմեց 7.2%՝ առաջ անցնելով առաջին կիսամյակի համեմատ ցուցանիշներից և զգալիորեն գերազանցելով նախնական կանխատեսումները: Արտարժույթի փոխարժեքի տատանումների պայմաններում հայկական դրամն ընդհանուր առմամբ դրսևորեց կայունություն՝ էլ ավելի ամրապնդելով ներդրողների վստահությունը: Տարին նաև նշանավորվեց ռազմավարական ենթակառուցվածքային նախագծերով և տեխնոլոգիական ոլորտում խոշոր ներդրումներով, որոնք ամուր հիմք ստեղծեցին տարածաշրջանային և միջազգային առավել խորը ներգրավվածության և երկարաժամկետ կայուն զարգացման համար:

Տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը կրկին բանկային համակարգն էր, որը տպավորիչ աճ գրանցեց ակտիվների (16.6% նախորդ տարվա համեմատ) և վարկերի (22.7% նախորդ տարվա համեմատ) գծով: Համակարգում պահպանվեց կապիտալիզացիայի բարձր մակարդակը և ակտիվների կայուն որակը: Բանկերն ամրապնդեցին իրենց դերը ոչ միայն որպես ֆինանսական միջնորդ, այլև որպես նորարարության, թվային փոխակերպման և ֆինանսական ծառայությունների հասանելիության ապահովման շարժիչ ուժ: Տեխնոլոգիաների և թվային լուծումների ոլորտում շարունակական ներդրումների արդյունքում բարելավվեցին

արդյունավետությունը և հաճախորդների փորձառությունը՝ ոլորտի համար ապահովելով հետագա կայուն աճի ամուր հիմքեր:

2025 թվականն Ամերիաբանկի համար կայուն առաջընթացի և ռազմավարական զարգացման տարի էր: Մենք պահպանեցինք մեր դիրքը՝ որպես Հայաստանի տնտեսության առաջատար վարկատու՝ ընդլայնելով մեր վարկային պորտֆելը և ապահովելով ռիսկերի խելամիտ կառավարում: Նախորդ տարվա համեմատ մեր զուտ վարկերի և փոխատվությունների պորտֆելը գրանցեց տպավորիչ աճ՝ 27.7%, որի արդյունքում շուկայի մասնաբաժինը կազմեց 21.7%: Մեր դիվերսիֆիկացված վարկային ռազմավարությունը մեզ հնարավորություն տվեց ֆինանսավորել խոշոր ռազմավարական նախագծեր՝ միաժամանակ ակտիվորեն աջակցելով փոքր և միջին ձեռնարկություններին, ինչպես նաև մանրածախ հաճախորդներին: Այս հավասարակշռված մոտեցումը կայուն աճ ապահովեց և ամրապնդեց շուկայում մեր դիրքը: Չորրորդ տարին անընդմեջ Ամերիաբանկն ապահովեց ռեկորդային բարձր շահութաբերություն: Նախորդ տարվա համեմատ՝ զուտ շահույթի աճը կազմեց 21.0%, իսկ կապիտալի միջին եկամտաբերությունը (ROAE)՝ 25.0%, ինչը վկայում է մեր բիզնես մոդելի հուսալիության և գործառնական արդյունավետության մասին:

Թվային կարողությունների ընդլայնման և նորարարական պրոդուկտների առաջարկների շնորհիվ մենք շարունակեցինք ընդլայնել մեր ակտիվ հաճախորդների բազան: Թվային բանկային գործունեության ուղղությամբ մեր շարունակական ներդրումները թույլ տվեցին ապահովել ավելի արագ սպասարկում, ընդլայնել ավտոմատացման ծավալները և ունենալ հաճախորդների հետ ավելի սահուն փոխգործակցություն: Թվայնացումը շարունակում է համարվել մեր առանցքային ռազմավարության ուղղությունը: Այն թույլ է տալիս մեզ ողջ երկրում ապահովել ֆինանսական ծառայությունների առավել ընդարձակ հասանելիություն և ծածկույթ:

Մեր արդյունավետ գործունեության և ռազմավարության երկարաժամկետ կայունության լավագույն դրսևորումը «Լայոն Ֆայնենս Գրուփ» ՓԲԷՄԻ (Lion Finance Group PLC) խմբի ընդգրկումն էր FTSE 100 ինդեքսում՝ Ամերիաբանկի

խմբին միանալուց ընդամենը երկու տարի անց: Սա վկայում է Ամերիաբանկի խմբում ընդգրկվելու ռազմավարական կարևորության և խմբի ընդհանուր զարգացման ուղղությամբ վերջինիս նշանակալի ներդրման մասին:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ամերիաբանկի ամբողջ թիմին պրոֆեսիոնալիզմի, նվիրումի և անխոնջ ջանքերի համար: Մեր բոլոր ձեռքբերումների հիմքում նրանց նվիրումն է: Շնորհակալություն եմ հայտնում նաև մեր հաճախորդներին, գործընկերներին, կարգավորող մարմիններին և բաժնետերերին՝ իրենց շարունակական վստահության և աջակցության համար:

2026 թվականը դիմավորում ենք վստահ և հստակ սահմանված ռազմավարական տեսլականով: Ամերիաբանկը կշարունակի կառուցել ամուր հիմքեր, ամրապնդել առաջատարի իր դիրքը և առաջարկել նորարարական ու հաճախորդակենտրոն բանկային լուծումներ՝ դրսևորելով պատասխանատու գործելաոճ: Մենք ձգտելու ենք ապահովել գերազանց արդյունք և կայուն աճ՝ ստեղծելով երկարաժամկետ արժեք մեր բոլոր շահառուների համար:

Անդրեյ Մկրտչյան
Տնօրենների խորհրդի նախագահ

Գլխավոր տնօրենի ուղերձը



Արտակ Ջանեսյան

Տնօրինության նախագահ - գլխավոր տնօրեն

Հպարտ եմ արձանագրել, որ 2025թ. Ամերիաբանկի համար ևս մեկ բացառիկ տարի էր, քանի որ մեզ հաջողվեց պահպանել մեր աճի տեմպը և ապահովել եկամտաբերության ռեկորդային բարձր ցուցանիշներ: Նշված արդյունքներն ապահովվել են մեր թիմի պրոֆեսիոնալիզմի և նվիրվածության, ինչպես նաև շնորհիվ Հայաստանի տնտեսության կայունության և նշանակալի աճի: Մեր շարունակական հաջողությունն արտացոլում է մեր երկարաժամկետ ռազմավարության ամրությունը, հետևողականությունը և արդյունավետությունը:

2025թ. ընթացքում մենք զգալի աճ ապահովեցինք հիմնական բանկային գործառնությունների ուղղությամբ՝ ամրապնդելով մեր դիրքը որպես Հայաստանի տնտեսության ամենախոշոր վարկատու: Մեր վարկերի և փոխառությունների պորտֆելի զուտ արժեքը նախորդ տարվա համեմատ աճեց 27.7%-ով՝ հասնելով 1,672 մլրդ ՀՀ դրամի և ամրապնդելով մեր առաջատար դիրքը շուկայում՝ 21.7% մասնաբաժնով: Նշված աճը պայմանավորված էր բանկային գործունեության բոլոր հիմնական ուղղություններում գրանցված բարձր ցուցանիշներով: Կորպորատիվ սեգմենտի վարկերի պորտֆելն* աճեց 28.3 %-ով՝ հասնելով 935 մլրդ ՀՀ դրամի, իսկ մանրածախ սեգմենտի վարկերի պորտֆելը գրանցեց 27.8%-ի տպավորիչ աճ՝ հասնելով 762 մլրդ ՀՀ դրամի: Մենք պահպանեցինք ակտիվների բարձր որակը: 3-րդ փուլի չաշխատող վարկերի (NPL) ցուցանիշը կազմեց 2.1%, ինչն արտացոլում է փոփոխվող տնտեսական միջավայրում ռիսկերի կառավարման նկատմամբ մեր պատասխանատու մոտեցումը: Բացի այդ, կապիտալի կառավարման կշռադատված ռազմավարության շնորհիվ մենք կարողացանք պահպանել կապիտալի կայուն համարժեքություն. 1-ին մակարդակի կապիտալի և ընդհանուր կապիտալի համարժեքության գործակիցները կազմել են համապատասխանաբար 14.4% և 17.0%: 2026 թվականի սկզբին մենք թողարկեցինք և հաջողությամբ տեղաբաշխեցինք առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի պարտատոմսերը՝ ապահովելով լրացուցիչ կապիտալի բուֆերներ հետագա աճի և մեր ռազմավարական նպատակների իրականացման համար: Մեր ավանդների և պարտատոմսերի ընդհանուր պորտֆելը նախորդ տարվա համեմատ աճել է 19.0%-ով՝ կազմելով 1,530 մլրդ ՀՀ դրամ. արդյունքում շուկայի մասնաբաժինը կազմել է 19.5%:

2025թ. մենք կրկին ապահովեցինք շահութաբերության բացառիկ մակարդակ. բանկի զուտ շահույթը կազմեց 72.6 մլրդ ՀՀ դրամ՝ գրանցելով 21.0% տարեկան աճ, իսկ կապիտալի եկամտաբերությունը (ROE)՝ 25.0%, ինչը 3.6 տոկոսային կետով բարձր է շուկայի միջին ցուցանիշից: Նշված արդյունքը հիմնականում պայմանավորված էր զուտ տոկոսային եկամտի 27.1% տարեկան աճով, ինչն արտացոլում է մեր շահույթի գեներացման կայունությունը:

Որպես տեխնոլոգիական հենք ունեցող և հաճախորդակենտրոն բանկ՝ մենք զգալիորեն բարելավեցինք մեր թվային բանկային կարողությունները՝ կենտրոնանալով երկարաժամկետ հարաբերությունների կառուցման վրա՝ շնորհիվ գերազանց սպասարկման, էկոհամակարգային մոտեցման և նորարարության: 2025 թվականին մենք գրանցեցինք բարձր արդյունքներ թվային բանկային ծառայությունների ոլորտում: Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակիցը տարեվերջի դրությամբ կազմեց 81.6%՝ տարեկան կտրվածքով աճելով 4.5 տոկոսային կետով, իսկ կանխիկ գործառնությունների գծով բեռնաթափման ցուցանիշը** հասավ 91.9%-ի: Ամսական կտրվածքով ակտիվ օգտատերերի թիվը, ըստ գործարքների և մուտքերի քանակի, նախորդ տարվա համեմատ աճել է համապատասխանաբար 52.5% և 42.9%-ով: Մեր հաճախորդակենտրոն մոտեցումն արտացոլվում է հաճախորդների բավարարվածության բարձր ցուցանիշներում. հաճախորդների հավատարմության գործակիցը (NPS) կազմել է 79.7%, իսկ հաճախորդների փորձառության գործակիցը (CEI)՝ 9.8 (գերազանցելով մեր թիրախային 9.5 ցուցանիշը):

Մեր հաջողություններն ու նվաճումները ամրագրվեցին միջազգային հեղինակավոր մրցանակներում: Ամերիաբանկն արժանացավ հեղինակավոր Euromoney ամսագրի կողմից «Գերազանցության մրցանակի» որպես «2025թ. լավագույն բանկը Հայաստանում»: 2011 թվականից ի վեր մենք արժանանում ենք այս պատվավոր մրցանակին արդեն 11-րդ անգամ, ինչը վկայում է մեր գործունեության կայունության և Հայաստանի բանկային ոլորտում գերազանց ցուցանիշներ ապահովելու մեր կայուն հանձնառության մասին: Եվ, իհարկե, մեր ամենամեծ ձեռքբերումը Lion Finance Group-ի ընդգրկումն էր FTSE 100 ինդեքսում, ինչն արտացոլում է ներդրողների վստահությունը մեր երկարամյա արդյունավետ գործունեության նկատմամբ:

2025 թվականը նշանավորվեց նաև մեր երկարամյա գործընկերների՝ միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ) հետ համագործակցությամբ ձեռք բերված ֆինանսավորման զգալի ձեռքբերումներով: Այդ միջոցներն ուղղված են ՓՄՁ-ների համար ֆինանսների հասանելիության ընդլայնմանը, Հայաստանի մասնավոր հատվածում «կանաչ» ֆինանսավորման աճի խթանմանը և հավասար հնարավորությունների ստեղծմանը: Այս գործարքները վճռորոշ նշանակություն ունեցան կայուն ֆինանսավորման մեր օրակարգն առաջ մղելու և զգալի տնտեսական ազդեցություն ունեցող պատասխանատու ներդրումների խթանման մեր հանձնառությունն ամրապնդելու գործում:

Հիմնվելով նախորդ տարիներին ստեղծված մեր ամուր հիմքերի և բարենպաստ դիրքի վրա՝ մենք շարունակելու ենք ապահովել կայուն աճ, զարգացնել թվային նորարարական լուծումները և հանդիսանալ մեր հաճախորդների հիմնական բանկը: Վստահ ենք, որ կկարողանանք ստեղծել երկարաժամկետ և կայուն արժեք մեր բոլոր շահառուների համար՝ միաժամանակ հարմարվելով շուկայի փոփոխություններին և արդյունավետորեն օգտագործելով առաջացող նոր հնարավորությունները:

Արտակ Ջանեսյան Տնօրինության նախագահ - գլխավոր տնօրեն

* Համախառն վարկեր և փոխառություններ
** Հեռավար և թվային ուղիներով (ԻԲ, ՄԲ, POS/VPOS) կատարված անկանխիկ գործարքների մասնաբաժինը գործարքների ընդհանուր թվում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՍԵՐՎԻՍ ԿԵՆՏՐՈՆ

Պատմական իրադարձություններ

Մեր հաջողության ուղին

Մի խումբ երիտասարդ հայրենադարձ գործարարներ հիմքում են «Ամերիա» խորհրդատվական ընկերությունը

1998

1ին ձեռքբերման գործարքը ՀՀ բանկային համակարգում՝ Հայաստանի ամենահին, սակայն ամենափոքր բանկերից մեկի՝ Հայնեարտբանկի, բաժնետոմսերի ձեռքբերում

2007

1ին միաձուլման գործարքը ՀՀ բանկային համակարգում՝ Ամերիաբանկի և Կասկադ Բանկի միջև կնքվեց միաձուլման պայմանագիր


2010

30 մլն ԱՄՆ դոլարի ներդրում կապիտալում ՎՋԵԲի կողմից¹
50 մլն ԱՄՆ դոլարի ստորադաս փոխառություն ՄՖԿից
1-ին հրապարակված միջազգային վարկանիշը՝ Fitch B+՝ «կայուն» հեռանկարով

2015

Ակտիվները կազմեցին ավելի քան 6 միլիարդ ԱՄՆ դոլար
S&Pի BB- վարկանիշ՝ «կայուն» հեռանկարով և Moody's-ի Ba3 վարկանիշ՝ «կայուն» հեռանկարով
Ամենախոշոր վարկատուն Հայաստանում
Ամերիաբանկը միացավ Lion Finance Group PLC³

2021-2025



2000-2006
Ամերիան դարձավ ընկերությունների ԽՈՒՄԲ՝ գործունեության նոր ուղղություններով՝ իրավաբանական և հարկային խորհրդատվություն, բիզնես խորհրդատվություն, ներդրումաբանկային գործառնություններ, ակտիվների կառավարում

2008-2009
Բանկը վերանվանվել է Ամերիաբանկ։ Աննախադեպ աճ համաշխարհային ճգնաժամի պայմաններում

2011-2014
Ամերիաբանկը դարձավ Հայաստանի առաջատար բանկը
Ընդունվեց ռազմավարական որոշում՝ դառնալ ունիվերսալ բանկ՝ էապես ընդլայնելով մանրածախ գործառնությունները


2017-2020
ՀՀ բանկային համակարգի բացարձակ առաջատարն ըստ հիմնական ֆինանսական ցուցանիշների
30 մլն ԱՄՆ դոլարի ներդրում կապիտալում Ասիական զարգացման բանկի կողմից (2018թ. սկզբում)²
Կանաչ պարտատոմսերի առաջին թողարկողը Հայաստանում

¹ Խոշորագույն գործարքը ֆինանսական կազմակերպության հետ Հայաստանում
² Ասիական զարգացման բանկի առաջին բաժնային ներդրումը Հայաստանում
³ Նախկինում՝ "Bank of Georgia Group PLC" («Բենք օֆ Զորջիա Գրուպ ֓իլԷՄԻ»)

Միջազգային գործընկերներ

Ամերիաբանկի գործընկեր հանդիսացող միջազգային ֆինանսական ֆինանսական հաստատությունները և կնքված պայմանագրերի հանրագումարը համագործակցության մեկնարկից ի վեր

Բոլոր գումարները ներկայացված են ԱՄՆ դոլարով





ՀԱՄԱՄԱՏՏԱԿՈՒՆ
ԵՎ ԻՄԱՆ

ՀԱՄԱՄԱՏՏԱԿՈՒՆ
ՊՈՒՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱՆՈՒՄ

ՀԱՄԱՄԱՏՏԱԿՈՒՆ
ՊՈՒՆԵՐԱԿԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՆԵՐ

ՆԱԴԻՐ ՀԱՄԱՄԱՏՏԱԿՈՒՆ
ՊՈՒՆԵՐԱԿԱՆ ՓՈՏՊՈՒՄ

ՊՈՒՆԵՐԱԿԱՆ


Արտաքին միջավայր

Մակրոտնտեսական նախադրյալներ

Հայաստանի տնտեսությունը 2025թ. աճել է 7.2%-ով էապես գերազանցելով կանխատեսումները, ինչը վկայում է ակնկալվող մակարդակից բարձր շարունակական ընդլայնման մասին, թեև առկա են Նշաններ, որ աճի տեմպը տատանողական է և մեծապես կախված է ոլորտային և ցիկլիկ շարժառիթներից, ոչ թե լայնածավալ կառուցվածքային ձեռքբերումներից:

Հայաստանում 2025թ. տեղի ունեցած աճը կրկին խիստ կենտրոնացած է եղել ներքին ոլորտներում: Աճի զգալի մասնաբաժինը գրանցվել է ֆինանսական, ՏՀՏ, շինարարական և անշարժ գույքի ոլորտներում, մինչդեռ արդյունաբերության տեմպերը տարեկան կտրվածքով վերականգնվում էին աստիճանաբար՝ չնայած տարեվերջին տեղի ունեցած կտրուկ աճին:

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)




Շինարարության ոլորտի տարեկան աճը կազմել է 21%՝ ապահովելով ոլորտային ամենախոշոր ներդրումը մոտ 1.5 տոկոսային կետ ՀՆԱ-ի աճի ընդհանուր ցուցանիշի կազմում: Ոլորտի ակտիվությունը պայմանավորված է եղել հանրային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերով և մասնավոր անշարժ գույքի կառուցապատմամբ:

Ֆինանսական ոլորտում գրանցվել է 14.7% տարեկան աճ, որը կազմել է ՀՆԱ-ի ընդհանուր աճի 1.3 տոկոսային կետ: Ընդլայնումը պայմանավորված էր հաշվեկշռի կայուն դինամիկայով. վարկավորումը տարեկան կտրվածքով աճել է մոտ 23%-ով, այդ թվում ավանդների ծավալի կայուն աճի շնորհիվ (15%-ից բարձր): Չափավոր գնաճը (մոտ 3-4%) և ընդհանուր առմամբ չեզոք դրամավարկային քաղաքականությունը նպաստել են իրական եկամտի դրական աճի և վարկային միջոցների նկատմամբ պահանջարկի պահպանմանը:

ՏՀՏ ոլորտի տարեկան աճը կազմել է 18.6%՝ նպաստելով ՀՆԱ-ի ընդհանուր աճին մոտ 1.0 տոկոսային կետով, ինչը վկայում է այն մասին, որ տվյալ ոլորտը շարունակում է լինել Հայաստանի առավել արդյունավետ ոլորտներից մեկը:

Արդյունաբերության ոլորտում ողջ 2025թ. ընթացքում գրանցվել են խիստ անկայուն արդյունքներ: Այնուամենայնիվ, տարեվերջին ոլորտում տեղի ունեցած կտրուկ աճ, ինչի հետևանքով տարեկան իրական աճը կազմել է 4.2%: Առևտրի ոլորտում տեղի է ունենում անցում բացառիկ, վերարտադրման պայմանավորված ընդլայնումից դեպի ավելի ներքին բնույթ ունեցող աճ, ինչը նվազեցնում է անկայունությունը, սակայն միաժամանակ սահմանափակում է ընդհանուր աճի տեմպերը:

ՀՆԱ-ի աճն ըստ աճին նպաստող ոլորտների



2025թ. 7.2% իրական ՀՆԱ-ի աճ գրանցելուց հետո, կանխատեսվում է, որ 2026թ. Հայաստանում այդ ցուցանիշը փոքրինչ կնվազի՝ կազմելով մոտ 5-6%: Տնտեսությունն անցում է կատարում այլ երկրներից Հայաստան տեղափոխված մարդկանց ներհոսքով և վերարտադրման ակտիվությամբ պայմանավորված միջինից բարձր ընդլայնման տեմպերից դեպի ավելի ներքին բնույթի, հավասարակշռված կառուցվածքով աճ:

2025թ. գնաճը կրկին հայտնվեց Կենտրոնական բանկի թիրախային միջակայքում՝ 2024թ. գրանցված բացառիկ ցածր մակարդակից հետո: 2025թ. դեկտեմբերին ինչպես ընդհանուր, այնպես էլ միջին տարեկան գնաճը կազմել է մոտ 3.3%: Այս համընկնումը վկայում է գների դինամիկայի կարգավորման մասին, որը հեռանում է նախորդ տարվա ընթացքում դիտարկված գրեթե գոյական գնաճի մակարդակից: Դեկտեմբերի դրությամբ հիմնական գնաճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է կազմելով 4.3%, ինչը վկայում է ոչ առևտրային բնույթի, ծառայությունների հետ կապված բաղադրիչներում գնային ավելի մեծ ճնշումների մասին: Միևնույն ժամանակ, անվանական աշխատավարձի աճը տարեվերջին մեծացել է՝ դեկտեմբերին հասնելով տարեկան 6.5%-ի, ինչը նպաստել է իրական եկամտի դրական աճին:


2025թ. գնաճային միջավայրն արտացոլեց ներքին պահանջարկի աստիճանական վերականգնումը, ծառայությունների ոլորտում ակտիվության աճը և ներմուծվող ապրանքների գծով ավելի վաղ գրանցված դեֆլյացիոն երևույթների նվազումը: Գնաճը հիմնականում պայմանավորված էր պարենային ապրանքների և ծառայությունների գների բարձրացմամբ, թեև տրանսպորտի, կրթության և ծխախոտի գները նույնպես աճել են: Շնորհիվ գնաճի

գազման և ավելի հավասարակշռված մակրոտնտեսական միջավայրի, ՀՀ Կենտրոնական բանկը 2025թ. ընթացքում իջեցրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը գումարային 50 բազիսային կետով, և տարեվերջին այն կազմեց 6.5%: Վկայելով դրամավարկային քաղաքականության զգուշավոր մեղմացման մասին՝ միաժամանակ հաշվի առնելով գնաճի հիմքում ընկած ռիսկերը:

2025թ. Հայաստանի արժույթային քաղաքականության վրա կրկին իրենց ազդեցությունն են ունեցել արտաքին և տարածաշրջանային մակրոտնտեսական զարգացումները, ինչպես նաև ներքին տնտեսական պայմանները: ՀՀ Կենտրոնական բանկը շարունակեց սահմանափակ միջամտության իր քաղաքականությունը՝ թույլ տալով, որ փոխարժեքը շտկվի՝ ի պատասխան շուկայի պայմանների, պահպանելով ֆինանսական կայունությունը: Ամբողջ տարվա ընթացքում դրամը համեմատաբար կայուն է մնացել ԱՄՆ դոլարի նկատմամբ, չնայած արտաքին առևտրի և կապիտալի հոսքերի զգալի անկայունությանը: ՀՀ դրամը/ԱՄՆ դոլարը միջին փոխարժեքը 2025թ. կազմել է մոտ 382 ՀՀ դրամ մեկ դոլարի դիմաց՝ գրանցելով դրամի չնչին արժևորում 2024թ. համեմատ: Այլ հիմնական արժույթների նկատմամբ դրամը փոքրինչ արժեզրկվել է՝ տարվա ընթացքում նվազելով 2.7%-ով Եվրոյի նկատմամբ և 8.6%-ով ռուսական ռուբլու նկատմամբ: Նշված փոփոխությունները հիմնականում պայմանավորված են եղել միջարժույթային դինամիկայով, ոչ թե Հայաստանի ներքին խնդիրներով: Ընդհանուր առմամբ, դրամը շարունակում է մնալ տարածաշրջանի ամենակայուն արժույթներից մեկը, ինչին նպաստում է արտարժույթի մեծ ներհոսքը, խելամիտ դրամավարկային քաղաքականությունը և արտարժույթային պահուստի կայուն դիրքը:


Ամենակայուն արժույթը տարածաշրջանում

(ԱՄՆ դոլարի նկատմամբ տարածաշրջանի այլ արժույթների փոխարժեքների դինամիկա)**



Արտաքին առևտուր

մլն. ԱՄՆ դոլար



	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024	2025
Միջին տարեկան	480.5	482.7	483.0	480.4	489.0	503.7	435.7	392.4	392.7	387.1
Տարեվերջի դրությամբ	483.9	484.1	483.8	479.7	522.6	480.1	393.6	404.8	396.6	381.4
ՍԳԻ, % (դեկտեմբերից մինչև նախորդ տարվա դեկտեմբեր)	-1.1	2.6	1.8	0.7	3.7	7.7	8.3	0.6	1.5	3.3
ՍԳԻ, % (12-ամսյա կուտակային)	-1.4	1.0	2.5	1.4	1.2	7.2	8.6	2.0	0.3	3.3

2025թ. Հայաստանի արտաքին առևտրի ծավալը կտրուկ նվազեց՝ 2024թ. գրանցված բացառիկ մեծ ծավալի համեմատ: Ընդհանուր ապրանքաշրջանառությունը տարեկան կտրվածքով զգալիորեն նվազել է՝ պայմանավորված 2024թ. գրանցված և աճի բարձր տեմպերին նպաստած թանկար

ժեք մետաղների վերաարտահանման բարձր ծավալի նվազմամբ: Արտահանման ծավալը տարեկան կտրվածքով նվազել է 35.9%-ով, իսկ ներմուծման ծավալը՝ 23.6%-ով, ինչը վերադարձրել է ընդհանուր առևտրային ակտիվությունն ավելի կայուն մակարդակի:

2025թ. կապիտալի ներհոսքի կայուն մակարդակը պահպանվել է՝ նպաստելով դրամական փոխանցումների ներհոսքի շարունակական աճին: Ջուտ դրամական փոխանցումները տարեկան կտրվածքով աճել են 2.4%-ով՝ հասնելով 5.98 միլիարդ ԱՄՆ դոլարի, ինչը վկայում է հիմնական գործընկեր երկրներից կայուն ներհոսքի մասին՝ չնայած տարեվերջին գրանցված ամսական անկայունությանը:

2025թ. վերջին Հայաստանի ընդհանուր պետական պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ նվազել է 2024թ. գրանցված 50.0% համեմատ՝ կազմելով 49.0%, ինչը պայմանավորված է եղել անվանական ՀՆԱի կայուն աճով: Ընդհանուր պետական պարտքը կազմել է 14.5 մլրդ. ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 8.8%-ով: Պետական պարտքի կառուցվածքում կառավարության պարտքը կազմել է 14.0 մլրդ. ԱՄՆ դոլար՝ կախված մնալով ներքին ֆինանսավորումից: Ներքին պետական պարտքը չափավոր աճել է, միևնույն ժամանակ արտաքին պարտքի աճը մնացել է չնչին՝ նպաստելով պարտքի ընդունելի մակարդակի ցուցանիշների բարելավմանը:

Պաշտոնական արտարժույթային պահուստները զգալիորեն աճել են՝ տարեվերջին կազմելով 5.09 մլրդ. ԱՄՆ դոլար՝ ամրապնդելով Հայաստանի արտաքին բուժերը և նպաստելով փոխարժեքների կայունությանը:

2025թ. Հայաստանի սուվերեն պրոֆիլն ընդհանուր առմամբ մնացել է կայուն, և առավել հայտնի վարկանիշային գործակալությունները վերահաստատել են երկրի վարկանիշները: Fitch գործակալությունը վերահաստատել է Հայաստանի երկարաժամանակ արտարժույթով թողարկողի դեֆոլտի վարկանիշը (IDR) BB- մակարդակում կայուն կանխատեսմամբ, ինչն արտացոլում է կայուն աճի ցուցանիշները, բարելավված հարկաբյուջետային ցուցանիշները և ամրապնդված արտարժույթային պահուստի դիրքը:

2025 թվականի հունիսի 26-ին Moody's վարկանիշային գործակալությունը վերահաստատեց Հայաստանի վարկանիշը «Ba3» մակարդակում՝ «կայուն» հեռանկարով: Նմանապես, S&P Global Ratings վարկանիշային գործակալությունը վերահաստատել է երկարաժամանակ և կարճաժամանակ սուվերեն «BB-»/«B» վարկանիշը՝ կայուն կանխատեսմամբ, ինչը վկայում է Հայաստանում աճի կայուն դինամիկայի և չափավոր պարտքի բեռի մասին: Կայուն հեռանկարն արտացոլում է կայուն տնտեսական ցուցանիշների և արտաքին միջավայրի գործոնների, այդ թվում՝ առևտրի կարգավորման միջոցառումների և տարածաշրջանային աշխարհաքաղաքական անորոշությունների, նկատմամբ պահպանվող զգայունության միջև հավասարակշռությունը:

**Փոխարժեքի օրական փոփոխությունը՝ որպես հիմք ընդունելով 2014թ. հունվար ամիսը: Աղբյուր՝ Բլումբերգ

ՀՀ բանկային համակարգը

2025թ. Հայաստանի բանկային համակարգը պահպանեց կայունությունն ու շահութաբերության բարձր մակարդակը՝ շնորհիվ հաշվեկշռի շարունակական ընդլայնման և դեռևս կայուն մակրոտնտեսական պայմանների, միևնույն ժամանակ գործելով ռիսկերի հանդեպ ավելի զգայուն միջավայրում, որը ձևավորվել է վարկավորման ծավալների սրընթաց աճի և արտաքին անորոշության պայմաններում: 2022 թ. գրանցված բացառիկ ներհոսքից հետո 2025թ. ընթացքում շարունակվեց համակարգի կարգավորումը, և աճն աստիճանաբար կենտրոնացավ հիմնական բանկային ծառայությունների հատվածում:

Բանկային համակարգի զուտ շահույթը 2025թ. կազմել է ընդամենը մոտ 421.3 միլիարդ դրամ, ինչը մոտ 17%-ով բարձր է 2024թ. գրանցված ցուցանիշից և արտացոլում է եկամտի շարունակական աճն ու ընդհանուր բարձր շահութաբերությունը բոլոր կազմակերպություններում: Համակարգի բոլոր բանկերը տարին ամփոփել են դրական արդյունքներով: Ծահույթի բաշխումը վկայում է ոլորտի առավել խոշոր ներկայացուցիչների կողմից գրանցված աճի մասին: Ծահութաբերության աճը պայմանավորված էր զուտ տոկոսային եկամտի և ընդհանուր վարկային գործունեության զգալի աճով: 2025թ. ընթացքում բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 22.7%-ով կազմելով գրեթե 7.7 տրլն. ՀՀ դրամ: Հիփոթեքային վարկա-

վորման աճը նախորդ տարիներին դիտարկված բացառիկ բարձր ծավալների համեմատ դանդաղել է: Հիփոթեքային վարկավորման ծավալները 2025թ. աճել են մոտ 12%-ով՝ հասնելով գրեթե 1.7 տրլն. ՀՀ դրամի:

Զարգացող շուկայի պայմաններում բանկերը շարունակել են առաջնահերթություն տալ նորարարությանը, թվայնացմանը և հաճախորդների բազայի ընդլայնմանը: Ծառայությունների դիվերսիֆիկացումը և առաջադեմ տեխնոլոգիաների ներդրումը կրկին հիմնական ռազմավարական ուղղություններն են եղել:

Իրացվելիության և կապիտալի դիրքերի կայունությունը պահպանվեց, ինչը թույլ տվեց բանկերին կատարել իրենց պարտավորությունները և բավարարել վարկային միջոցների նկատմամբ աճող պահանջարկը: Բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճել է մոտ 23%-ով, և բանկերի մեծ մասը պահպանել է կապիտալի համարժեքության դրական ցուցանիշները: Համակարգի կայունությանը նպաստել են իրացվելիության պահպանվող բարձր ցուցանիշները և գործառնական եկամտի աճը:

Հայաստանում գործող ֆինանսական հաստատությունների թիվը վարկային կազմակերպությունների և բանկերի մասով մնացել է անփոփոխ, մինչդեռ հիմնադրամների և ներդրումային ընկերությունների թիվն ավելացել է 14-ով:

ՀՀ-ում գործող ֆինանսական հաստատություններ	2021	2022	2023	2024	2025
Բանկեր	17	18	18	18	17
Վարկային կազմակերպություններ	46	42	41	43	43
Ապահովագրական ընկերություններ	7	7	8	8	8
Հիմադրամեր և ներդրումային կազմակերպություններ	53	67	95	120	134

Բանկային համակարգը շարունակել է առանցքային դերիստացումը Հայաստանի ֆինանսական համակարգում: Բանկերին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 84%-ը: Հայաստանում գործող բոլոր 17 բանկերն ու ամենամեծ վարկային կազմակերպություններից մի քանիսը

կրկին եղել են 1000 խոշոր հարկատուների ցանկում: Դա վկայում է պետական եկամուտներում բանկային համակարգի էական ներդրումների և տնտեսության զարգացմանը նպաստող մեծ դերի մասին:

Կայուն բանկային համակարգ և զարգացող ֆինանսական միջավայր

2025թ. Հայաստանի բանկային համակարգը եղել է կայուն և բավարար կապիտալացված: Բանկերն ամրապնդել են իրենց իրացվելիության դիրքերը և շարունակել են բավարարել ՀՀ ԿԲԻ կողմից սահմանված նորմատիվային պահանջները՝ ապահովելով դիմադրողականություն արտաքին ցնցումների հանդեպ:

Կարգավորմանն ուղղված վերջին ցուցանիշները վերահաստատում են ոլորտի կայունությունը և ֆինանսական առողջությունը:

Ընդհանուր կապիտալի համարժեքության գործակիցը (Ն1/2) կազմել է 20.8%, ինչը զգալիորեն գերազանցում է կարգավորող մարմնի կողմից սահմանված նվազագույն՝ 16.75% ցուցանիշը (ներառյալ՝ Բազել III-ի շրջանակներում սահմանված կապիտալի բուֆերները):

Ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը առաջին մակարդակի կապիտալին (Ն1/1) հասել է 18%-ի՝ գերազանցելով 14.05%-ի շեմը (ներառյալ՝ Բազել III-ի շրջանակներում սահմանված բուֆերները):

Իրացվելիության ցուցանիշները նույնպես կայուն են մնացել, բարձր իրացվելի ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր ակտիվներին (Ն2/1 նորմատիվ) կազմել է 29.0%, բարձր իրացվելի ակտիվների հարաբերակցությունը ցայահանջ պարտավորություններին (Ն2/2 նորմատիվ)՝ 95.9%: Երկու ցուցանիշն էլ գերազանցել են պահանջվող սահմանված նվազագույն չափը, որը կազմում է համապատասխանաբար 15% և 60%:

«Fitch Ratings» գործակալության կանխատեսումների համաձայն վարկային ցուցանիշները կմնան պատմական ցուցանիշներից բարձր մակարդակի վրա, ինչին կնպաստեն կապիտալի կայուն ներքին ձևավորումը և բարձր եկամուտները:

Հայաստանի կարգավորող դաշտը շարունակում է գործել Բազել III-ով սահմանված նորմատիվային պահանջներին համապատասխան և համարվում է համեմատաբար խիստ տարածաշրջանի բազմաթիվ այլ երկրների հետ համեմատ, մասնավորապես՝ կապիտալի համարժեքության և իրացվելիության կառավարման մասով:

Վերջին 10 տարում ֆինանսական միջնորդության ցուցանիշը Հայաստանում զգալիորեն բարձրացել է: Կանխատեսումների համաձայն վարկեր/ՅՆԱ հարաբերակցությունը 2025թ. վերջում կազմելու է մոտ 68%, մինչդեռ 10 տարի առաջ այն կազմում էր 42.3%, իսկ 2000թ.՝ ընդամենը 9.6%: Նմանատիպ միտում է նկատվում նաև ակտիվների հարաբերակցությունը ՅՆԱին ցուցանիշի մասով, որը, կանխատեսումների համաձայն, 2025թ. կկազմի մոտ 113% մինչդեռ 2014թ. այն կազմում էր 70.3%, իսկ 2000թ.՝ 22.8%, ինչը վկայում է ընդհանուր տնտեսության նկատմամբ բանկային համակարգի կառուցվածքային ընդլայնման մասին:

Դոլարիզացիայի միտումների աստիճանական նվազումը պահպանվել է, ինչը վկայում է տեղական արժույթի նկատմամբ վստահության աճի և մակրոֆինանսական կայունության ամրապնդման մասին: 2025թ. վերջի դրությամբ դոլարային ավանդների մասնաբաժինը կրկին նվազել է նախորդ տարիներին դիտարկված ավելի բարձր մակարդակների համեմատ՝ կազմելով մոտ 40.5%: Ակտիվների մասով վարկային դոլարիզացիան գրանցել է աննշան աճ՝ տարեվերջին կազմելով մոտ 31.7%, 2024թ. գրանցված 30.9%-ի համեմատ: Ընդհանուր առմամբ, միջնաժամետում պահպանվում է նվազման միտում, ինչը նպաստում է փոխարժեքներից առաջացող վարկային ռիսկի նվազմանը և դրամավարկային քաղաքականության բարելավմանը:

Բանկային համակարգի թվային փոխակերպումը շարունակեց արագանալ 2025թ. ընթացքում՝ պայմանավորված բջջային և առցանց բանկային ծառայությունների ընդլայնմամբ, անկանխիկ և էլեկտրոնային վճարումների ծավալի աճով, ինչպես նաև ավելի խորացված ֆինտեխ ինտեգրմամբ, որոնք վերափոխում են


հաճախորդների ներգրավման գործընթացը և գործառնական մոդելները: Միևնույն ժամանակ, ՀՀ Կենտրոնական բանկը շարունակեց իր կարգավորող և վերահսկողական համակարգերի կատարելագործումը, մասնավորապես՝ կիբերանվտանգության, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և գործառնական կայունության ոլորտներում՝ ապահովելու համար նորարարության տարածումն առանց ֆինանսական կայունությունը վտանգելու:

2025թ. ակտիվների և պարտավորությունների կայուն աճ


Վերջին տարիներին գրանցված արտասովոր կապիտալի ներհոսքերին հաջորդած շարունակական կարգավորման ֆունդին, 2025թ. Հայաստանի բանկային համակարգը պահպանել է հաշվեկշռային կայուն դինամիկան և բարձր ֆինանսական արդյունքները: Ընդհանուր սեփական կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է 22.6%:

ով կազմելով 2,175 մլրդ ՀՀ դրամ: Այս աճի գլխավոր խթանը կապիտալի կայուն ներքին ձևավորումն էր, որի պայմաններում չբաշխված շահույթն ավելացել է 198 մլրդ ՀՀ դրամով, ինչպես նաև բաժնետիրական կապիտալի էական աճը 158 մլրդ ՀՀ դրամով:


Ակտիվներ, մլրդ ՀՀ դրամ*




Վարկեր, մլրդ ՀՀ դրամ*



Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ / ներառյալ բանկերի թողարկած արժեթղթերը/, մլրդ ՀՀ դրամ*



Սեփական կապիտալ, մլրդ ՀՀ դրամ*



Նախորդ տարվա համեմատ բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն աճել են 16.6%-ով՝ կազմելով 12.8 տրլն. ՀՀ դրամ, ընդ որում զուտ վարկային պորտֆելը ավելացել է մինչև 7.7 տրլն. դրամ՝ գրանցելով տպավորիչ աճ 22.7%-ով: Արդյունքում ֆինանսական միջնորդությունն էլ ավելի է խորացել, ակտիվների և ՀՆԱի կանխատեսվող հարաբերակցությունը կազմել է 113%, իսկ վարկերի և ՀՆԱի հարաբերակցությունը տարեվերջին հասել է 68%-ի: Հաճախորդների պարտավորություններն աճել են 13%-ով՝ կազմելով 7.9 տրլն. ՀՀ դրամ, ինչը նպաստում է վարկավորման ծավալների շարունակական ընդլայնմանը և արտացոլում է բանկային համակարգի նկատմամբ կայուն վստահությունը:

գույությունը կազմել է 113%, իսկ վարկերի և ՀՆԱի հարաբերակցությունը տարեվերջին հասել է 68%-ի: Հաճախորդների պարտավորություններն աճել են 13%-ով՝ կազմելով 7.9 տրլն. ՀՀ դրամ, ինչը նպաստում է վարկավորման ծավալների շարունակական ընդլայնմանը և արտացոլում է բանկային համակարգի նկատմամբ կայուն վստահությունը:


* Աղբյուր՝ բանկերի 2024թ. 4-րդ եռամսյակի հաշվետվությունները, է նախորդ տվյալները՝ թարմացված ըստ աուդիտորական հաշվետվությունների

Միջինը բարձր շահութաբերություն

2025թ. Հայաստանի բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 421.3 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 16.8%-ով: Համակարգի բոլոր բանկերը տարին ամփոփել են դրական արդյունքներով: Շահույթի բաշխումը վկայում է ոլորտի առավել խոշոր ներկայացուցիչների

կողմից գրանցված աճի մասին: Նշված բարձր կատարողականը հիմնականում պայմանավորված է զուտ տոկոսային եկամտի կայուն աճով: Նշված ժամանակահատվածում զուտ տոկոսային եկամտն աճել է 24%-ով:

Շահույթ*, մլրդ ՀՀ դրամ




Հայաստանի բանկային համակարգի որակական ցուցանիշները*


Պատմականորեն ՀՀ բանկային համակարգի խնդրահարույց վարկերի ցուցանիշը եղել է 4-5% սահմաններում, ինչը վկայում է վարկային պորտֆելի բարձր որակի մասին: Չնայած համաճարակի ժամանակ գրանցված ժամանակավոր վատթարացման՝ 2021թ. ի վեր պորտֆելի որակը զգալիորեն բարելավվել է: 2025թ. խնդրահարույց վարկերի ցուցանիշը մնում է ցածր մակարդակում, ինչը վկայում է ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգերի առկայության և մակրոտնտեսական ցնցումների նկատմամբ համակարգի ընդհանուր դիմադրողականության մասին:

բարելավվել է: 2025թ. խնդրահարույց վարկերի ցուցանիշը մնում է ցածր մակարդակում, ինչը վկայում է ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգերի առկայության և մակրոտնտեսական ցնցումների նկատմամբ համակարգի ընդհանուր դիմադրողականության մասին:


Խնդրահարույց վարկեր




Կապիտալի եկամտաբերություն



Ակտիվների եկամտաբերություն



Չուտ տոկոսային մարժա



* Հաշվարկվել է ըստ բանկերի հաշվետվություններում ներկայացված տվյալների

Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում

2025թ. Ամերիաբանկը պահպանել է աճի բարձր տեմպերը ամրապնդելով իր առաջատար դիրքը որպես ամենախոշոր վարկատուն Հայաստանում, պահպանելով մոտ 22% շուկայի մասնաբաժին և պատշաճ կերպով դիվերսիֆիկացված մանրածախ/ՓՄՁ պորտֆել:


2025թ. մեր ռազմավարությունն առաջնահերթ ուղղված էր ծավալուն թվային փոխակերպմանը և հաշվեկշռի կայուն աճին, միաժամանակ ամրապնդելով համապատասխանությունը սահմանված պահանջներին և ռիսկերի կառավարումը: Այս մոտեցումը համահունչ է կարգավորող մարմնի՝ համակարգային դիմադրողականության վրա շարունակական շեշտադրմանը (ներառյալ հակացիկլիկ կապիտալի բուֆերի ակտիվացումը, որը ուժի մեջ է 2025թ.-ից) և նպաստում է երկարաժամանակ կայուն արժեքի ստեղծմանը:

2025թ. Բանկը կրկին ապահովել է գերազանց արժեք բաժնետերերի համար՝ չորրորդ տարին անընդմեջ գերազանցելով իր միջնաժամետ ռազմավարական նպատակները և զգալիորեն առաջ անցնելով միջին շուկայական ցուցանիշներից: Չուտշահույթը նախորդ տարվանույն ժամանակահատվածի համեմատ աճել է 21.0%-ով՝ հասնելով 72.6 մլրդ ՀՀ դրամի, ինչը վկայում է եկամուտների կայուն աճի և ծախսերի խելամուտ կառավարման մասին: Կապիտալի եկամտաբերությունը կազմել է 25.0%, ինչը զգալիորեն բարձր է բանկային համակարգի միջին ցուցանիշից (21.4%) :

Բանկի բարձր եկամտաբերությունը մեծապես պայմանավորված էր եկամտի հիմնական հոսքերի կայուն աճով: Չուտ տոկոսային եկամուտը տարեկան կտրվածքով աճել է 27.1%-ով՝ գերազանցելով համակարգում գրանցված աճի միջին ցուցանիշը (23.8%)՝ արտացոլելով արդյունավետ հաշվեկշռի ընդլայնումը և մարժայի կառավարումը: Միջնորդավարներից ստացված զուտ եկամուտը նույնպես ցուցաբերել է կայուն դինամիկա՝ տարեկան աճելով 21.8%-ով և զգալիորեն գերազանցելով շուկայական միջին ցուցանիշը (9.8%):

Եկամտի աճին նպաստել է նաև ակտիվների բարձր որակը և ռիսկերի խելամուտ կառավարումը: Տարեվերջին 1-ին մակարդակի և ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 14.4%

2-րդն ըստ ակտիվների. 12.5% միջին տարեկան աճ 10 տարվա ընթացքում




և 17.0%՝ ապահովելով բավարար բուֆերներ կարգավորող մարմնի կողմից սահմանված պահանջների կատարման իմաստով: Գործառնական արդյունավետությունը շարունակել է մնալ ուշադրության կենտրոնում, ինչի մասին վկայում է ծախսերի և եկամուտների հարաբերակցությունը, որը կազմել է 39.0%, մինչդեռ մեր զուտ տոկոսային մարժան հասել է 7.0%-ի՝ ապահովելով բարձր շահութաբերություն: Բացի այդ, պահուստավորման պահպանողական ռազմավարության շնորհիվ մենք գրանցել ենք վարկային ռիսկի շատ ցածր արժեք՝ 0.2%, ինչը նպաստում է կայուն և կանխատեսելի եկամուտների ապահովմանը:


Մենք պահպանել ենք հիմնական ֆինանսական ցուցանիշների գծով առաջատար մեր դիրքերը՝ շուկայում զբաղեցնելով առաջին տեղը վարկային պորտֆելի գծով և երկրորդ տեղը զուտ շահույթի, ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի և հաճախորդների պարտավորությունների գծով: Բացի այդ, մենք ձևավորել ենք կապիտալի զգալի պահուստներ՝ հաջողությամբ ապահովելով համապատասխանությունը Բազել III-ի շրջանակներում բարձրացված կապիտալի պահանջներին:

Ամերիաբանկի զուտ ընդհանուր վարկային պորտֆելը տարեկան կտրվածքով աճել է 28%-ով՝ զգալիորեն գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ռազմավարական ուղղվածության ոլորտներում մեր ՓՄՁ վարկային պորտֆելն ավելացել է 24%-ով՝ կազմելով 335 մլրդ ՀՀ դրամ, ինչը վկայում է բիզնես վարկավորման հատվածում մեր ամուր դիրքի մասին: Մանրածախ վարկային պորտֆելը 2025թ. վերջի դրությամբ կազմել է 762 մլրդ ՀՀ դրամ, պահպանելով տասը տարվա կտրվածքով բարձր միջին տարեկան աճ (CAGR), որը կազմել է 31.9%: Հիփոթեքային շուկայում, որտեղ Ամերիաբանկը արդեն բավականին երկար ժամանակ պահպանում է առաջատար դիրքը, մեր մասնաբաժինը կազմել է 23.1%: Հիփոթեքային վարկերի պորտֆելը նախորդ տարվա համեմատ աճել է 13%-ով՝ կազմելով 393 մլրդ ՀՀ դրամ, չնայած 2024թ. գրանցված բարձր բազային տվյալներին՝ ապահովելով տասը տարվա կտրվածքով տպավորիչ միջին տարեկան աճ, որը կազմել է 36.6%:


1-ին ըստ վարկային պորտֆելի. 12.5% միջին տարեկան աճ 10 տարվա ընթացքում (մլրդ ՀՀ դրամ)



2-րդն ըստ կապիտալի. 18.1% միջին տարեկան աճ 10 տարվա ընթացքում (մլրդ ՀՀ դրամ)




2-րդն ըստ պարտավորությունների. 11.8% միջին տարեկան աճ 10 տարվա ընթացքում (մլրդ ՀՀ դրամ)




Մանրածախ բանկային գործառնություններ


2-րդն ըստ շահույթի. 27.9% միջին տարեկան աճ 10 տարվա ընթացքում (մլն ՀՀ դրամ)



Կապիտալի եկամտաբերության դինամիկա՝ Բանկային համակարգ և Ամերիաբանկ



Ակտիվների եկամտաբերության դինամիկա՝ Բանկային համակարգ և Ամերիաբանկ



2025թ. հիմնական ցուցանիշները


44.9%

Համախառն մանրածախ վարկերի և փոխառությունների մասնաբաժինն ընդհանուր վարկային պորտֆելում

57.0%

Մանրածախ ավանդների և պարտատոմսերի մասնաբաժինն ընդհանուր պորտֆելում

Գործառնական շահույթ նախքան վարկային կորուստների գծով ծախսերը, մլրդ ՀՀ դրամ



Ընդհանուր ակնարկ

2025թ. մանրածախ բանկային գործառնությունների ուղղությունը շարունակեց զարգանալ՝ հիմնական շեշտը դնելով հաճախորդամտության, սպասարկման որակի և թվային փոխակերպման վրա: Բանկն իրականացրեց նախաձեռնություններ՝ ուղղված հաճախորդների փորձառության և ներգրավվածության բարելավմանը, հաճախորդների պահպանման մակարդակի և գործառնական արդյունավետության բարձրացմանը՝ միաժամանակ պահպանելով համապատասխանության ապահովման և ռիսկերի կառա-

վարման բարձր չափանիշները: Այդ ամենի շնորհիվ Բանկը գրանցում է հաճախորդների բավարարվածության ցուցանիշների շարունակական բարելավումներ: 2025թ. հաճախորդների փորձառության գործակիցը (CEI) կազմել է 9.8, իսկ հաճախորդների հավատարմության գործակիցը (NPS)՝ 79.7%: Թվային հնարավորությունների և տվյալաիտեն մոտեցումների գծով շարունակական ներդրումները նպաստեցին հաճախորդների ավելի անխափան փորձառությանը և կայուն աճին մանրածախ բանկինգի բոլոր հատվածներում:

Հիմնական ձեռքբերումները

↑ 27.8%

Վարկային պորտֆել (տարեկան աճ)

↑ 20.2%

Ավանդներ (տարեկան աճ)

↑ 42.9%

Ամսական ակտիվ օգտատերերի թիվն ըստ մուտքի աճ դեկտ-դեկտ

91.9%

Կանխիկ գործառնությունների գծով բեռնաթափման ցուցանիշ


2025թ. հիմնական ձեռքբերումները.

- Բարելավվել է հաճախորդների թվային փորձառությունը. ստեղծվել և ընդլայնվել են Ամերիայի ինտեգրված հարթակներն ու էկոհամակարգերը (MyAmeria, MyCar, MyHome, MyEventHub, MyInvest, MyTour), ինչը հնարավորություն է տվել օգտատերերին հեշտույթային կառավարելի իրենց ֆինանսական, ապրելակերպի և առօրյա կարիքները միասնական, ամբողջական համակարգի շրջանակներում:
- Մանրածախ վարկային պորտֆելը 596.2 մլրդ ՀՀ դրամից աճել է մինչև 762.1 մլրդ ՀՀ դրամ՝ գրանցելով 27.8% տարեկան աճ, մինչդեռ վարկային արժեքի ռիսկը կազմել է 0.9%:
- Մանրածախ ավանդների բազան աճել է 725.8 մլրդ ՀՀ դրամից մինչև 872 մլրդ ՀՀ դրամ՝ տարեկան կտրվածքով գրանցելով շուրջ 20.2% աճ:
- Ապահովվել է հաճախորդներին ներգրավման, հաճախորդների ընդհանուր բազայի և թվային ուղիներով ներգրավման կայուն աճ, ինչը վկայում է մեր հաճախորդամետ ռազմավարության և թվային փոխակերպման շարունակական նախաձեռնությունների արդյունավետության մասին: Հաճախորդների բազան աճել է՝ գրանցելով 33% տարեկան աճ, իսկ ակտիվ օգտատերերի թիվն ըստ մուտքի և գործարքների տարեկան կտրվածքով (դեկտ-դեկտ) աճել է համապատասխանաբար 42.9%-ով և 51.3%-ով՝ արտացոլելով մեր թվային հարթակների օգտագործման և հաճախորդների ակտիվության աճը:

Մանրածախ վարկային պորտֆել


Մեր ընդհանուր մանրածախ վարկային պորտֆելը տարեկան կտրվածքով աճել է 27.8%-ով՝ շարունակելով կայուն աճը: Վերջին տարիներին մեր մանրածախ պորտֆելը աճում է

Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակիցը 2025թ. կազմեց 81.6%:




Էր կայուն տեմպերով. միջին տարեկան աճը 2020-2025թթ. կազմել է 26.8%: Արդյունքում մանրածախ վարկերի կշիռն ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 44.9%:


Ընդհանուր մանրածախ վարկային պորտֆել




Հիփոթեքային վարկեր



Բիզնես վարկեր



Սպառողական վարկեր




Մանրածախ ավանդներ


Մանրածախ ավանդային պորտֆելը մեր հաճախորդների հավատարմության գլխավոր ցուցանիշներից է: 2025թ. մանրածախ ավանդների և պարտատոմսերի ընդհանուր ծավալը ավելացել է 20.2%-ով՝ կազմելով 872.7 մլրդ ՀՀ դրամ:

Բանկը բարձր աճ է գրանցել մանրածախ թե՛ ցպահանջ, թե՛ ժամկետային ավանդների գծով՝ ամրապնդելով իրացվելիության ցուցանիշները:


Ցպահանջ ավանդներ



Ժամկետային ավանդներ



Ընդհանուր ավանդներ և պարտատոմսեր



Ենթաճյուղեր

Ամենօրյա բանկային գործառնություններ

Վճարային քարտեր և անկանխիկ գործառնությունների խթանում



2025թ. մենք շարունակեցինք անկանխիկ գործառնությունների խթանմանն ուղղված միջոցառումները: Թողարկված քարտերի թիվն աճել է 45.2%-ով: Աշխատավարձային քարտերը մեզ համար մնում էին առաջնահերթ պրոդուկտ, և մենք պահպանեցինք շուկայում առաջատար դիրքն աշխատավարձային քարտերով:

Ամերիաբանկը գրանցեց զգալի թվային և գործառնական առաջընթաց՝ ներդրելով գրեթե իրական ժամանակում իրականացվող մշակում քարտից քարտ (C2C) գործարքների համար, կրճատելով գործարքների հաշվառման համար պահանջվող ժամանակը 1 օրից մինչև ընդամենը մի քանի րոպե և հնարավորություն տալով հաճախորդներին գրեթե անմիջապես ստանալ և օգտագործել իրենց փոխանցված դրամական միջոցները: Միևնույն ժամանակ բանկը գործարկեց առանց թղթային փաստաթղթերի իրականացվող ամբողջապես թվային ապառիկ ֆինանսավորում, որը պարզեցնում է հաճախորդի և առևտրի կետի միջև ամբողջ գործընթացը, վերացնում է պայմանագրերի թղթային ներկայացման անհրաժեշտությունը և զգալիորեն կրճատում գործառնական ծանրաբեռնվածությունը և թղթային փաստաթղթերի արխիվացման պահանջները:

Մենք մեր ուշադրությունն ուղղեցինք անկանխիկ և էլեկտրոնային վճարումների խթանմանը՝ նպատակ ունենալով հասանելի լինել մեր հաճախորդների համար ցանկացած պահի, ցանկացած վայրում: Արդյունքում կանխիկ գործառնությունների գծով բեռնաթափման ցուցանիշը կազմել է 91.9%, իսկ մասնաճյուղերի բեռնաթափման ցուցանիշը՝ 99%: Մենք շուկայի առաջատարն էինք անկանխիկ գործարքների քանակով և ծավալով:

Քարտային գործառնություններ

Անկանխիկ քարտային գործառնություններ



Հաճախորդների սպասարկման և հաճախորդների բավարարվածության բարելավում

Հաճախորդների կարիքների ուսումնասիրության և շուկայի միտումների հիման վրա իրականացվել է մի շարք ռազմավարական նախաձեռնություններ ուղղված հաճախորդների փորձառության բարելավմանը, հաճախորդների պահպանման մակարդակի բարձրացմանը և ծառայությունների մատուցման պարզեցմանը:

- **Հավատարմության ծրագրի գործարկում ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար.** MyAmeria հավելվածում գործող հաճախորդների հավատարմության ծառայություն, որը հնարավորություն է տալիս հաճախորդներին վաստակել միավորներ Բանկի ֆիզիկական և առցանց տերմինալների միջոցով կատարված անկանխիկ գործարքներից: Միավորները հեշտությամբ կարելի է օգտագործել QR վճարումների միջոցով: Հաջորդ տարվա ընթացքում նախատեսվում է ծրագրի ընդլայնում տարբեր մակարդակների բաժանված կառավարման եղանակի ներդրման, թիրախային արշավների իրականացման և միավորների կուտակման ու հաշվարկման գործառնությունների բարելավման միջոցով:
- **Հաճախորդի արժեքի կառավարում.** Ամերիաբանկը ներդրել է հաճախորդների փորձառության քարտեզ, որն իրականացվում է հաճախորդների պահպանման գործընթացի բարելավմանն ուղղված խաչաձև վաճառքի կառուցվածքային ռազմավարության միջոցով: Հաճախորդների հետ հաղորդակցման հարթակի բարելավումների արդյունքում այժմ հասանելի են գործարքներին և պրոդուկտներին վերաբերող տվյալները հնարավորություն տալով ապահովել վաճառքը խթանող առաջադեմ, թիրախային հաղորդակցում, իսկ խաչաձև վաճառքի համակարգի ավտոմատացումը ներկայումս ընթացքի մեջ է: Ձուգահեռաբար, սպառողական վարկավորման համար նախատեսված վարքագծային մեքենայական ուսուցման մոդելը կանխատեսում է պրոդուկտի օգտագործումը հիմք ընդունելով հաճախորդների ժողովրդագրական տվյալները և վարքագիծը, զգալիորեն բարձրացնելով վաճառքի արդյունավետությունը: Վերաֆինանսավորմանը, քարտային գործարքների ծավալների ընդլայնմանը և նախահաստատվող վարկերի խթանմանն ուղղված թիրախային արշավները նույնպես նպաստում են հաճախորդների ներգրավմանը հատկապես հաշվի բացմանն անմիջապես հաջորդող կարևոր ժամանակահատվածում:
- **Միջին հատվածի (Persona) փաթեթի վերագործարկում.** Պոտենցիալ Persona հաճախորդները բաժանվել են երեք խմբի՝ հիմք ընդունելով նրանց եկամուտը, կարիքները և

վարքագիծը: Այդ հաճախորդներին անվճար տրամադրվել է Persona փաթեթը: Նրանց տրամադրվել է նաև հասանելիություն Նոր Telegram ալիքին և Chatbot-ին, որոնք ապահովում են ինչպես ֆինանսական արտոնություններ, այնպես էլ կենսակերպին առնչվող բովանդակություն՝ հաճախորդների ներգրավվածությունը բարելավելու նպատակով:

- **Ձայնային կենսաչափական տվյալներով նույնականացման մեկնարկ.** Ամերիաբանկը դարձավ Հայաստանի առաջին բանկը, որն իր Կոնտակտային կենտրոնում ներդրեց ձայնային կենսաչափական տվյալներով հաճախորդների նույնականացում: Այդ նորարարական տեխնոլոգիան հաշված վայրկյանների ընթացքում նույնականացնում է հաճախորդներին ծայրով բարելավելով նույնականացման ճշգրտությունը, կրճատելով սպասարկման տևողությունը, բարձրացնելով կոնտակտային կենտրոնի աշխատանքի արդյունավետությունը և ապահովելով պաշտպանվածություն խարդախության փորձերից:
- **Հաճախորդների ներգրավման և պահպանման արշավներ.** 2025թ. մենք մեկնարկեցինք մի շարք թիրախային արշավներ, որոնք ուղղված էին հաճախորդների փորձառության բարելավմանը, ներգրավման ընդլայնմանը և թվային պրոդուկտների օգտագործման արագացմանը հաճախորդների բազայի հիմնական հատվածներում: «Իմ Ամերիա, իմ ընտանիք» արշավի շրջանակներում ներկայացվեցին ավելի քան 15 բանկային պրոդուկտներ և գործարքների հետ կապված արտոնություններ՝ առաջարկելով ավելի քան 300 մրցանակ հաճախորդներին և նրանց ընտանիքներին: Նշված նախաձեռնությունն ընդգծեց մեր ռազմավարական անցումն ավելի ընտանիքակենտրոն բանկային մոդելի:

Ուսանողների համար մշակված ծրագրերի նպատակն էր՝ ներգրավել բանկի հաճախորդ դեռևս չհանդիսացող ուսանողներին, միաժամանակ ամրապնդելով առկա ուսանող-հաճախորդների բազան: Այդ նախաձեռնությունները ներառում էին Նոր հաճախորդներին տրամադրվող արտոնություններ, հետվճարի առաջարկներ, հասարակական տրանսպորտի տոմսեր, ուսանողական վարկեր, ուղղորդման պարզակվածներ և կրթաթոշակներ: Ձուգահեռաբար իրականացվող Visa Transportation և Visa Premium արշավները ևս աջակցեցին մեր նպատակների իրագործմանը բարելավել հաճախորդների փորձառությունը, ընդլայնել ներգրավվածությունը և խթանել թվային պրոդուկտների օգտագործումը:

Երկարաժամկետ բանկային գործառնություններ

MyCar հարթակ

Վերջին մի քանի տարվա ընթացքում մեր ավտովարկավորման պորտֆելն արագ աճում է՝ հասնելով 18.2 մլրդ ՀՀ դրամի և վերջին հինգ տարվա կտրվածքով միջինում ապահովելով 34.4% տարեկան աճ, ինչը վկայում է շուկայի մեծ մասնաբաժնի և բիզնեսի կայուն զարգացման մասին: 2025թ. մենք շարունակեցինք ամրապնդել MyCar հարթակի տեխնոլոգիական հիմքը՝ մասշտաբայնություն, գործընկերների հետ անխափան ինտեգրում և առաջադեմ անհատականացում ապահովելու նպատակով: Արդյունքում հարթակը մնում

էջուկայում գործող միակ հավաստված ամբողջապես թվային էկոհամակարգը, որը հնարավորություն է տալիս հաճախորդներին՝ որոնել տրանսպորտային միջոցներ, իրականացնել դրանց գնումը և կառավարել գնմանը հաջորդող գործողությունները մեկ անխափան գործընթացի շրջանակներում, ինչի շնորհիվ ավտովարկավորման ամբողջ գործընթացն իրականացվում է բացառապես առցանց, առանց որևէ թղթային փաստաթղթի:

Հիմնական արդյունքները


- Առաջնային շուկայի վարկերի 32.3%-ը տրամադրվել է առցանց:
- Երկրորդային շուկայի վարկերի 29.1%-ը տրամադրվել է առցանց:
- Տարեվերջի դրությամբ MyCar հարթակում ներկայացված էր 70 ավտոսրահ և 1,251 մոդել:



18.2 մլրդ ՀՀ դրամ

34.4% միջին տարեկան աճ 2020-2025թթ. ընթացքում

Ավտովարկերի համախառն պորտֆել



ԱՄԵՐԻԱԲԱՆԿ - ՀԱՅԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿ
 ԱՄԵՐԻԱԲԱՆԿ - ՀԱՅԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿ
 ԱՄԵՐԻԱԲԱՆԿ - ՀԱՅԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿ
 ԱՄԵՐԻԱԲԱՆԿ - ՀԱՅԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Հիփոթեքային վարկեր

MyHome հարթակ

2025թ. մեր հիփոթեքային վարկերի պորտֆելի կայուն աճը շարունակվեց, և այն ավելացավ 45.2 միլիարդով, ամրապնդելով մեր առաջատար դիրքը շուկայում՝ 23.1% շուկայի մասնաբաժնով: Այդ ցուցանիշը հաստատվեց նաև Euromoney-ի կողմից, որը երկրորդ տարին անընդմեջ ճանաչեց Ամերիաբանկը ՀՀ լավագույն բանկն անշարժ գույքի ոլորտում: Այդ մրցանակով ոգեշնչված Բանկն ընդլայնեց և դիվերսիֆիկացրեց իր ռազմավարական գործընկերությունները և մասնակցեց երկրում իրականացվող կառուցապատման 105 նախագծերի, այդ թվում՝ 35 Նոր նախաձեռնությունների, ինչպիսին են Ռենշինի հետ բացառիկ համագործակցությունը Skyline նախագծի շրջանակներում, որը համարվում է Հայաստանի առաջին «քաղաքը քաղաքում» առաջարկելով արդիական հիփոթեքային լուծումներ ՀՀ բնակիչների, սփյուռքի և օտարերկրյա գնորդների համար:

Պորտֆելի աճին զուգահեռ, մենք զգալիորեն բարելավել ենք MyHome անշարժ գույքի թվային հարթակը՝ ընդլայնելով հար-

Հիմնական արդյունքները


- 2025թ. ընթացքում առաջնային շուկայի վարկերի քանակի 40.8%-ը տրամադրվել է առցանց:
- Տարեվերջի դրությամբ MyHome հարթակում ներկայացված էր 103 կառուցապատող և 165 շենք:
- Տարեվերջի դրությամբ MyHome հարթակում ներկայացված էր 37 բրոքեր և երկրորդային շուկայի 2,365 անշարժ գույք:
- Տարեվերջի դրությամբ MyHome հարթակում ներկայացված էր բնակելի անշարժ գույքի շուկայում գործող գործընկերների/խանութ-սրահների 44 հատուկ առաջարկ:



393.2 մլրդ ՀՀ դրամ

27.4% միջին տարեկան աճ 2020-2025թթ. ընթացքում

Հիփոթեքային վարկերի համախառն պորտֆել



թակի աշխարհագրական ծածկույթը, ներառելով մասնավոր վաճառողներին, ավելացնելով վարձով տրվող և արտերկրում վաճառվող անշարժ գույքի ցուցակներ, ինչպես նաև ներդրելով Նորարարական գործիքներ, ինչպիսիք են վերանորոգման ծախսերի հաշվիչները, շինարարության առաջընթացի մոնիտորինգը և հաճախորդների հավատարմության գործակցի (NPS)/հաճախորդների փորձառության գործակցի (CEI) ավտոմատացված հաշվարկը: Բանկի հետ համագործակցող բրոքերների միջոցով, ինչպես նաև բնակարանային ծառայությունների ընդլայնված էկոհամակարգի շնորհիվ, հարթակում այժմ ներկայացված են նաև Բանկի գործընկեր չհանդիսացող կառուցապատողներ, ամրապնդելով հարթակի դիրքը որպես շուկայի ամենաընդգրկուն անշարժ գույքի հարթակ և խթանելով անցումը դեպի թվային ուղիներ, քանի որ արդեն առաջնային շուկայի հիփոթեքային վարկերի մոտ 40.8%-ը տրամադրվում է առցանց:

Հիմնական մրցակցային առավելությունները

- Հուսալի համագործակցություն կառուցապատողների հետ, ինչը հնարավորություն է տալիս գրավիչ հիփոթեքային առաջարկներ անել:
- Առաջադեմ առցանց հիփոթեքային հարթակներ, որոնք պարզեցնում են դիմումի ներկայացման և հաստատման գործընթացները:
- Բանկի կողմից ներդրված ճկուն սխեմաներ՝ հաճախորդների կարիքներին համապատասխանեցված լուծումները մշակելու համար:
- Առավելություններ պետական կարգավորումների շրջանակներում, այդ թվում՝ եկամտային հարկի վերադարձի խթաններ:
- Ակտիվ մասնակցություն կառավարության կողմից սուբսիդավորվող բազմաթիվ հիփոթեքային ծրագրերին:

Բիզնես բանկինգ

96.1 մլրդ ՀՀ դրամ

21.8% տարեկան աճ

Համախառն ՓՄՁ վարկեր

որից առցանց հարթակի միջոցով տրամադրված ՓՄՁ վարկեր

12.9 մլրդ ՀՀ դրամ

2025թ. Ամերիաբանկը զգալիորեն զարգացրեց իր ՓՄՁ բանկային ծառայությունները՝ MyBusiness հարթակի միջոցով ապահովելով ամբողջապես թվային փորձառություն առևտրային կետերի համար, ներառյալ ներգրավման վերանայված գործընթացը, օգտատերերի կենտրոնացված էջերը և POS ծառայությունների ավտոմատացված կառավարումը: Ամերիաբանկն ընդլայնեց իր թվային վճարումների էկոհամակարգը՝ էլեկտրոնային առևտրի համար ներդրելով Apple Pay-ը, գործարկելով Հայաստանում առա-

ջին թվային բիզնես քարտերը՝ ՓՄՁ-ների համար և ակտիվացնելով Նորարարական POS լուծումներ, ինչպիսիք են PhonePOS-ը և vPOS-ը: Նշված բարելավումներն ամրապնդում են բանկի դիրքը որպես բոլոր ծառայությունները մատուցող միասնական, լավագույն թվային հարթակ՝ բարելավելով արդյունավետությունը, կրճատելով ծառայությունների մատուցման տևողությունը և բարելավելով ՓՄՁ հաճախորդների ընդհանուր փորձառությունը:

Բիզնես հարթակի միջոցով առցանց ներգրավված հաճախորդների մասնաբաժինը՝ 22%

ԻԲ/ՄԲ օգտատերերի թիվը հաճախորդների ընդհանուր բազայում՝ 67%

Բիզնես հարթակի միջոցով բացված ԻԲ/ՄԲ օգտատերերի մասնաբաժինը՝ 30%

Բիզնես հարթակի միջոցով թողարկված բիզնես քարտերի մասնաբաժինը՝ 75%

Թվային ուղիներով տրված բիզնես վարկերի մասնաբաժինը՝ 38%

Բիզնես հարթակի միջոցով ներկայացված առցանց POS հայտերի մասնաբաժինը՝ 76%

Առաջատար դիրք շուկայում՝ էլեկտրոնային առևտրի անկանխիկ գործառնություններով



Բանկումատների ամենախոշոր ցանցերից մեկը մայրաքաղաքում




vPOS տերմինալների խոշորագույն ցանցը երկրում



POS տերմինալների ամենամեծ ցանցերից մեկը երկրում

2024-2025թթ. համեմատություն



Թվային բանկային ծառայություններ

MyAmeria հավելվածի ամբողջական վերաձևավորման արդյունքում մենք ստեղծել ենք նոր սերնդի հարթակ, որը զգալիորեն բարելավում է օգտատիրոջ փորձը և ներգրավվածությունը՝ հիմք դնելով լիովին ինտեգրված գերազանց հավելված ունենալու մեր երկարաժամկետ տեսլականին: Վերաձևավորվումը վերածում է MyAmeria-ն բանկային հավելվածից համապարփակ թվային էկոհամակարգի՝ հնարավորություն տալով օգտատերին մեկ տեղում կառավարել իրենց ֆինանսական, ապրելակերպի և առօրյա կարիքները, ինչպիսիք են ավտոմեքենաների հետ կապված խնդիրների կառավարման կենտրոնացված ծառայությունները, ինչպես նաև MyAmeria-ի MyEventHub հարթակի հետ ինտեգրված հատուկ միջոցառումները և տոմսերի վաճառքի բաժինը: Հաճախորդների փորձառությունն էլ ավելի բարելավելու համար մենք ավելացրեցինք Stories («Պատմություններ») բաժինը՝ պրոդուկտները և թարմացումները դինամիկ կերպով ներկայացնելու համար, MyPoints հավատարմության ծրագիրը և ավելի քան 5000 առևտրի կետում QR-կոդով վճարումների հնարավորությունը, ինչպես նաև ընդլայնեցինք կոմունալ, ապահովագրական և այլ ծառայությունների դիմաց հաշիվների արտացոլման ինտեգրումը՝ ընդգրկելով պարբերական վճարումները, հարկային տեղեկատվությունը և համատիրության վճարները: Բացի այդ, հուսալի push ծանուցումների համակարգն այժմ

իրական ժամանակում ծանուցում է կոմունալ պարտքերի, մուտքային փոխանցումների և ճանապարհային ուստիկանության կողմից կիրառված տուգանքների մասին՝ հնարավորություն տալով օգտատերերին մեկ հպումով մուտք գործել համապատասխան վճարման կամ հաշվի բաժին, ապահովելով տեղեկատվության անխափան և արդյունավետ թվային փոխանակում:


Լիովին ներառական և հաճախորդակենտրոն թվային էկոհամակարգ ունենալու մեր հանձնառության շրջանակներում, մենք գործարկեցինք MyAmeria Star հավելվածը երեխաների համար, որը խթանում է ֆինանսական գրագիտությունը երեխաների շրջանում և սահուն անցումը MyAmeria էկոհամակարգի անկախ օգտագործման: Այդ հարթակը որը մշակվել է ի պատասխան ծնողների մոտ առկա մեծ պահանջարկի, ապահովում է անվտանգ, կրթական միջավայր, որտեղ երեխաները սովորում են պլանավորել իրենց ֆինանսական միջոցները և կատարել ծախսերը պատասխանատու կերպով՝ ծնողի լիարժեք աջակցության և հսկողության ներքո: Հարթակը ներառում է Visa Star քարտը՝ Հայաստանում երեխաների համար նախատեսված առաջին վճարային քարտը, ինչպես նաև գումարի ստացման հարցում ուղարկելու, երեխաների համար հասկանալի կանխիկացման, QR վճարումների, խաղերի դրամապանակների լիցքավորման և գործընկերների կողմից առաջարկվող գեղջերից օգտվելու հնարավորությունների հետ միասին:

Կորպորատիվ և Ներդրումային բանկային գործառնություններ

2025թ. հիմնական ցուցանիշները


Ընդհանուր կորպորատիվ վարկեր և փոխատվություններ

935 մլրդ ՀՀ դրամ




Կորպորատիվ ավանդներ և պարտատոմսեր

640 մլրդ ՀՀ դրամ



Գործառնական շահույթ նախքան վարկային կորուստների գծով ծախսերը, մլրդ ՀՀ դրամ*



Ընդհանուր ակնարկ

Մենք հանդիսանում ենք Հայաստանի առաջատար կորպորատիվ և ներդրումային բանկն ըստ բոլոր հիմնական ցուցանիշների:

Մենք առաջարկում ենք վարկային և բանկային պրոդուկտների լայն ընտրանի, բարդ գործարքների կառավարման և կառուցվածքավորման խորհրդատվություն, առևտրի ֆինանսավորման առաջատար լուծումներ, հարուստ փորձառություն տնտեսության բոլոր հիմնական ճյուղերում: Մենք նաև առաջարկում ենք լրացուցիչ ֆինանսավորման հնարավորություններ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցության և պետական ծրագրերի շրջանակներում:

Մեր ծառայությունները և լուծումները մշակված են հաճախորդների բազմազան ֆինանսական կարիքները բավարարելու համար՝ լինի դա փորձագիտական խորհրդատվության, թե ուղղակի ֆինանսավորման միջոցով: Մենք ունենք Հայաստանի խոշորագույն կորպորատիվ հաճախորդների սպասարկման և ամենամեծ ռազմավարական նախագծերի ֆինանսավորման հարուստ փորձառություն ունեցող բանկ մենք հպարտությամբ ենք կրում առաջատար ընկերությունների նախընտրելի բանկի տիտղոսը: Չնայած վերջին տարիներին բանկային ոլորտը դարձել է ավելի դիվերսիֆիկացված կորպորատիվ բանկային ծառայությունների ուղղությունը դեռևս հանդիսանում է մեր ամենաուժեղ կողմը: Բարդ ֆինանսական լուծումների պահանջարկի աճին զուգահեռ՝ մենք պարտավորվում ենք շարունակաբար ընդլայնել մեր առաջարկները:

2025թ. ձեռքբերումները

2025թ. Կորպորատիվ և ներդրումային բանկինգի դեպարտամենտի թիմը տպավորիչ արդյունքներ է ապահովել: Կորպորատիվ վարկերի ընդհանուր համախառն պորտֆելը տարեկան կտրվածքով աճել է 30.3%-ով՝ կազմելով 874.8 մլրդ դրամ: Զգալի աճին նպաստել են ինչպես կորպորատիվ ՓՄՁ, այնպես էլ խոշոր վարկերը, որոնց պորտֆելի գծով տարեկան աճը կազմել է համապատասխանաբար 24.3% և 32.8%: Առևտրի ֆինանսավորման ընդհանուր պորտֆելը (հաշվեկշռային և հետհաշվեկշռային) նախորդ տարվա համեմատ աճել է 40.8%-ով՝ հետհաշվեկշռային երաշխիքների բարձր աճի շնորհիվ: Լիզինգի պորտֆելի գծով գրանցվել է տարեկան 1.5% աճ: Լիզինգի պորտֆելի ընդհանուր գումարը կազմել է 51.1 մլրդ ՀՀ դրամ: Կորպորատիվ վարկերի պորտֆելի բարձր դիվերսիֆիկացման մակարդակը պահպանվել է՝ տնտեսության բոլոր հիմնական ճյուղերի հավասարակշռված ֆինանսավորման շնորհիվ:

2025 թվականին մենք շարունակեցինք կորպորատիվ բանկային գործառնությունների թվային փոխակերպմանն ուղղված մեր ջանքերը՝ զգալի առաջընթաց գրանցելով նախկինում մեկնարկած նախագծերի ուղղությամբ և ընդլայնելով հիմնական գործընթացների ավտոմատացման շրջանակները: Հաշվի առնելով կորպորատիվ բանկային գործառնությունների առանձնահատուկ և անհատականացված բնույթը՝ մենք շարունակեցինք զարգացնել ներքին թվայնացման և ավտոմատացման նախաձեռնությունները՝ արդյունավետությունը, ճշգրտությունը

րական նախագծերի ֆինանսավորման հարուստ փորձ: Որպես կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայությունների ոլորտում հարուստ փորձառություն ունեցող բանկ մենք հպարտությամբ ենք կրում առաջատար ընկերությունների նախընտրելի բանկի տիտղոսը: Չնայած վերջին տարիներին բանկային ոլորտը դարձել է ավելի դիվերսիֆիկացված կորպորատիվ բանկային ծառայությունների ուղղությունը դեռևս հանդիսանում է մեր ամենաուժեղ կողմը: Բարդ ֆինանսական լուծումների պահանջարկի աճին զուգահեռ՝ մենք պարտավորվում ենք շարունակաբար ընդլայնել մեր առաջարկները:

Մենք ձգտում ենք պահպանել շուկայի առաջատարի մեր դիրքը՝ շարունակելով դիվերսիֆիկացնել մեր պորտֆելը և առաջնահերթություն տալով կորպորատիվ բանկային գործառնությունների ոլորտում կանաչ ծրագրերի ֆինանսավորմանը: Մեր առաջնային միջնաժամկետ նպատակն է ավելացնել ՓՄՁ վարկերի և պրոդուկտների կշիռն ընդհանուր պորտֆելում, ինչպես նաև ապահովել ոչ տոկոսային եկամտի աճն ընդհանուր գործառնական եկամտի կառուցվածքում:

և ընդհանուր գործընթացի արագությունը բարելավելու համար: Բարելավվեց որոշ աշխատանքային ուղղությունների կառուցվածքը, ինչը հնարավորություն տվեց ավելի սահուն կերպով համակարգել բաժինների աշխատանքը: Մենք գործարկեցինք անշարժ գույքի գնահատման գործընթացի համար նախատեսված թվային հարթակ, որը թույլ տվեց արտաքին գնահատողներին ներկայացնել և կառավարել տեղեկատվությունը անվտանգ և ամբողջությամբ թվային ձևաչափով: Ներդրված ջանքերը թույլ կտան շարունակաբար բարելավել թափանցիկությունը, հետևողականությունը և գործառնական արդյունավետությունը:

Մենք նաև ներդրեցինք նոր, շատ կարևոր գործառնություններ և ամբողջությամբ ավտոմատացված ձևանմուշներ կորպորատիվ հաճախորդների համար նախատեսված ինտերնետ-բանկինգի համակարգում՝ ապահովելով Բանկ հայտեր ուղարկելու ավելի արագ և ավելի հարմար եղանակներ: Նշված բարելավումների շնորհիվ կարողացանք կրճատել ձեռքով կատարվող աշխատանքների ծավալը և բարելավել հաճախորդների ընդհանուր փորձառությունը:

Ընդհանուր առմամբ, 2025 թվականն արտացոլում է մեր գործընթացները պարզեցնելու, ծառայությունների որակը բարելավելու և կորպորատիվ բանկային գործառնությունների շրջանակներում գործառնական արդյունավետությունն ամրապնդելու նպատակով տեխնոլոգիաների կիրառման մեր շարունակական հանձնառությունը:

Ընդհանուր կորպորատիվ վարկային պորտֆելի կառուցվածքը

2025 ՀՀ դրամ
635.7 մլրդ
Խոշոր վարկեր

ՀՀ դրամ
51.1 մլրդ
Լիզինգ

ՀՀ դրամ
239.1 մլրդ
Կորպորատիվ ՓՄՁ

ՀՀ դրամ
8.8 մլրդ
Ֆակտորինգ և դեբիտորական պարտքեր ակրեդիտիվների գծով



* Ներառյալ շահույթը նախքան վարկերի հնարավոր կորուստների գծով մասհանումները, ընդհանուր վարչական ծախսերը և եկամտային հարկը

Կորպորատիվ բանկային ծառայություններ

Խոշոր ձեռնարկությունների վարկավորում

635.7 մլրդ ՀՀ դրամ

Խոշոր ձեռնարկությունների վարկավորման ընդհանուր պորտֆել



2025թ. Խոշոր կորպորատիվ վարկերի պորտֆելը հասել է 635.7 միլիարդ ՀՀ դրամի՝ գրանցելով տարեկան աճ 32.8%-ի չափով:

2024թ. պահպանվել է խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռը նվազման դինամիկան, ինչը վկայում է մեր վարկային պորտֆելի բարձր որակի մասին: Ի լրումն 2024թ. ընթացքում գրանցված 0.9 տոկոսային կետով նվազման, 2025թ. Խնդրահարույց կորպորատիվ վարկերի տեսակարար կշիռը նվազել է ևս 0.7 տոկոսային կետով և տարեվերջին խնդրահարույց վարկերի բաժինը կորպորատիվ վարկերի պորտֆելում կազմել է 0.16%:

2025թ. Բանկը հավատարիմ է մնացել երկրի երկարաժամկետ տնտեսական զարգացումը խթանող ոլորտների և նախագծերի ֆինանսավորման իր ռազմավարությանը:

2025թ. իրական, շոշափելի աճի տարի էր Հայաստանի տնտեսության համար: Շինարարության ոլորտը պահպանեց իր ամուր դիրքերը՝ շնորհիվ ողջ երկրում իրականացվող բնակելի շենքերի և ենթակառուցվածքային շարունակական նախագծերի: Գյուղատնտեսությունը ևս շարունակեց զարգանալ, հատկապես՝ ժամանակակից սարքավորումների մեջ ներդրումներ կատարող և արտահանման ուղղված բիզնեսների հաճախումով: Միևնույն ժամանակ, զբոսաշրջությունը, ծառայությունների ոլորտը և թեթև արդյունաբերությունը շարունակեցին թափ հավաքել:

րումների մեջ ներդրումներ կատարող և արտահանման ուղղված բիզնեսների հաշվին: Միևնույն ժամանակ, զբոսաշրջությունը, ծառայությունների ոլորտը և թեթև արդյունաբերությունը շարունակեցին թափ հավաքել:

Որպես կորպորատիվ վարկավորման ծավալներով երկրի խոշորագույն բանկ՝ մենք բնականաբար գտնվում ենք այս բոլոր գործընթացների կենտրոնում:

Կորպորատիվ բանկինգի տեսանկյունից մեր խնդիրը հստակ է՝ աջակցել այն ոլորտներին, որոնք իրականում առաջ են մղում տնտեսությունը:

Մենք շարունակել ենք ֆինանսավորել խոշոր շինարարական նախագծեր՝ միաժամանակ սերտորեն համագործակցելով գյուղատնտեսության ոլորտի այն հաճախորդների հետ, որոնք դառնում են ավելի արդյունավետ ու ընդլայնվող: Դրան զուգահեռ, մենք մեծացրել ենք մեր աջակցությունն այլ զարգացող ճյուղերին, որտեղ տեսնում ենք հստակ ու կայուն պահանջարկ:

Մենք չենք ձգտում աճի՝ հանուն աճի: Մեր նպատակն է պահպանել հավասարակշռությունը, սատարել մեր հաճախորդներին և աճել տնտեսության հետ համընթաց:


Կորպորատիվ ՓՄՁ վարկավորում

2025թ. հիմնական ցուցանիշները



239.0 մլրդ ՀՀ դրամ

Կորպորատիվ ՓՄՁ վարկավորման ընդհանուր պորտֆել



2025թ. նույնպես ՓՄՁ վարկավորումը եղել է բանկի ռազմավարական ուղղություններից մեկը: ՓՄՁ վարկավորման պորտֆելը նախորդ տարվա համեմատ աճել է 24.3%-ով՝ գործող և նոր հաճախորդներին ակտիվորեն վարկավորելու պայմաններում: Վերջին 3 տարիների ընթացքում ՓՄՁ վարկերի ծավալը մեծացել է 108.1%-ով, բաղադրյալ տարեկան աճի տեմպը կազմել է 27.7%: Առավել մեծ ուշադրության էին արժանացել Հայաստանի ռազմավարական ոլորտները՝ էներգետիկան, շինարարությունը, ինտենսիվ գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը, որտեղ բանկն առաջարկել է ոլորտին համապատասխան նոր պրոդուկտներ:

Պորտֆելի աճն ապահովվել է մեր նպատակային կորպորատիվ ՓՄՁ վարկավորման քաղաքականության շնորհիվ, որին նպաստել է գործընթացների շարունակական պարզեցումը և կատարելագործումը՝ արագ փոփոխվող միջավայրում ձեռնարկությունների կարիքներին դրանք էլ ավելի

համապատասխանեցնելու նպատակով: Աճը հիմնականում ապահովվել է նորարարական և կանաչ ՓՄՁ ծրագրերի, ինչպես նաև սոցիալական ուղղվածություն ունեցող նախագծերի ֆինանսավորման ծավալների ավելացման շնորհիվ:

Մենք ակտիվորեն ֆինանսավորել ենք արտադրական հզորությունների ընդլայնմանը, նոր տեխնոլոգիաների ներմուծմանը և գյուղատնտեսության խթանմանն ուղղված կառավարության նպատակային ծրագրերը: Մեր առանձնակի ուշադրության կենտրոնում էին հատկապես բարձր տեխնոլոգիական ու էներգախնայողության ոլորտի ծրագրերը, որոնց իրականացման համար բանկն առավել շահավետ պայմաններ է առաջարկում: Ամրապնդելով համագործակցությունը մեր գործընկեր միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ) հետ՝ մենք հաջողությամբ իրականացրել ենք բազմաթիվ նախագծեր կանաչ տնտեսության և կանաչ վարկավորման ծրագրերի շրջանակներում:

Լիզինգ

Լիզինգի ընդհանուր պորտֆելը՝ 51.1 մլրդ ՀՀ դրամ
51.1 մլրդ ՀՀ դրամ

2025թ. լիզինգի պորտֆելի գծով գրանցվել է 1.5% աճ, որի արդյունքում պորտֆելը կազմել է 51.1 մլրդ ՀՀ դրամ: Նշված աճը հիմնականում պայմանավորված էր 2025 թվականին կնքված մի քանի խոշոր լիզինգի պայմանագրերով, որոնց ներքո ձեռք բերված ակտիվների մատակարարումը նախատեսված է 2026 թվականին:

2025 թվականի ընթացքում ստորագրվել են 37.2 միլիարդ ՀՀ դրամի ընդհանուր արժողությամբ լիզինգի պայմանագրեր, որոնցից 25.9 միլիարդ ՀՀ դրամի չափով լիզինգով տրամադրված ակտիվները ներկայումս մատակարարման փուլում են:

Լիզինգային գործառնությունների ներքո ֆինանսավորման ծավալների ընդլայնման շնորհիվ մենք կարողանում ենք մեր հաճախորդներին առաջարկել ֆինանսավորման ճկուն և մատչելի լուծումներ: Լիզինգը ֆինանսավորման գրավիչ և շահավետ գործիք է՝ պահանջվող ցածր կանխավճարի,

Լիզինգի պորտֆելի բաղադրյալ տարեկան աճի տեմպ (2020-2025թթ.)՝
31.4%

գրավի գրավադրման ընթացակարգերի բացակայության և սուբսիդավորման բազմաթիվ ծրագրերի ներքո հաճախորդներին առաջարկվող առավել բարենպաստ ֆինանսավորման պայմանների տեսանկյունից:

2025 թվականին պետական սուբսիդավորման ծրագրերի շրջանակներում տրամադրվող լիզինգի ծավալը զգալիորեն աճել է՝ ընդգրկելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են արտադրությունը, հանքարդյունաբերությունը, առողջապահությունը, էներգամատակարարումը, տեղեկատվական տեխնոլոգիաները և մի շարք այլ ոլորտներ: Միայն «Արտադրողականության խթանման միջոցառում» ծրագրի շրջանակներում 2023-2025 թվականներին կնքվել են 84.2 միլիարդ ՀՀ դրամի համարժեք լիզինգի պայմանագրեր, որոնք հնարավորություն են տվել տնտեսության հիմնական ոլորտներին արդիականացնել իրենց սարքավորումները ֆինանսավորման առավել մատչելի պայմաններով:

Առևտրի ֆինանսավորում և Ֆակտորինգ

2025թ. հիմնական ցուցանիշները

Ակրեդիտիվների և բանկային երաշխիքների պորտֆելը տարեվերջի դրությամբ՝
130.1 մլրդ ՀՀ դրամ
տարեկան աճ
40.8%

Առևտրի ֆինանսավորման գործիքներից ստացված ընդհանուր եկամուտը՝
2.7 մլրդ ՀՀ դրամ
տարեկան աճ
39.7%

Ֆակտորինգի պորտֆելը տարեվերջի դրությամբ
8.7 մլրդ ՀՀ դրամ
տարեկան աճ
80.8%

Առևտրի ֆինանսավորման տեսանկյունից 2025թ. Ամերիաբանկի համար զգալի աճի և նշանակալի ձեռքբերումների տարի էր: Բանկային երաշխիքների և ակրեդիտիվների պորտֆելը տարեվերջին կազմել է 340 մլն ԱՄՆ դոլար. տարվա ընթացքում կնքվել է ավելի քան 2600 նոր գործարք:

2025թ.-ին մեր ուշադրության կենտրոնում կրկին տնտեսության աճը խթանող ոլորտներն էին՝ շինարարություն, ՏՏ, էներգետիկա, արտադրություն, հանքարդյունաբերություն, առողջապահություն և հումքային ապրանքներ: Միևնույն ժամանակ մենք շարունակեցինք ակտիվորեն աջակցել արտաքին առևտրին:

Ամերիաբանկն ակտիվորեն մասնակցում է բոլոր խոշոր միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ)՝ ՎՋԵԲ-ի, ՄՖԿ-ի, ԱԶԲ-ի առևտրի և մատակարարման շղթաների ֆինանսավորման ծրագրերին: Բացի նշված ՄՖՀ-ներից թողարկող բանկի կարգավիճակին արժանանալով՝ Ամերիաբանկը նաև առաջին հայկական բանկն է, որն ստացել է հաստատող բանկի կարգավիճակ ՎՋԵԲ-ի առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում և հանդիսանում է Հայաստանի միակ հաստատող բանկը ՄՖԿ-ի առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի և ԱԶԲ-ի առևտրի և մատակարարման շղթաների ֆինանսավորման ծրագրի շրջանակներում:

Շնորհիվ նշված ՄՖՀ-երից և գործընկեր առևտրային բանկերից ստացված խոշոր վարկային սահմանաչափերի՝ մենք մեր հաճախորդներին առաջարկում ենք բնականոն աշխատանքն ու բիզնեսի զարգացումն ապահովող լավագույն լուծումները: Մենք շարունակել ենք արդյունավետորեն համագործակցել գործընկեր միջազգային բանկերի հետ, ինչպիսիք են CaixaBank-ը, Banca Popolare Di Sondrio-ն, Raiffeisenbank-ը, ODDO BHF-ը, Unicredit-ը, Intesa San Paolo-ն, KBC Bank-ը և այլն: Ամերիաբանկի համար միջազգային ֆինանսական կազմակերպությունների և հիմնական մի

ջազգային գործընկերբանկերի կողմից բացված՝ առևտրի ֆինանսավորման հասանելի սահմանաչափերը 2025թ. վերջում գերազանցել են 120 մլրդ ՀՀ դրամը:

Մենք աջակցել ենք առևտրի զարգացմանը ինչպես տեղական ու միջազգային վճարային գործիքների թողարկման և արտահանման/ներկրման գործառնությունների սպասարկման, այնպես էլ միջազգային բանկերից ռեսուրսների ներգրավման և ընկերությունների արտահանման և ներկրման գործառնությունների ուղղակի ֆինանսավորման միջոցով: 2025թ. ընթացքում առևտրի ֆինանսավորման նպատակով գործընկեր բանկերից ներգրավվել է ավելի քան 260 մլն ԱՄՆ դոլար:

Ֆակտորինգը մեկ այլ արդյունավետ և վստահելի գործիք է, որի միջոցով Բանկը ֆինանսավորում է տրամադրում առևտրային գործարքների համար: Դեբիտորական պարտքերն անմիջապես շրջանառու միջոցների վերածելով՝ ձեռնարկությունները ձեռք են բերում գործառնական կարիքները բավարարելու, աճի հնարավորություններն օգտագործելու և արագորեն փոփոխվող շուկայական պայմաններում ֆինանսական ճկունություն ցուցաբերելու ունակություն:

2025թ. ընթացքում Ամերիաբանկի ֆակտորինգային պորտֆելի թիրախային ոլորտներն անփոփոխ էին՝ առևտուր, գյուղատնտեսություն, էներգետիկա, շինարարություն, տրանսպորտ, հանրային ծառայություններ և տեքստիլ արդյունաբերություն:

Արտահանման ֆակտորինգի շրջանակներում Ամերիաբանկը շարունակել է իր համագործակցությունը Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության հետ, ինչը թույլ է տվել զգալիորեն ընդլայնել արտահանողների համար արտասահմանյան գործընկերների հետ ֆինանսապես ավելի արդյունավետ ու վստահելի հարաբերություններ կառուցելու հնարավորությունները:

Ներդրումաբանկային գործառնություններ

2025թ. հիմնական ցուցանիշները

Թիվ 1 տեղաբաշխողը
Հայաստանում

98 մլրդ ՀՀ դրամ

18 նախագիծ պարտքային կապիտալի շուկայում

Ընդհանուր ակնարկ

2025 թվականը ևս մեկ կարևոր տարի էր Ամերիաբանկի ներդրումաբանկային գործունեության համար: Ամերիաբանկը պահպանել է ներդրումաբանկային ոլորտի բացարձակ առաջատարի դիրքը՝ կնքելով ՀՀ շուկայի համար նշանակալի խոշոր գործարքներ: Չնայած վերջին տարիներին մեր ռազմավարությունն ուղղված է առավելապես ՓՄՁ հատվածի և մանրածախ բանկային ծառայությունների զարգացմանը՝ ներդրումաբանկային գործունեությունը հանդիսանում է Բանկի հիմնական մրցակցային առավելություններից մեկը, որը մեզ հնարավորություն է տալիս անհատականացված ծառայություններ առաջարկել մեր կորպորատիվ հաճախորդների ֆինանսավորման կարիքները բավարարելու համար:

Միաձուլումներ և ձեռքբերումներ

- Խորհրդատվություն գնորդին
- Խորհրդատվություն վաճառողին
- Բիզնեսի գնահատում

Կապիտալի շուկաներ


- Պարտքային ֆինանսավորման ներգրավում կապիտալի հանրային շուկաներում
- Բաժնային ֆինանսավորման ներգրավում կապիտալի հանրային շուկաներում
- Առաջնային բաց
- տեղաբաշխման (IPO) գծով խորհրդատվություն

Կորպորատիվ ֆինանսներ

- Պարտքային ֆինանսավորման ներգրավում կապիտալի ոչ հանրային շուկաներում
- Բաժնային ֆինանսավորման ներգրավում կապիտալի ոչ հանրային շուկաներում
- Վարկանիշավորման խորհրդատվություն

Պարտատոմսերի առաջատար թողարկողը ՀՀ շուկայում

գ. 63 մլրդ ՀՀ դրամ
14 տրանշ



27.5%
Մասնաբաժինը շուկայում

Ենթ մտադիր ենք էլ ավելի դիվերսիֆիկացնել մեր կորպորատիվ բանկային պորտֆելը և նվազեցնել կենտրոնացման մակարդակը՝ միաժամանակ պահպանելով առաջատար դիրքը շուկայում: Ռազմավարական աճն ապահովելու և մեր հաճախորդների ֆինանսավորման մեխանիզմները ավելի դիվերսիֆիկացնելու նպատակով մենք առաջարկում ենք ներդրումաբանկային գործիքների և պրոդուկտների լայն ընտրանի: Մեր ներդրումաբանկային պրոդուկտները և ծառայությունները տրամադրվում են հետևյալ բիզնես ուղիությունների միջոցով.

2025թ. ձեռքբերումները

Միաձուլումներ և ձեռքբերումներ

2025 թվականը պատմական նշանակություն ունեցավ Ամերիաբանկի Միաձուլումների և ձեռքբերումների բաժնի համար: Միաձուլումների և ձեռքբերումների բաժինը հանդես եկավ որպես վաճառող կողմի խորհրդատու: Այդ գործարքը ոչ միայն ևս մեկ մարտահրավեր էր, որի շրջանակներում Բանկի Միաձուլումների և ձեռքբերումների թիմը ցուցադրեց իր երկար տարիների փորձը, վերլուծական ձիրքը և տարբեր ոլորտներ ներկայացնող բազմաթիվ շահագրգիռ կողմերի հետ հաջողությամբ համագործակցելու ունակությունը, այլև համագործակցելու և ընդլայնվելու բազմաթիվ փոխշահավետ հնարավորություններ ստեղծեց երկու կողմի:

Կապիտալի շուկաներ

2025 թվականը ևս մեկ նշանակալի տարի էր կապիտալի շուկաների մեր թիմի համար: Թիմը հաջողությամբ իրականացրեց 98 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի 18 նախագիծ/պարտատոմսերի տեղաբաշխում պարտքային կապիտալի շուկայում .

Արտարժույթային պարտատոմսերի ռեկորդային թողարկում. «Ամերիաբանկ»-ը հաջողությամբ կազմակերպեց «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի համար 80 միլիոն ԱՄՆ դոլարի պարտատոմսերի տեղաբաշխումը: Այս նշանակալի գործարքը համարվում է կապիտալի շուկայի խոշորագույն գործարքներից մեկը՝ մինչ օրս տեղական շուկայում թողարկված արտարժույթային (ԱՄՆ դոլար) պարտատոմսերի ամենամեծ ծավալով՝ նշանակալի շուկայի խորության և ծավալի ընդլայնման կարևորագույն մի փուլ:

Արագ, դեբյուտային տեղաբաշխում դեղագործական ոլորտում. Ամերիաբանկը սահուն կերպով իրականացրեց «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի Հայաստանի խոշորագույն դեղատների ցանցի պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխումը: 1.5 միլիարդ դրամի թողարկումն ամբողջությամբ տեղաբաշխվեց առաջին օրը (2025 թվականի դեկտեմբերի 10-ին)՝ սահմանված ժամկետից զգալիորեն շուտ, ինչն արտացոլեց ներդրողների շրջանում առկա բարձր պահանջարկը: Այս թողարկումը հատկանշական էր նաև այն առումով, որ այն պարտատոմսերի առաջին առաջարկն էր Հայաստանի դեղագործական ոլորտում, որը թույլ տվեց դիվերսիֆիկացնել թողարկողների բազան՝ ընդգրկելով ևս մեկ ուղիություն:

Կորպորատիվ ֆինանսներ

Տարիների ընթացքում Ամերիաբանկի Կորպորատիվ ֆինանսների բաժինը ձևավորել է ռազմավարական նշանակության արդյունավետ գործընկերական հարաբերություններ միջազգային ամենաիդիականավոր ֆինանսական հաստատություններից մի քանիսի հետ, որոնց միջոցով 2008թ. ի վեր ներգրավել է ավելի քան 1 մլրդ ԱՄՆ դոլարի ֆինանսավորում ամրապնդելով իր առանցքային դերը ֆինանսական աճի խթանման և խոշոր գործարքների կնքման գործում:

մերի համար և նպաստեց Բանկի համար ռազմավարական նշանակության նոր շուկաներ մուտք գործելուն: Այս կարևոր գործարքը հիմք դրեց դիսամիկ զարգացումներով լի հաջորդ տարվա համար: Բացի այդ, թիմն իրականացրեց բիզնեսի գնահատման ծավալուն աշխատանքներ տարբեր ոլորտներում՝ շինարարություն, հանքարդյունաբերություն, էլեկտրոնային առևտուր, ապահովագրություն և այլն:

Թիմը նաև ակտիվ մասնակցություն է ունեցել միաձուլումների և ձեռքբերումների մի քանի խոշոր գործարքներում՝ տրամադրելով խորհրդատվություն ինչպես գնորդներին, այնպես էլ վաճառողներին:

Պարտատոմսերի թողարկում երկու տրանշով՝ դիվերսիֆիկացված ռազմավարական հոլդինգի համար. Ամերիաբանկը մեկնարկեց «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի երկու տրանշով թողարկված 2.5 միլիոն ԱՄՆ դոլար և 1 միլիարդ ՀՀ դրամ արժույթային պարտատոմսերի տեղաբաշխումը: «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն ռազմավարական հոլդինգային ընկերություն է, որն ակտիվներ ունի բժշկական և ապահովագրության ոլորտներում: Տեղաբաշխումը մեկնարկել է 2025 թվականի դեկտեմբերի 15-ին: Ստացված միջոցները նախատեսվում է ուղղել ժամանակակից, բազմաֆունկցիոնալ բժշկական կենտրոնի ֆինանսավորմանը: Նշված գործարքն ընդգծում է Ամերիաբանկի դերը առողջապահության և ֆինանսական ծառայությունների ոլորտներում ռազմավարական ներդրումների իրականացման գործում:

2025թ. Ամերիաբանկը պահպանել է տեղական շուկայի առաջատար թողարկողի դիրքը. Բանկի մասնաբաժինը շուկայում կազմել է 27.5%: 2025թ. ընթացքում Ամերիաբանկը թողարկել է տեղաբաշխել է պարտատոմսերի 14 տրանշ՝ 63 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

Պարտատոմսերի գնման գործընթացը պարզեցվել է ավտոմատացվել է նաև անհատ ներդրողների համար: Ֆիզիկական անձինք հեշտությամբ կարող են գնել Ամերիաբանկի կողմից առաջարկվող ցանկացած արժեթուղթ առցանց՝ MyAmeria հավելվածում գործող MyInvest հարթակի միջոցով: Թեև Նախորդ տարիների ընթացքում ինստիտուցիոնալ ներդրողները հիմնական մասնակիցներն էին, մանրածախ ներդրողների մասնաբաժինը զգալի աճ է գրանցել:

2025թ. Կորպորատիվ ֆինանսների բաժինը շարունակեց ակտիվորեն ուսումնասիրել կորպորատիվ հաճախորդների համար ֆինանսավորում ներգրավելու հնարավորությունները: Օգտագործելով իր ընդարձակ գործընկերական ցանցը և շուկայում ունեցած մեծ փորձը՝ թիմը շարունակեց ռազմավարական նշանակության խորհրդատվական ծառայություններ տրամադրել բացառիկ տեղով և ներկայացնելով հաճախորդների փոփոխվող կարիքները բավարարող ֆինանսական լուծումներ:

VIVA
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ԱՄՆ դոլար
80 մլն
 Տեղաբաշխող
 Փետրվար 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ՀՀ դրամ
5 մլրդ.
 Տեղաբաշխող
 Մարտ 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ՀՀ դրամ
5 մլրդ.
 Տեղաբաշխող
 Մարտ 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ՀՀ դրամ
12 մլրդ.
 Տեղաբաշխող
 Սեպտեմբեր 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ԱՄՆ դոլար
15 մլն
 Տեղաբաշխող
 Սեպտեմբեր 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 Եվրո
5.25 մլն
 Տեղաբաշխող
 Հունիս 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ԱՄՆ դոլար
10 մլն
 Տեղաբաշխող
 Ապրիլ 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ԱՄՆ դոլար
10 մլն
 Տեղաբաշխող
 Ապրիլ 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ՀՀ դրամ
5 մլրդ.
 Տեղաբաշխող
 Հունիս 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ԱՄՆ դոլար
11.6 մլն
 Տեղաբաշխող
 Հոկտեմբեր 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ՀՀ դրամ
10 մլրդ.
 Տեղաբաշխող
 Դեկտեմբեր 2025

AlfaPharm
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ՀՀ դրամ
1.5 մլրդ.
 Տեղաբաշխող
 Դեկտեմբեր 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ԱՄՆ դոլար
10 մլն
 Տեղաբաշխող
 Հունիս 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ՀՀ դրամ
3.25 մլրդ.
 Տեղաբաշխող
 Հուլիս 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ԱՄՆ դոլար
5 մլն
 Տեղաբաշխող
 Հուլիս 2025

INTELLIGENT MANAGEMENT
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ՀՀ դրամ
1 մլրդ.
 Տեղաբաշխող
 Դեկտեմբեր 2025

INTELLIGENT MANAGEMENT
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ԱՄՆ դոլար
2.5 մլն
 Տեղաբաշխող
 Դեկտեմբեր 2025

AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐ
 ԱՄՆ դոլար
10 մլն
 Տեղաբաշխող
 Դեկտեմբեր 2025


Առևտրային գործառնություններ

Հիմնական ցուցանիշները

- ՀՀ պետական արժեթղթերի ամենախոշոր առաջնային դիլերը և առաջատար շուկա ստեղծող տեղական և միջազգային շուկաներում
- Արտարժույթի առաջատար փոխարկողներից մեկը Հայաստանում գործարքների ծավալով և ստացված շահույթով
- Տեղական շուկայում առաջատար բրոքերը, որը հայտնի է իր ստեղծած ներդրումային հարթակով MyInvestով, որի միջոցով սպասարկում է մեծ թվով հաճախորդների և առաջարկում բրոքերային պրոդուկտների և ծառայությունների լայն տեսականի

Առևտրային գործառնություններից ստացված ոչ տոկոսային եկամուտ,

մլրդ ՀՀ դրամ



Միջին տարեկան աճ 2020-2025՝

+28.1%

Բրոքերային ծառայություններից օգտվող հաճախորդների թվի տարեկան աճ՝


+57.5%

Ամերիաբանկը կրկին ցուցադրեց միջազգային և տեղական շուկաների փոփոխվող պայմաններին հարմարվելու բարձր ունակություն՝ պահպանելով իր դիրքը որպես հայկական շուկայի առաջատար առևտրային գործառնությունների գծով շնորհիվ իրացվելիության ակտիվ ապահովման, ռիսկերի պատշաճ կառավարման և պրոդուկտների շարունակական զարգացման: 2025թ. առևտրային գործառնություններից գուտ եկամուտը կազմել է 19.6 մլրդ ՀՀ դրամ՝ 2024թ. գրանցված 23.7 մլրդ ՀՀ դրամի համեմատ: Բանկի արդյունքներն արտարժույթային գործառնությունների, ածանցյալ գործիքների, դրամի շուկաների և արժեթղթերի գծով վկայում էին շուկաների ենթակառուցվածքները զարգացնելու և հաճախորդների համար ռիսկերի կառավարման արդյունավետ լուծումներ ապահովելու շարունակական հանձնառության մասին:

2025թ. Ամերիաբանկի արտարժույթային գործառնությունների բաժինը շարունակել է տրամադրել պրոդուկտների ամբողջ տեսականին թե՛ տեղական արժույթով,

Գործառնական շահույթ,

մլրդ ՀՀ դրամ



Միջին տարեկան աճ 2020-2025՝

+23.2%

MyInvest հարթակի ամսական ակտիվ օգտատերերի թվի տարեկան աճ՝

+76.0%

թե՛ արտարժույթներով, ներառյալ սփոթ, ֆորվարդային և սվոփ գործարքները: Բանկը շարունակել է հանդես գալ որպես ակտիվ շուկա ստեղծող ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ շուկաներում՝ առաջարկելով 12 հիմնական արժույթային գույզերի (USD, EUR, GBP, CHF, RUB, CAD, AUD, AED, CNY, SEK, JPY, GEL) և ոսկու գնանշումներ: Վրացական լարին Բանկի գնանշման ցուցակում ավելացել է 2025թ. ընթացքում: Ընդլայնելով ծածկույթը և պահպանելով իրացվելիության կայուն ապահովումը՝ Ամերիաբանկն աջակցել է կորպորատիվ հաճախորդների, ՓՄՁ-ների, ֆինանսական հաստատությունների և միջազգային ներդրողների գործարքային և հեջավորման կարիքներին՝ էլ ավելի ամրապնդելով իր դիրքը որպես շուկայի իրացվելիություն ապահովող ամենաակտիվ մասնակիցներից մեկը:

Ծարունակելով ածանցյալ գործիքների տեղական շուկայի զարգացման ուղղությամբ վերջերս ձեռնարկված ռազմավարական միջոցառումները, Ամերիաբանկն ընդլայնել է իր գործունեությունը ՀՀ դրամով իրականացվող ֆոր-

վարդային և սվոփ գործարքների ուղղությամբ՝ արտահանողների և ներմուծողների համար ավելի հասանելի դարձնելով հեջավորման արդյունավետ լուծումները և նպաստելով շուկայի զարգացմանը: Բացի այդ, Բանկն ընդլայնել է իր ածանցյալ գործիքների տեսականին՝ իր կորպորատիվ հաճախորդներին առաջարկելով առանց առաքման ֆորվարդի (NDF) պայմանագրեր՝ տրամադրելով լրացուցիչ գործիք տարբեր շուկաներում արտարժույթային ռիսկերը կառավարելու համար:

Շուկայի ստեղծման գործունեությունը շարունակել է ընդլայնվել 2025թ. ամրապնդելով Ամերիաբանկի առաջատար դիրքը Հայաստանի կապիտալի շուկաներում: Տարեվերջի դրությամբ Բանկը հանդիսանում էր Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակված 28 տեսակի կորպորատիվ և 6 տեսակի պետական պարտատուների շուկա ստեղծողը՝ ընդգրկելով այնպիսի հիմնական ոլորտներ, ինչպիսիք են հեռահաղորդակցությունը, կոմունալ ծառայությունները և բանկային գործունեությունը:


Հատկանշական է, որ Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակված բոլոր թողարկողների մոտ 25%-ը որպես իրենց շուկա ստեղծող ընտրել է Ամերիաբանկը, ինչը վկայում է Բանկի նշանակալի հնարավորությունների, հաշվեկշռի կայունության և ընդարձակ ցանցի մասին:

Այս ընդլայնված ներկայությունը էապես բարելավում է երկրորդային շուկայի իրացվելիությունը, նվազեցնում է վաճառքի և գնման գների տարբերությունը և նպաստում է գների արդյունավետ բացահայտմանը: Թողարկողների

համար շուկայի ստեղծման ակտիվ գործունեությունը բարձրացնում է պարտատուների իրացվելիությունը և ներդրողների վստահությունը, իսկ ներդրողների համար այն նվազեցնում է գործարքների կլեման ծախսերը և ներդրումների դուրսբերման ռիսկը:

Ամերիաբանկի մեծացող դերն ընդգծում է բանկի ռազմավարական ներդրումը Հայաստանի կապիտալի շուկաների ընդլայնման, թափանցիկության աստիճանի բարձրացման և ֆիքսված եկամտի տեղական և էկոհամակարգի երկարաժամկետ զարգացմանն աջակցելու ուղղությամբ:

2025թ. ընթացքում Ամերիաբանկի բրոքերային ծառայությունը զգալի առաջընթաց է գրանցել շնորհիվ 2024թ. ստեղծված կայուն համակարգի: Տարվա արդյունքում գրանցվել է բացառիկ աճ. եկամուտներն ավելացել են գրեթե 48%-ով՝ Նախորդ տարվա համեմատ, գերազանցե-



Բիզնեսի պատասխանատու վարում

Վարչական պատասխանատուությունը հարկավոր է ընդհանուր առմամբ բոլոր մարտնչության միջոցառումներին։

Կյանքի որակի բարելավում. մեր սոցիալական ազդեցությունը

2025թ. հիմնական իրադարձությունները

- Երեխաների առողջության ու կրթության առաջնահերթության ընդգծում՝«Իմ Ամերիա, իմ Հայաստան» արշավի միջոցով
- Ֆինանսական գրագիտության և STEM հմտությունների զարգացում կրթական ծրագրերի և Ameriablogի միջոցով
- Աջակցություն ուսանողներին և համալսարաններին «Իմ Հայաստան, իմ ապագա» արշավի միջոցով

Վարչական պատասխանատուությունը հարկավոր է ընդհանուր առմամբ բոլոր մարտնչության միջոցառումներին։

Ներդրումներ Հայաստանում ավելի առողջ ապագայի կառուցման ուղղությամբ

2025 թվականին Ամերիաբանկն իրականացրեց «Իմ Ամե-րիա, իմ Հայաստան» ԿՄՊ արշավը՝ հնարավորություն ըն-ծեռելով հաճախորդներին և հանրության լայն շերտերին ձևավորել Բանկի սոցիալական ներդրումների առաջնա-հերթությունները բաց և թափանցիկ քվեարկության մի-ջոցով։ Արշավը, որին հատկացվել էր 100 միլիոն դրամ, արտացոլում էր Ամերիաբանկի համոզմունքն առ այն, որ սոցիալական պատասխանատվությանն առնչվող կար-ևնր որոշումները պետք է կայացվեն՝ հաշվի առնելով համայնքի կարծիքը։ Արշավին մասնակցեց ավելի քան 55 հազար մարդ։ Ներդրումների իրականացման համար առաջարկված 8 առաջնահերթ ուղղություններից ընտր-վեցին երեխաների առողջության պահպանման և կր-թության ուղղությունները, որոնց ուղղվեց համապատաս-խանաբար մոտ 72% և 28% ֆինանսավորում։

Առաջնորդվելով Նշված արդյունքներով՝ Ամերիաբանկն ուղղել է ավելի քան 70 միլիոն դրամ ֆինանսավորում մաս-կական առողջապահության ոլորտի նախաձեռնություննե-րին։ Տարվա ընթացքում Բանկն իրականացրել է մի շարք ծրագրեր՝ ուղղված Երևանում և մարզերում մանկական առողջապահական ծառայությունների զարգացմանը։

Ֆրանս-հայկական առողջապահական հիմնադրամի (Santé Arménie) հետ համատեղ՝ Ամերիաբանկը Սյունի-քի մարզում քրոնիկ նյարդաբանական և օրթոպեդիկ խնդիրներ ունեցող երեխաների համար տրամադրել է հասանելիություն անհրաժեշտ վերականգնողական ծառայություններին՝ այսպիսով ընտանիքների համար սպահովելով կայուն, բարձրակարգ խնամք ստանալու հնարավորություն իրենց բնակության վայրերին մոտ։ Նորք-Մարաշ բժշկական կենտրոնում Բանկը ֆինանսա-վորել է սրտաբանական հետազոտություններ անցնող երեխաների սթրեսն ու անհանգստությունը նվազեցնելու համար ստեղծված Ռոբին Ռոբոտ անունով նորարարա-կան ուղեկից ռոբոտի տարեկան սպասարկումը։

Հեռավոր շրջաններում անհետաձգելի բուժօգնությու-նը բարելավելու համար Ամերիաբանկն աջակցել է ՀՀ Հանրապետական շտապ օգնության ծառայության հա-մար ինտենսիվ թերապիայի շտապօգնության մեքենայի ձեռքբերմանը և ապահովել է դրանում երեխաներին հար-

թվային ուղիներով վաճառքի տարբերակ։ Ամերիաբանկի առևտրային գործառնությունների թիմը շարունակեց MyIn-vest-ի՝ Հայաստանում առաջին ներքին առևտրային հավել-վածի, կատարելագործումը՝ հաճախորդներին առաջար-կելով տեղական և միջազգային շուկաների անևախադեպ 24/7 հասանելիություն։ Հավելվածն այժմ մրցակցում է ամ-բողջ աշխարհի առաջատար ներդրումային հարթակների հետ իր այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են ընկերությունների մանրամասն նկարագիրը, վերլու-ծության հիմնարար գործիքները, ինչպես նաև շահույթի վերահսկումն իրական ժամանակում։ Հատկանշական է, որ հայկական բորսայում տեղական կորպորատիվ պար-տատմսերի հետ կապված գործարքների ավելի քան 70%-ը կատարվում է Ամերիաբանկի միջոցով։

Ի լրումն տեխնոլոգիական բարելավումների, Ամերիաբան-կը նաև առաջինն է եղել հասարակությանը ներդրումային հնարավորությունների և տնտեսագիտական հասկացությունների մասին իրազեկելու գործում։ Դա իրականացվել է սոցիալական հարթակներում կրթական բնույթի տե-սանյութերի հրապարակման և Telegram-ում բլոգի գոր-ծարկման միջոցով, որի հետևորդների թիվը ներկա պա-հին 4,000 է։ Մենք նաև ձեռնարկեցինք «Ներդրողի օրը»՝ կապերի հաստատման և ուսուցման արդեն իսկ սիրված անցանց միջոցառումը, ինչպես նաև սկսնակների համար նախատեսված առցանց վեբինարներ։ Նշված նախաձեռ-նությունների նպատակն է՝ զինել լայն լսարանին կարևոր գիտելիքներով, շեշտելով Ամերիաբանկի հանձնառությու-նը՝ ապահովել գերազանց որակ և նորարարություն ներդ-րումային ոլորտում։

Ամերիաբանկը անընդմեջ աջակցում է հասարակական և կրթական նախագծերին, որոնք ուղղված են հասարակական և կրթական նախագծերին, որոնք ուղղված են հասարակական և կրթական նախագծերին, որոնք ուղղված են հասարակական և կրթական նախագծերին, որոնք ուղղված են հասարակական և կրթական նախագծերին։

Մեր ռազմավարությանը և միջնաժամկետ նպատակներին համահունչ, մենք մշակել ենք թիրախային արդյունքի ապահովմանն ուղղված գործողությունների ծրագրեր՝ հետևյալ նպատակներին հասնելու համար.

- Ամբողջ բրոքերային ենթակառուցվածքի **թվայնացում**՝ նվազագույնի հասցնելով մարդկային ներգրավվածու-թյունը բոլոր գործընթացներում

- Առաջատար** դիրքի պահպանում որպես Հայաստանի լա-վագույն բրոքեր՝ մշտապես բարձրացնելով սպասարկ-ման որակը և ներդնելով նոր գործառույթներ, գործիքներ և թվային ուղիներ

- Բրոքերային ծառայություններից օգտվող **հաճախորդնե-րի թվի ավելացում**՝ օգտատերերի ներգրավվածության և եկամտաբերության աճին զուգահեռ

- Արտարժությային գործառնությունների տեղական շու-կայում առաջատար դիրքի **պահպանում**՝ մրաժամանակ ընդլայնելով պրոդուկտների և ծառայությունների տեսա-կանին՝ հաճախորդների թիվը մշտապես ավելացնելու նպատակով։

- Մարքեթ մեյքինգի որակյալ ծառայությունների **շարու-նակական մատուցում** կորպորատիվ թողարկողներին՝ ավելացնելով մարքեթ մեյքինգի պայմանագրերի շրջանակներում գևանշվող արժեթղթերի ցանկը և պահպանելով մարքեթ մեյքինգի ծառայություններ առաջարկող առաջատար դիրքը հայկական շուկայում։

- Բանկի դիրքի **պահպանում** և բարելավում՝ որպես Ֆի-նանսների նախարարության առաջատար դիլերներից (գործակալներից) մեկը՝ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներին ակտիվ մաս-նակցության և երկրորդային շուկայում ակտիվ առքու-վաճառքի միջոցով։

լով նպատակային ցուցանիշները և արտաքին սպասելիք-ները։ Կարևոր նվաճում էր մեր ծառայություններից օգտ-վող հաճախորդների ընդհանուր բազայի տարեկան աճը՝ 57%-ով և ամսական ակտիվ օգտատերերի թվի աճը՝ 76%-ով, ինչը վկայում է մեր կողմից առաջարկվող ծառայութ-յունների նկատմամբ հաճախորդների աճող հետաքրք-րության և ներգրավվածության մասին։ Առաջընթացը հիմնականում պայմանավորված էր MyInvest հարթակում առաջադեմ գործառույթների ներդրմամբ, ինչը բարելա-վեց հաճախորդների փորձառությունը՝ դարձնելով այն ավելի պարզ և գրավիչ։ Մասնավորապես, մենք ներդրե-ցինք Հայաստանի ֆոնդային բորսային լիովին ավտոմա-տացված շուկայական հասանելիության հնարավորությու-նը, ինչպես նաև Ներդրումային գաղափարները, MyInvest Ակադեմիա թվային ուսուցման կենտրոնը և սկսնակ ներդ-րողների համար նախատեսված նախապես պատրաստ-ված պորտֆելներ։ Մենք իրականացրեցինք մի շարք բարելավումներ, այդ թվում՝ իրական ժամանակում տրա-մադրվող շուկայական տվյալներ, փոփոխելի դիտացան-կեր և ինտերակտիվ մարքեթինգային պատմություններ։

Բացի այդ, կապիտալի շուկայում իրականացված մի քանի կարևոր նախագծեր նպաստեցին Նշված դրական արդ-յունքներին։ Ամերիաբանկը հաջողությամբ իրականացրել է «Ինթելլիջենտ Մենեջմենթ» ՍՊԸ-ի, «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի և «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի պարտատոմսերի տեղաբաշխ-ման փուլերը։ Նշված թողարկումները վկայում են մեր թվային ֆինանսական ծառայությունների տրամադրման հնարավորությունների մասին՝ ֆիզիկական անձ հաճա-խորդներին առաջարկելով անխափան, ավտոմատացված

Ամերիաբանկը անընդմեջ աջակցում է հասարակական և կրթական նախագծերին, որոնք ուղղված են հասարակական և կրթական նախագծերին, որոնք ուղղված են հասարակական և կրթական նախագծերին։

Տեղական արտարժությային և արժեթղթերի շուկանե-րում ակտիվ մասնակցության արդյունքում 2025թ. Ամե-րիաբանկն արժանացել է մի շարք մրցանակների, մաս-նավորապես՝

- FEAS Չեմպիոնների լիգա մրցանակաբաշխության բրոն-զե մրցանակ

Եվրո-ասիական կապիտալի շուկաների միության ամե-նամյա ConFEAS 2025 միջազգային հեղինակավոր համա-ժողովի շրջանակում անցկացվող Չեմպիոնների լիգա մրցանակաբաշխությանն Ամերիաբանկն արժանացել է բրոնզե մրցանակին տեղական բորսայում պարտատոմսե-րի շուկայում իր գործունեության համար՝ «Ֆիքսված եկամ-տի շուկա» անվանակարգում։ Սա առաջին անգամն է, որ հայաստանյան ֆինանսաբանկային ոլորտի որևէ կազմա-կերպություն արժանանում է Չեմպիոնների լիգայի մրցա-նակին՝ լինելով 66 ճանաչված մասնակիցներից մեկը։

Ուսանողների համար ընդլայնված հնարավորությունների ստեղծում և համալսարանական ենթակառուցվածքների զարգացում

Վերջին 20 տարիների ընթացքում ուսանողների թվաքանակը աշխարհում

Ամերիաբանկը շարունակել է ներդրումներ կատարել բարձրագույն կրթության ոլորտում Visa ընկերության հետ համատեղ իրականացվող «Իմ Հայաստան, իմ ապագա» մրցույթի միջոցով, որի հաղթողներին տրվում է կրթա-թոշակ: Ծրագրի նպատակն է բացահայտել և աջակցել նախաձեռնող և առաջադեմ մտածողությամբ ուսանող-ներին, որոնք ունեն զարգացած վերլուծական և ստեղծա-գործական հմտություններ: Ծրագրին կարող են մասնակե-ցել Ամերիաբանկի Visa Student քարտապանները, որոնք ընդունվել են Հայաստանի հավատարմագրված պետա-կան և մասնավոր համալսարաններ (բացառությամբ Նախկինում կրթաթոշակ ստացած ուսանողների): Այս Նա-խաձեռնության միջոցով Բանկը նպաստում է հավասար կրթական հնարավորությունների ստեղծմանը և ապագա առաջնորդների զարգացմանը:

2025 թվականի ընթացքում 160 ուսանող ստացել է 6 ամս-վա կրթաթոշակ, 10 ուսանող մասնակցել է Կալիֆորնիայի համալսարան, Բերկլի կարճաժամկետ կրթական այցին, և 3 ուսանող իրականացրել է իր նախագծերը: Ավելին, 2025 թվականին մեկնարկել է «Իմ Հայաստան, իմ ապագա» երկրորդ արշավը, որի շրջանակներում 2026 թվականին կտրամադրվի 200 կրթաթոշակ:

Հաշվի առնելով համալսարանների առանցքային դերը Հայաստանի Նորարարական ներուժի ձևավորման գոր-ծում 2025 թվականին Ամերիաբանկը առաջնահերթութ-յուն տվեց բարձրագույն կրթության ենթակառուցվածք-ներում երկարաժամկետ ներդրումների իրականացմանը: Հատուկ մշակված աջակցության փաթեթն ուղղված էր յուրաքանչյուր հաստատության որոշակի կարիքներին և նպատակ ուներ ստեղծել ժամանակակից և տեխնոլոգիա-պես հագեցած ակադեմիական միջավայր, որը կխթա-նի դասավանդման, ուսուցման և հետազոտությունների իրականացման զարգացումը: 2025 թվականին «Իմ Հա-յաստան, իմ ապագա» արշավի շրջանակներում աջակ-

երիտասարդների շրջանում թվային կարողությունների շա-րունակական զարգացման նպատակով Ամերիաբանկը հա-մագործակցել է Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադ-րամի հետ՝ իրականացնելով 10 ամիս տևողությամբ AI4All կրթական ծրագիրը 14-ից 18 տարեկան ավելի քան 500 ուսա-նողների համար: Ծրագիրը մասնակիցներին ծանոթացնում է արհեստական բանականությանը և մեքենայական ուսուց-մանը՝ տեսական դասընթացի, գործնական նախագծերի և փորձագետների կողմից վարվող վեբինարների միջոցով միաժամանակ խթանելով հետազոտական հմտությունները, քննադատական մտածողությունը և արհեստական բանա-կանության գործիքների գործնական կիրառումը:

Ամերիաբանկը նաև հանդես է եկել որպես «Գիտության շա-բաթ 2025»-ի Նորարարական գործընկեր: Այն գիտությանը և Նորարարությանը նվիրված վեցօրյա փառատոն է, որի շրջանակներում իրականացվում են տարածաշրջանա-յին միջոցառումներ ամբողջ տարվա ընթացքում: Նախա-ձեռնության նպատակն էր բարձրացնել երիտասարդների մասնագիտական կողմնորոշումը, գիտական նվաճումների վերաբերյալ հանրության իրազեկվածությունը և խրախու-սել գիտության ոլորտում ստեղծարար ներգրավվածութ-յունը: Փառատոնը և դրա շրջանակներում իրականացված միջոցառումները իրենց շուրջ են հավաքել մոտ 20 հազար այցելուի՝ ամրապնդելով Նորարարության և STEM ոլորտում դեռևս փոքր տարիքից ներգրավվելու ազգային մշակույթը:

Զուգահեռաբար, Ամերիաբանկն ակտիվ ջանքեր է ներդ-րել երեխաների և դեռահասների շրջանում ֆինանսական գրագիտության խթանման ուղղությամբ: Դպրոցներում և համայնքային տարածքներում անցկացվող կրթական դա-սընթացների միջոցով Բանկն օգնել է երիտասարդներին զարգացնել փողի կառավարման, ֆինանսական պատաս-խանատվության, նպատակների սահմանման և անվտանգ բանկային գործունեություն իրականացնելու կարևորա-գույն հմտությունները: 2025 թվականին Նշված նախաձեռ-նությունների շրջանակներում իրականացվել է 10 կրթա-կան դասընթաց՝ մոտ 300 դպրոցականի մասնակցությամբ՝ նպաստելով ֆինանսապես տեղեկացված և վստահ սերն-դի ձևավորմանը:

Ամերիաբանկը նաև շարունակել է վարել իր Ameriablog-ը, որն իրենից ներկայացնում է անձնական ֆինանսական մի-ջոցների, կենսակերպի, բիզնեսի և ապագայի պլանավոր-ման թեմաների վերաբերյալ առցանց հարթակ: Բլոգում կատարվող շաբաթական հրապարակումների միջոցով ներկայացվում է գործնական և հեշտ ընկալելի կոնտենտ բյուջետավորման, ինսայդությունների, պատասխանատու վարկավորման և երկարաժամկետ ֆինանսական պլանա-վորման վերաբերյալ այսպիսով նպաստելով տարբեր լսա-րանների ֆինանսական գրագիտության բարելավմանը և տեղեկացված որոշումների կայացմանը:

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Կրթական հնարավորությունների ապահովում բոլորի համար՝ համաշխարհային միտումներին համապատասխան

Ամերիաբանկը շարունակում է իր ներդրումները կրթության ոլորտում

Ամերիաբանկը շարունակում է ներդրումներ իրականացնել ուսուցման ժամանակակից գործիքների և թվային լուծում-ների ուղղությամբ, որոնք թույլ են տալիս բարելավել ուսում-նական միջավայրի որակը՝ կենտրոնանալով բավարար ուշադրության չարժանացող և տարածաշրջանային հա-մայնքների վրա: Կրթությունը դիտարկվել է որպես առանց-քային ոլորտ՝ թե՛ «Իմ Ամերիա, իմ Հայաստան» կորպորատիվ սոցիալական պատասխանատվության արշավի շրջանակ-ներում, և թե՛ դրանից դուրս: STEM կրթության զարգացումը շարունակում է հանդիսանալ Ամերիաբանկի ռազմավարա-կան առաջնահերթություններից մեկը՝ նպատակ ունենալով ապահովել մայրաքաղաքից դուրս երիտասարդների հա-մար բարձրակարգ թվային ուսուցման հնարավորություն-ների հավասար հասանելիությունը: Նպատակային ծրագ-րերի և ռազմավարական գործընկերությունների միջոցով Բանկն աջակցել է թվային գրագիտության, տեխնիկական հմտությունների զարգացման և երիտասարդներին սրըն-թաց փոփոխվող տեխնոլոգիական միջավայրում ապագա կարիերայի համար նախապատրաստելու մի շարք նախա-ձեռնությունների իրականացմանը:

Ընդհանուր առմամբ, Ամերիաբանկի STEM նախաձեռնութ-յուններում տարվա ընթացքում ներգրավվել են մոտ 30 հա-զար երիտասարդներ:

«Վիզուալ Հայաստան» հիմնադրամի հետ համագործակ-ցության շրջանակներում Բանկն աջակցել է սմարթ-Էկ-րանների՝ որպես Brainograh հարթակի օգտագործման Նորարարական դասարանային տեխնոլոգիաների ին-տեգրման նախաձեռնությանը: Brainograh-ը հանդիսա-նում է ինտերակտիվ ուսուցման հարթակ, որը համատե-ղում է գիտական մտածողությունը, տեխնոլոգիաները և ժամանակակից մանկավարժությունը՝ պատմություն, աշ-խարհագրություն և այլ առարկաներ ավելի գրավիչ և մատ-չելի դարձնելու համար: Ամերիաբանկը ֆինանսավորել է վեց սմարթ-Էկրանների տեղադրումը Երևանի, Շիրակի և Վանաձորի դպրոցներում՝ ստեղծելով ինտերակտիվ դա-սավանդման և դինամիկ ուսուցման փորձառություն:

Նորարարական կենտրոնի հետ համատեղ՝ Ամերիաբանկն աջակցել է վեցամսյա կիբերանվտանգության ծրագրին, որն իրականացվել է եռափուլ մոդելով: Նախաձեռնության մեկ-նարկը տրվել է իրազեկման հանդիպումների միջոցով, որոնց ներկա է գտնվել մոտ 600 մասնակից: Հանդիպումներից հետո իրականացվել են 100 ուսանողների համար նախա-տեսված մասնագիտական հմտությունների զարգացման ինտենսիվ դասընթացներ: Դասընթացների ավարտին լա-վագույն մասնակիցներին կտրվի OSCC միջազգայնորեն ճանաչված հավաստագիր: Նշված բազմամակարդակ մո-տեցումը թույլ է տվել ստեղծել խորքային գիտելիքներ՝ ուր-վագծելով բարձր պահանջարկ ունեցող թվային ոլորտում մասնագիտական զարգացման հստակ ուղիները:

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Ամերիաբանկը 2023 թվականին ընդունվել է Գլոբալ 1000-ի կազմի մեջ

Դասական մշակույթի խթանում

2025 թվականին Ամերիաբանկն աջակցել է մեծ թվով մշակույթային հաստատությունների, ինչպես նաև նախաձեռնությունների, որոնք ուղղված էին դասական արվեստի խթանմանը՝ հատկապես երիտասարդ լսարանի շրջանում: Նշված նախաձեռնությունները թույլ են տվել վերաարժևորել ժամանակակից հայ դասական արվեստը: Մշակույթային ոլորտում բանկի ներգրավվածությունն ուղղված էր դասական մշակույթային միջոցառումների հասանելիության ընդլայնմանը, հանրային իրազեկվածության բարձրացմանն ու երիտասարդների և սոցիալապես խոցելի խմբերի համար արվեստի հետ շփվելու արժեքավոր հնարավորությունների ստեղծմանը:

Մշակույթի ոլորտում ինստիտուցիոնալ աջակցության իր հանձնառության շրջանակներում Ամերիաբանկը երկարաժամկետ գործընկերային հարաբերություններ է ձևավորել Հայաստանի պետական ֆիլիհարմոնիայի հետ: Ինստիտուցիոնալ աջակցությունից զատ՝ Նշված համագործակցության արդյունքում Ամերիաբանկի հաճախորդները կարող են ֆիլիհարմոնիայի համերգների և միջոցառումների տոմսեր ձեռք բերել զեղչված գներով՝ MyAmeria հարթակում հասանելի խմբային տոմսերի և բաժանորդագրության հատուկ մշակված տարբերակների միջոցով: Երեխաներին և ուսանողներին առաջարկվում են լրացուցիչ զեղչեր:

Առողջ միջավայրի խթանում և պայքար կլիմայի փոփոխության դեմ

2025 թվականին Ամերիաբանկը համագործակցել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ՝ Հայաստանի սահմանամերձ շրջաններում էներգետիկ կայունության ամրապնդմանն ուղղված 2024 թվականին կնքված նախագծի իրականացման նպատակով: Նախաձեռնությունը խթանել է գյուղական համայնքներում արևային ջրատաքացուցիչների տեղադրումը, ինչպես նաև արևային ֆոտովոլտային կայանների զարգացումը՝ նպաստելով ավելի մաքուր էներգիայի օգտագործմանը և տեղական ենթակառուցվածքների կայունության բարձրացմանը:

«Հայաստանի բանկերի միության» կողմից ղեկավարվող համատեղ նախաձեռնության շրջանակներում 2025 թվականին Ամերիաբանկը միացել է «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ի

Ամերիաբանկը նաև հովանավորել է Սյունիքում անցկացվող Կապանի միջազգային երաժշտական փառատոնը: Այն խոշոր մշակութային միջոցառում է, որը միավորում է Հայաստանի և արտերկրի ականավոր երաժիշտների: Փառատոնի շրջանակներում իրականացվել են համերգներ, վարպետաց դասեր, արվեստագետների հետ զրույցներ և հանրային քննարկումներ՝ զգալիորեն հարստացնելով տարածաշրջանի մշակութային կյանքը և ընդլայնելով մայրաքաղաքից դուրս բարձրորակ դասական արվեստի հասանելիությունը:

Բացի վերոնշյալ գործընկերություններից՝ Ամերիաբանկը նաև ֆինանսավորել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի և «Երաժշտություն ապագայի համար» հիմնադրամի կողմից իրականացվող կրթական մշակութային ծրագրերը՝ խթանելով դասական երաժշտության հանդեպ սերը երիտասարդ սերունդների շրջանում և միաժամանակ բացահայտելով և ստեղծելով Նոր հնարավորություններ սկսնակ տաղանդների համար:


Ընդհանուր առմամբ, Ամերիաբանկի աջակցությամբ իրականացված մշակութային նախաձեռնությունները տարվա ընթացքում ունեցել են ավելի քան 13 հազար մասնակից:

Կանաչ պորտֆել և կանաչ պարտատոմսեր

Հավատարիմ մնալով մեր պարտավորությանը՝ օգնել հասարակությանը անցնել ռեսուրսների արդյունավետ, ցածր ածխածնային և էկոլոգիապես կայուն տնտեսությանը՝ մենք շարունակում ենք նպաստել կայուն լուծումների մշակմանը՝ համապատասխան ծառայությունների և նորարարական պրոդուկտների ֆինանսավորման միջոցով:

Կանաչ ֆինանսավորման նախագծերի շրջանակներում մենք ամուր գործընկերություն ենք ձևավորել ՄՖՀ-ների հետ: Ընդհանուր առմամբ 2009 թ-ից ի վեր մենք ՄՖՀ-ներից և սոցիալական ներդրողներից ներգրավել և էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ոլորտների ֆինանսավորմանն ենք ուղղել ավելի քան 250 մլն ԱՄՆ դոլար: Բանկի գործընկեր միջազգային ֆինանսական հաստատությունների թվում են Նիդերլանդների զարգացման բանկը (FMO), responsAbility Investments AG-ն, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ԿԶԵԲ), Ֆրանսիական զարգացման ֆինանսական գործակալությունը (PROPARCO), Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Ավստրիական զարգացման բանկը (OeEB), Գերմանական ներդրումային կորպորացիան (DEG), Կլիմայական գործընկերության համաշխարհային հիմնադրամը (GCPF) և ուրիշներ:

Մեր կանաչ պարտատոմսերից ստացված միջոցների տեղաբաշխում, 2025 տարեվերջի դրությամբ.



- Արևային կայաններ | **70%**
- ՓՀԷԿ | **16%**
- Էլեկտրական տրանսպորտային միջոցներ | **13%**
- Էներգաարդյունավետություն | **1%**

Հնարավոր դարձավ խուսափել ընդհանուր առմամբ 122,150 տոննա ածխաթթու գազի արտանետումներից, իսկ մաքուր էներգիայի արտադրության ընդհանուր ծավալը կազմեց 292 միլիոն Կվտժ:

Կայուն ապագայի տեսլականը

Բիզնեսի պատասխանատու վարման շրջանակներում մեր բոլոր ջանքերն ի վերջո ուղղված են ՄԱԿի Կայուն զարգացման Նպատակների (ԿՀՆ) իրագործմանը՝ կենտրոնանալով այն ԿՀՆների վրա, որոնք առավել համահունչ են մեր գործունեությանը:



ԿՀՆ 3. Առողջություն և բարեկեցություն

Մեր ներդրումը.

- Բժշկական ապահովագրության համապարփակ փաթեթ ողջ անձնակազմի համար
- Անձնակազմի շրջանում առողջ ապրելակերպի խթանում՝ տարբեր սպորտային մրցաշարերին մասնակցության խրախուսման և սպորտային ակումբների բաժանորդագրության կորպորատիվ փաթեթների միջոցով
- Աջակցություն ծանր հիվանդություններ և երկարատև առողջական խնդիրներ ունեցող երեխաներին մեր կորպորատիվ բարեգործական ծրագրերի շրջանակներում
- Աջակցություն առողջապահական խնդիրների լուծմանը ենթակառուցվածքների զարգացման միջոցով

ԿՀՆ 4. Որակյալ կրթություն

Մեր ներդրումը.

- Շարունակական կրթության և զարգացման հնարավորություններ աշխատակիցների համար
- Ֆինանսական կրթություն հասարակության առավել լայն շերտերի համար
- Աջակցություն տաղանդավոր երիտասարդներին՝ կրթաթոշակների տրամադրման միջոցով
- Երիտասարդների համար միջազգային լավագույն փորձին ծանոթանալու հնարավորությունների ստեղծում

ԿՀՆ 7. Մառչելի և մաքուր էներգիա

Մեր ներդրումը.

- Վերականգնվող էներգետիկայի համակարգերի ֆինանսավորում և համայնքների համար մաքուր էլեկտրականությանը հասանելիության ընդլայնում

ԿՀՆ 8. Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ

Մեր ներդրումը.

- Փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորում
- Զարգացման ներուժ ունեցող ոլորտների և նախագծերի ֆինանսավորում
- Վերականգնվող էներգետիկայի ոլորտում լայնածավալ նախագծերի ֆինանսավորում մեր «Կանաչ» ռազմավարության շրջանակներում

ԿՀՆ 9. Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածքներ

Մեր ներդրումը.

- Նորարարություն և ֆինանսական տեխնոլոգիաների զարգացում թվային էկոհամակարգերի միջոցով
- Ներդրումներ SS ենթակառուցվածքում հաճախորդների համար սպասարկման լավագույն փորձառություն ապահովելու համար
- Աջակցություն Հայաստանում տեխնոլոգիական համայնքի աճին և զարգացմանը

ԿՀՆ 11. Կայուն քաղաքներ և համայնքներ

Մեր ներդրումը.

- Ներդրումներ «Կանաչ» ակտիվների պորտֆելում վերականգնվող էներգիայի, կայուն տրանսպորտի և շենքերի, թափոնների կառավարման և այլ ոլորտների ֆինանսավորման նպատակով:

ԿՀՆ 12. Պատասխանատու սպառում և արտադրություն

Մեր ներդրումը.

- Աղբի տեսակավորում և վերամշակում
- Էներգիայի, ջրի և թղթի չափավոր սպառում

ԿՀՆ 13. Գործողություն ի նպաստ կլիմայի

Մեր ներդրումը.

- Ներդրումներ ջերմոցային գազերի կրճատմանը նպաստող ծրագրերում



**ՈՒՍԿԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՅԿԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
pp. 58/76

ՀԱՅԿԵՏՎՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԻ ԵՎ ԼՈՒԿՈՒՄԸ

ՀԱՅԿԵՏՎՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԻ ԵՎ ԼՈՒԿՈՒՄԸ

ՀԱՅԿԵՏՎՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԻ ԵՎ ԼՈՒԿՈՒՄԸ

ՀԱՅԿԵՏՎՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԻ ԵՎ ԼՈՒԿՈՒՄԸ

Ռիսկերի կառավարման նպատակները և սկզբունքները

Ամերիաբանկի ռիսկերի կառավարման մոդելը հիմնվում է ընդհանուր սկզբունքների, ուժեղ մշակույթի, կառավարման կուռ կառուցվածքի և առաջադեմ գործընթացների ու գործիքների վրա:

Ամերիաբանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը սահմանում է.

- Ռիսկերի կառավարման նպատակները և սկզբունքները
- Ռիսկի ախորժակի շրջանակները
- Բանկի որոշումներ ընդունող մարմինների և պաշտոնատար անձանց իրավասությունների բաշխումը՝ ռիսկ պարունակող գործառնությունների իրականացման մասով
- Գործառնությունների իրականացման հիմնական ուղեկիշներն ու չափանիշները
- Կառավարման կառուցվածքը, որն ապահովում է արդյունավետ վերահսկողություն ռիսկի ախորժակի շրջանակներում
- Այլ դրույթներ

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Բանկի Տնօրենների խորհրդի, Տնօրինության, Խորհրդին կից կոմիտեների, ղեկավարների և այլ աշխատակիցների կողմից՝ սկսած բանկի ռազմավարության մշակումից, ներառյալ բանկի գործունեության բոլոր ոլորտները:

Ամերիաբանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը Բանկի զարգացման ռազմավարության անբաժանելի մասն է, որը և հիմք է հանդիսանում Բանկի գործառնություններին ներհատուկ ռիսկերը կառավարելու համար: Տնօրենների խորհրդի կողմից հաստատվող քաղաքականությունը սահմանում է Բանկի գործունեության արդյունավետ կազմակերպման հիմքում ընկած սկզբունքները, որոնց նպատակն է՝ նվազագույնի հասցնել հնարավոր անբարենպաստ ազդեցությունը: Քաղաքականությունը պարբերաբար վերանայվում է՝ կախված Բանկի ռազմավարությունից, բիզնեսի բարդության աստիճանից և առկա ու կանխատեսվող մակրոտնտեսական միջավայրից:

Ընդունված կառավարման տեղեկատվական համակարգի համաձայն Բանկի Ռիսկերի կառավարման դեպարտամենտն ամփսը, ռեամայակը և տարին մեկ պարբերաբար իրականացնում է ռիսկերի գնահատում և արդյունքները ներկայացնում Բանկի Տնօրինությանը կամ մասնագիտացված կոմիտեներին (վարկային, ակտիվների և պասիվների կառավարման և այլն), ինչպես նաև Բանկի Տնօրենների խորհրդին ու ՀՀ Կենտրոնական բանկին:

Բանկում ռիսկերի կառավարման հիմնական նպատակներն են՝

- Ձևավորել բանկային գործիքների որակյալ՝ պորտֆելներ՝ Բանկի համար նվազագույն ռիսկերով առավելագույն արժեքի ստեղծմամբ
- Կանխատեսելի, չափելի և կառավարելի դարձնել բոլոր հնարավոր կորուստները և ռիսկերը
- Ռիսկի բոլոր գործակիցները պահպանել ընդունելի սահմաններում, ապահովել կայունության բարձր պաշար (բուֆեր)
- Ձարգացնել ռիսկի ախորժակի կառուցվածքը՝ նպաստելով Բանկի ռազմավարական նպատակների իրագործմանը

Ռիսկերի կառավարման նպատակներին հասնելու համար Բանկն իրականացնում է հետևյալ հիմնական գործառնությունները.

- Բանկի գործունեության ընթացքում առաջացող հնարավոր ռիսկերի բացահայտում
- Ռիսկերի առանձին տեսակների վրա ազդող գործոնների բացահայտում
- Բացահայտված առանձին ռիսկերի որակական և քանակական գնահատում
- Ռիսկերի պարամետրերի համակարգի սահմանում և ռիսկերի ընդունելի սահմանաչափերի հաստատում
- Ռիսկերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հավաքագրում և ներկայացում ղեկավար մարմիններին
- Ռիսկերի միասնական ներքին հսկողության և մոնիտորինգի համակարգերի հաստատում և իրագործում
- Ռիսկերի առանձին տեսակների կառավարման համար Բանկի Տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի անդամների պարտականությունների և պատասխանատվության հստակ սահմանում
- Ռիսկերի կանխատեսման, գնահատման և նվազեցման համապատասխան միջոցառումների և մեթոդների մշակում և իրականացման վերահսկում

Ռիսկերը ժամանակին բացահայտելուն նպաստող կարևոր պայմաններն են՝ Բանկի ներքին հիմնական տնտեսական նորմատիվների և ռիսկերի սահմանաչափերի պահպանման պարբերական մոնիտորինգը, հաշվեկշռի փոփոխությունների շարունակական վերլուծությունը, ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների պահպանումը, պատմական տվյալների վրա հիմնված, կանխատեսվող և սթրեսթեստավորման արդյունքում արվող հաշվարկները բոլոր պորտֆելների և ռիսկերի տեսակների գծով, ներքին և արտաքին մակրոտնտեսական միջավայրի շարունակական մոնիտորինգը, մոդելների վրա հիմնված գնահատումը, Բանկում ռիսկերի առանձին տեսակների բացահայտումը և կառավարումը կանոնակարգող ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի առկայությունը, համապատասխան մեթոդաբանությունների ու հսկողական մեխանիզմների հստակ սահմանումը:


Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- Բանկում ներդրվել է ռիսկերի կառավարման միասնական համակարգ, որը Բանկի ռազմավարական կառավարման հիմնական տարրերից մեկն է:
- Ռիսկերի կառավարումն ունի կանխարգելիչ դեր, մշտական և շարունակական բնույթ: Ռիսկերը բացահայտվում ու գնահատվում են Բանկի բոլոր գործընթացներում, և դրանց պատշաճ կառավարման համար մշտապես ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ:
- Բանկի ռիսկերի կառավարման համակարգը հիմնվում է առավել ճշգրիտ ռիսկ/եկամուտ հարաբերակցության վրա: Բանկը ռիսկ ձևավորող գործարքներից ընտրում է նրանց, որոնց ռիսկերը կարող է գնահատել և արդյունավետ կերպով կառավարել:

- Բանկը ձգտում է ճանաչել հաճախորդներին և հասկանալ նրանց ֆինանսական կարիքները: Բանկը խուսափում է հաճախորդների հետ համագործակցելուց, եթե չունի պատշաճ տեղեկություններ նրանց ֆինանսական վիճակի մասին: Հաճախորդների հետ աշխատելիս՝ Բանկը հետևում է լավագույն փորձին՝ կիրառելով KYC (Know Your Customer՝ ճանաչիր քո հաճախորդին) սկզբունքները:
- Էական ռիսկ առաջացնող գործարքները հաստատվում են «չորս աչքի» սկզբունքով՝ որոշ դեպքերում նաև ռիսկերի կառավարման անկախ մասնագետների ներգրավմամբ:
- Բանկի բոլոր գործիքների և գործընթացների համար սահմանվում և համապատասխան կարգերով ամրագրվում են իրավասությունների և պատասխանատվության հստակ շրջանակները (ներառյալ հաստատումների սահմանաչափերը): Յուրաքանչյուր գործընթացի համար սահմանվում և փաստաթղթերով ամրագրվում են ներքին հսկողության մեխանիզմները:
- Ցանկացած շեղում բանկի քաղաքականություններից և ներքին իրավական ակտերից պետք է հաստատվի տվյալ քաղաքականությունը կամ իրավական ակտը հաստատող կամ համապատասխան լիազորություն ունեցող այլ մարմնի կողմից (Տնօրինություն, Տնօրենների խորհուրդ):
- Բանկի գործունեության յուրաքանչյուր ուղղություն պատասխանատվություն է կրում ընթացիկ ռիսկերի բացահայտման և պարբերական մոնիտորինգի համար:
- Բանկում մշակվել և ներդրվել են կառավարչական տեղեկատվական համակարգեր, որոնք թույլ են տալիս առավել արդյունավետ կերպով կառավարել պորտֆելները:
- Յուրաքանչյուր բանկային գործիքի մասով ռիսկերի կառավարման մոտեցումները (հաստատումների սահմանաչափեր, ընդունելի պարամետրեր, պորտֆելների ծավալ, թույլատրելի շեղումներ և այլն) սահմանվում են համապատասխան գործընթաց կանոնակարգող ներքին իրավական ակտերով և/կամ քաղաքականություններով և հաստատվում Ռիսկերի կառավարման դեպարտամենտի կողմից:
- Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը պարբերաբար գնահատվում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից:
- Բանկի գործունեությունը պարբերաբար ուսումնասիրվում և գնահատվում է կառավարման մարմինների կողմից:


Բանկի ռիսկերի կառավարման համակարգը բաղկացած է հետևյալ տարրերից.

- **Ռիսկի ախորժակ.** Տնօրենների խորհուրդը սահմանում է ընդունելի կորուստների/ռիսկի չափը յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար՝ ելնելով բանկի նպատակներից և ակնկալվող մակրոտնտեսական զարգացումներից: Ռիսկի ախորժակը բաշխվում է ըստ ռիսկերի բոլոր տեսակների՝ վարկային, շուկայական և գործառնական: Ըստ յուրաքանչյուր ռիսկին հատկացված ախորժակի՝ սահմանվում են ռիսկերի բոլոր պարամետրերը և սահմանափակումները:
- **Չափանիշներ և հաշվետվողականություն.** կառուցվածքի այս տարրը ներառում է գործիքների հաստատման չափանիշների, ռիսկերի դասակարգման, յուրաքանչյուր բանկային գործիքին բնորոշ չափանիշների և կառավարչական հաշվետվությունների չափանիշների սահմանումը:
- **Սահմանաչափեր և կանոններ.** բանկի բոլոր ֆինանսական գործառնությունների համար սահմանվում են հաստատումների, պորտֆելի սահմանաչափեր և համապատասխան կանոններ:
- **Ներդրումների ուղեցույց և ռազմավարություն.** սահմանվում են բանկի ներդրումային գործունեության ռազմավարությունները, չափանիշները և շեղումների թույլատրելի չափերը: Նշված ուղեցույցները հիմք են հանդիսանում Բանկի հեջավորման, ակտիվների ու պարտավորությունների կառավարման և այլ քաղաքականությունների համար:
- **Ռիսկ/եկամուտ հարաբերակցություն.** Բանկի ցանկացած ֆինանսական գործիքին վերաբերող ներդրումային բոլոր որոշումները հիմնվում են ռիսկ/եկամուտ մոտեցման վրա: Սահմանվել են աշխատակիցների խրախուսման համապատասխան մեխանիզմներ:




Ռիսկերի կառավարման համակարգ


Ստորև ներկայացված է Բանկի ռիսկերի կառավարման համակարգի ընդհանուր կառուցվածքը: Այն ունի լավ մշակված կառուցվածք, որը նախատեսում է արտաքին և ներքին աղբյուրներից առաջացող ռիսկերից պաշտպանվելու մի քանի մակարդակ:




Վարկային ռիսկի կառավարման հոսքագիր



Շուկայական ռիսկի կառավարման հոսքագիր



Գործառնական ռիսկի կառավարման հոսքագիր




Ռիսկերի գործընթացների կազմակերպում և կառավարում

Ռիսկերի կառավարումը Բանկում իրականացվում է բոլոր մակարդակներում և գործառնությունում՝ արտացոլելով ռիսկերի կառավարման և ռիսկ ստանձնելու իրավասությունների հստակ բաշխումը, որպես հիմք ընդունելով Բանկի սահմանված ռիսկի ախորժակը:

Տնօրենների խորհուրդը հաստատում է Բանկի ռազմավարությունը, ինչպես նաև վերջինիս իրականացման համար անհրաժեշտ ռիսկերի կառավարման, վարկային և այլ կարևոր քաղաքականություններն ու ներքին իրավական ակտերը: Տնօրենների խորհուրդը սահմանում է Բանկի «ռիսկերի ախորժակը», ռիսկերի ընդունելի չափանիշները և սահմանաչափերը, որոնք ներկայացվում են «Ռիսկերի

կառավարման պարամետրերի և ներքին նորմատիվների հրահանգի» մեջ: Տնօրենների խորհուրդը վերահսկում է ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը, Բանկի ստանձնած ռիսկերի մակարդակը, դրանց համապատասխանությունը հաստատված ռիսկի ախորժակին, հաստատում է այն գործարքները, որոնք գերազանցում են Տնօրինության կողմից հաստատման սահմանաչափերը:

Խորհրդին կից գործող կոմիտեներն աջակցում են Տնօրենների խորհրդին՝ տրամադրելով անկախ կարծիք և կատարելով հարցերի մանրամասն քննարկում՝ նախքան դրանց դիտարկումը Խորհրդի կողմից:



Ռիսկերի կոմիտեն մասնագիտացած մարմին է՝ Խորհրդի մակարդակով ռիսկերի կառավարման մոնիտորինգն ու վերահսկումն իրականացնելու համար: Ռիսկերի կոմիտեի նպատակն է՝ նպաստել Բանկում ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ կիրառմանը և շարունակական զարգացմանը՝ ռիսկերի կառավարման հարցերի շուրջ Տնօրենների խորհրդի և գործադիր մարմինների միջև արդյունավետ համագործակցություն, ռիսկերի կառավարման հարցերի շուրջ որոշումների կայացման արագություն և ճկունություն ապահովելու միջոցով:

Ռիսկերի կոմիտեի հիմնական խնդիրն է վերահսկողության ապահովումը՝ հետևյալ ոլորտներում.

- Բանկի ռիսկերի կառավարման համակարգը և մշակույթը, վերջինիս ինտեգրումը կառավարման ընդհանուր համակարգին
- Բանկի վարկային, շուկայական, գործառնական, ռազմավարական, իրացվելիության և այլ էական ռիսկերի կառավարման/գնահատման քաղաքականությունները, այլ ներքին իրավական ակտերը և դրանց կիրառումը
- Բանկի ռիսկի դիրքը և ռիսկի չափը, ռիսկի գործոնները
- Բանկի կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշները

Գործադիր մարմինը, մասնավորապես՝ Տնօրինության նախագահը/խավոր տնօրենը, Տնօրինությունը և դրա անդամները ռիսկեր են ստանձնում Խորհրդի կողմից հաստատված քաղաքականության շրջանակներում և իրականացնում դրանց ընթացիկ կառավարումը, համակարգում Բանկի բիզնեսուղղությունների գործունեությունը, իրականացնում ռիսկերի կառավարում՝ խորհրդի կողմից սահմանված ռիսկերի կառավարման պարամետրերի ներքո: Տնօրինության նախագահը/խավոր տնօրենը/Գլխավոր տնօրենը և Տնօրինությունը հաշվետու են Տնօրենների խորհրդին: Տնօրինությունը կարող է վերոնշյալ լիազորությունները փոխանցել մասնագիտացված կոլեգիալ մարմիններին՝ կոմիտեներին (ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե, վարկային կոմիտե և այլն)՝ Բանկի հիմնական գործունեությունից բխող ռիսկերը կառավարելու նպատակով:

Մեծ վարկային կոմիտե (ՄՎԿ)

Մեծ վարկային կոմիտեի գործունեության հիմնական նպատակը Բանկի վարկային քաղաքականության իրականացումն է և վարկային պորտֆելի ձևավորումը ապահովելով վարկային ռիսկի ընդունելի մակարդակը: Մեծ վարկային կոմիտեն որոշումներ է կայացնում Բանկի ընդհանուր կապիտալի միջև 10% չափով ղեկավարվելով համապատասխան ստորաբաժանումների, Ռիսկերի կառավարման ղեկավարումներում և անվտանգության ծառայության եզրակացություններով: Հաստատված պայմաններից շեղումով վարկերը նույնպես ենթակա են քննարկման Մեծ վարկային կոմիտեի կողմից:

Փոքր վարկային կոմիտե (ՓՎԿ)

Փոքր վարկային կոմիտեն ունի նույն նպատակները, ինչ Մեծ վարկային կոմիտեն, սակայն որոշումների կայացման սահմանաչափերն ավելի ցածր են: Կոմիտեի քննարկմանը և հաստատմանն են ներկայացվում մանրածախ և ՓՄՁ վարկերը: Փոքր վարկային կոմիտեն իրավասու չէ քննարկել կամ հաստատել վարկը, եթե պատասխանատու ստորաբաժանումներից թեկուզ մեկի եզրակացությունը բացասական է:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե (ԱՊԿԿ)

Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն բանկում մշտապես գործող կոլեգիալ մարմին է, որն ունի որոշումներ կայացնելու իրավասություն ակտիվների և պարտավորությունների կառավարման քաղաքականության շրջանակներում: Կոմիտեի նպատակն է Բանկի ակտիվների և պարտավորությունների արդյունավետ, փոխհամաձայնեցված կառավարման համար բավարար նախադրյալների ստեղծումը, որը հնարավորություն կտա ապահովել առավելագույն շահութաբերություն՝ իրացվելիության, ռիսկի ախորժակի և կապիտալի համարժեքության ընդունելի սահմաններում: Կոմիտեի իրավասությունների շրջանակը ներառում է նաև ներդրումային քաղաքականության, տոկոսադրույքների, արտարժույթի, իրացվելիության, կապիտալի համարժեքության և ռիսկի պարամետրերի կառավարման խնդիրների քննարկումը և հաստատումը:

Տեղեկությունների բացահայտման կոմիտե

Տեղեկությունների բացահայտման կոմիտեի նպատակն է ապահովել Բանկի տեղեկությունների բացահայտման քաղաքականության պահպանումը և լիարժեք ու ժամանակին հասանելիություն Բանկի մասին հետևողական և վստահելի տեղեկատվությանը բոլոր շահագրգիռ անձանց համար: Տեղեկությունների բացահայտման կոմիտեն ուսումնասիրում է տեղեկատվությունը և որոշում, թե արդյոք այն պետք է դասակարգվի որպես էական՝ ընդունված կանոնների և չափանիշների համաձայն, հաստատում և վերանայում է Բանկի լիազորված խոսակների ցուցակը, գնահատում է ներքին տեղեկությունների բացահայտումը հետաձգելու հնարավորությունը, կայացնում է որոշումներ հետաձգման վերաբերյալ՝ օրենսդրությամբ սահմանված շրջանակներում:



Վարկավորման հաստատված պայմաններից շեղումները և սահմանափակումներն են ըստ սահմանաչափերի (կախված վարկի տեսակից և գումարից), իսկ որոշումները կայացվում են քվեարկության հիման վրա (պարզ մեծամասնություն, ճշգրտ մեծամասնություն): Կախված մակրոտնտեսական միջավայրից՝ Տնօրինությունն ընդունում է շեղումներով վարկերի հաստատման 4 հնարավոր ռեժիմներից մեկը: Մակրոտնտեսական ռիսկային զարգացումների դեպքում որոշումների ընդունման սահմանաչափերը խստացվում են:

Ռիսկերի կառավարման ղեկավարումների պատասխանատվության շրջանակը բավականին լայն է: Այն ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- Ռիսկերի կառավարման քաղաքականության ու կառուցվածքի մշակում
- Բիզնես գործընթացների մակարդակով ռիսկերի կառավարման (ներքին հսկողության) համակարգի ներդրում
- Նոր ներդրվող գործիքների գծով ռիսկերի կառավարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում
- Ռիսկերի կառավարման վերաբերող որոշումների կայացման համար անհրաժեշտ մաթեմատիկական մոդելների մշակում, իրագործում և պահպանում
- Հաստատված սահմանաչափերի ներքո բանկային գործարքների վերաբերյալ եզրակացությունների տրամադրում
- Ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվությունների մշակում և ներկայացում Բանկի ղեկավարությանը
- Ֆինանսական վերականգնման ծրագրի մշակում և բարելավում՝ ուղղված ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում Բանկի ընթացակարգերի օպիտմալացմանը
- Բանկի անձնակազմի իրագրելում և ուսուցում ռիսկերի կառավարման վերաբերյալ

Կոմիտեն նաև գնահատում է Բանկի վերաբերյալ շուկայում շրջանառվող էական լուրերը և անեկոսենտը և որոշումներ կայացնում դրանց արձագանքելու նպատակահարմարության ու ձևի վերաբերյալ, Բանկի ներքին իրավական ակտերով և օրենսդրությամբ սահմանված շրջանակներում հաստատում է բացահայտման ենթակա տեղեկությունները (հայտարարություններ, հաղորդագրություններ և այլն):

Վարկավորման վերաբերյալ որոշումների կայացման իրավասությունները բաշխվում են տարբեր մարմինների միջև, որոնց թվում են ինչպես կառավարման կոլեգիալ մարմինները, այնպես էլ անհատները: Սահմանաչափերը որոշվում են ըստ ռիսկի ախորժակի բաշխման ընդհանուր հայեցակարգի և պարբերաբար վերանայվում:

Ներքին աուդիտի ստորաբաժանումը գնահատում է Բանկում ներդրված ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը, դրա պահանջների և չափանիշների պահպանումը Բանկի ստորաբաժանումների կողմից, հանդես է գալիս առաջարկներով՝ համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար, բացահայտված ռիսկերի վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնում Բանկի ղեկավարներին և Տնօրենների խորհրդին:

Ռիսկերի կառավարման հայեցակարգի արդյունավետությունն ապահովելու համար Բանկում ներդրվել է կառավարչական տեղեկատվության համակարգ, որն ապահովում է տեղեկատվության ուղղահայաց և հորիզոնական հոսքը որոշումների կայացման համար:

Կառավարչական տեղեկատվական համակարգը Բանկի ղեկավարությանը ներկայացնում է առաջնորդող, համընկնող և հետևող ցուցանիշներ Բանկի վարկային և այլ պորտֆելների վերաբերյալ: Համակարգի ներքո Տնօրենների խորհուրդը և Տնօրինությունն ստանում են հաշվետվություններ ի հայտ եկող ռիսկերի և դրանց հնարավոր հետևանքների մասին: Մասնավորապես, տարբեր եղանակներով Բանկի ղեկավարներին ներկայացվում են հետևյալ տեղեկություններն առանձին գործիքների մասով՝

- Բանկի պորտֆելների/ներդրումների կառուցվածքը
- Պորտֆելների եկամտաբերությունը և ժամետային կառուցվածքը
- ժամետանց ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը
- Գրավարդված ակտիվների և ընդունված գրավների կառուցվածքը
- Խնդրահարույց վարկերի և կենտրոնացումների վերաբերյալ տեղեկատվություն
- Դեֆոլտի ենթարկված վարկերի վերադարձելիությունը
- Այլ տեղեկատվություն արդյունավետության վերաբերյալ

Ռիսկի ախորժակ

Ռիսկի ախորժակը ռիսկի այն ընդունելի մակարդակն է, որը Բանկը պատրաստ է ստանձնել իր կարճաժամե և միջ-նաժամե նպատակներին հասնելու համար: Վնասների առումով ռիսկի ախորժակը հնարավոր վնասների/ռիսկի չափն է, որը Բանկը պատրաստ է կրել կանխատեսվող միկրոտնտեսական միջավայրում իր կարճաժամե և միջնաժամե նպատակներն ու ծրագրերն իրագործելու համար: Գոյություն ունեն ռազմավարական ռիսկի ախորժակ (ռիսկի աստիճան միջնաժամե տիպի երկարաժամե տնտեսական ցիկլերի համար) և ընթացիկ (գործառնական) ռիսկի ախորժակ:

Ռազմավարական ռիսկի ախորժակը ռիսկի առավելագույն չափն է, որը Բանկը կարող է ստանձնել 3ամյա կտրվածքով իր նպատակներին հասնելու համար «սուր լարվածության» մակրոտնտեսական սցենարի ներքո, իսկ գործառնական ռիսկի ախորժակը ռիսկի առավելագույն չափն է, որը Բանկը կարող է ստանձնել կանխատեսված մակրո սցենարի ներքո 1 տարվա կտրվածքով իր նպատակների իրականացման համար: Թե՛ ռազմավարական, թե՛ գործառնական ռիսկի ախորժակը որոշվում է մեկ տարվա կտրվածքով առաջացող ռիսկերի համար:

Ռազմավարական և գործառնական ռիսկի ախորժակները սահմանվում են Բանկի հիմնական բիզնես ուղղությունների՝ կորպորատիվ վարկավորման, մանրածախ վարկավորման և առևտրային գործառնությունների համար: Ռիսկի տեսակներն են.



- Վարկային ռիսկի ախորժակն ընդհանուր հաստատված ռիսկի ախորժակն է՝ կորպորատիվ և մանրածախ վարկավորման գծով:
- Շուկայական ռիսկի ախորժակն առևտրային գործառնությունների համար հաստատված ռիսկի ախորժակի (արտարժույթային ռիսկ, արժեթղթերի/կոնտրագենտի ռիսկ) և Բանկի հաշվեկշռում նշված ընթացիկ տոկոսադրույքի համար նախատեսված ռիսկի ախորժակի հանրագումարն է:
- Գործառնական և SS ռիսկերի ախորժակը ներկայացնում է գործառնական, տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկատվական անվտանգության և կիբեր ռիսկերի համար հաստատված ընդհանուր ռիսկի ախորժակը, որը բխում է անհամապատասխան կամ ձախողված ներքին գործընթացներից, մարդկային գործոններից, համակարգերից և ենթակառուցվածքներից, տեղեկատվական անվտանգության միջադեպերից, կիբեր սպառնալիքներից, ինչպես նաև արտաքին իրադարձություններից:

Բանկի ռազմավարական ռիսկի ախորժակը չի կարող գերազանցել Բանկի համար ընդունելի ռիսկի աստիճանը կամ նախատեսել կարգավորող մարմնի կողմից սահմանված նորմատիվների որևէ խախտում: Բանկի ռազմավարական ռիսկի ախորժակը հաստատվում/վերանայվում է Տնօրենների խորհրդի կողմից առնվազն տարին մեկ անգամ:

Ամեն տարի Բանկի Տնօրենների խորհուրդը հաստատում է ռիսկի ախորժակը: Ռիսկի ախորժակի սահմանաչափերի միջակայքերը պայմանավորված են մակրոտնտեսական միջավայրի և շուկայի սպասումներով, որոնք ձևավորվում են Բանկի ռազմավարության քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով Բանկի համապատասխան պարամետրերի պլանավորված ցուցանիշները և սթրատեգիաների արժեքները:

Ռիսկի ախորժակը կառավարում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն կամ Մեծ վարկային կոմիտեն, ինչպես նաև Տնօրենների խորհուրդը՝ սահմանաչափի գերազանցման դեպքում:

Բանկի ռիսկի ախորժակ



Հիմական ռիսկերը և ռիսկերի կառուցվածքը

«Ռիսկ/եկամուտ» մոտեցման և ռիսկի ւխորժակի բաշխման շրջանակներում Բանկը կիրառում է ռիսկի գնահատման և նվազեցման տարբեր գործիքներ և մեթոդներ։ Բանկի ռիսկերը դասակարգվում են որպես վարկային, շուկայական, գործառնական և այլ ռիսկեր։

Վարկային ռիսկ

Բանկը ենթարկվում է վարկային ռիսկի։ Դա ֆինանսական կորստի ռիսկն է, որն առաջանում է, երբ Բանկի կողմից ֆի-նանսավորվող հաճախորդը կամ կոնտրագենտը չի կատա-րում իր պարտավորությունները կամ տեղի է ունենում նրա վարկունակության անկում։ Դա կոնտրագենտի, թողարկողի և երկրի ռիսկերն են, որոնք առաջացնում են ազդեցության և կապիտալի սպառման ամենամեծ աղբյուրը, քանի որ Բանկը հիմնականում ներգրավված է ավանդական վարկավորման գործունեության մեջ։ Հաշվի առնելով տնտեսության դոլա-րացման համեմատաբար բարձր մակարդակը՝ ընդհանուր վարկային ռիսկի տարրերից է նաև փոխարժեքների տա-տանումով պայմանավորված վարկային ռիսկը (առաջանում է չապահովված վարկառուներին արտարժույթով տրամադր-ված վարկերի առկայության հետևանքով)։ Վարկային ռիս-կը պարունակում է նաև կենտրոնացման ռիսկը՝ վարկային պորտֆելի որակի վատթարացման հավանականությունը,որը կարող է առաջանալ մեկ վարկառուի կամ փոխկապակցված վարկառուներին խոշոր վարկեր տրամադրելու արդյունքում։

Բանկում մշակվել է ռիսկերի շրջահայաց կառավարման ընթացակարգ՝ ռիսկերի հայտնաբերման, չափման, մոնի-տորինգի և նվազեցման համար։ Վարկային ռիսկերի կա-ռավարման համապատասխան թիմերը գնահատում և կառավարում են մարածախ և կորպորատիվ գործառնույթ-յունների ռիսկերը թե՛ առանձին գործարքների, թե՛ պորտֆե-լի մակարդակով։ Կիրառվում են ռիսկերի գնահատման և ռեյթինգավորման հատուկ ներքին մեթոդաբանություններ։ Վարկային ռիսկի կառավարման նպատակն է պորտֆելի վերահսկումը, որակի մոնիտորինգը, ինչպես նաև վարկային ռիսկի կառավարման մեխանիզմների մշակումը և կիրառու-մը՝ սթրեսթեստերի, վաղ ահագանգման և ռիսկի հիմնական ցուցանիշների ու պարամետրերի, ոլորտային վերլուծության ու մոնիտորինգի հիման վրա։

Բանկի մոնիտորինգի համակարգի հիմքում է ռիսկերի բա-ցահայտումը, որը թույլ է տալիս ժամանակին արձագանքել շուկայական փոփոխություններին, բացահայտել վարկային պորտֆելի թույլ կողմերը և նախանշել լուծումներ՝ հիմնա-վորված որոշումներ կայացնելու համար։ Մոնիտորինգի են ենթարկվում առանձին վարկերը, ընդհանուր պորտֆելի կա-տարողականը, ինչպես նաև արտաքին միտումները, որոնք կարող են ազդել պորտֆելի ռիսկայնության մակարդակի վրա։ Վաղ ահագանգման ազդակները կարևոր դեր են խա-ղում վարկերի որակի վատթարացումը վաղ փուլում հայտ-նաբերելու և զսպող քայլեր ձեռնարկելու համար։

Վարկային ռիսկերի կառավարման բաժինը պարբերաբար վերլուծում է պորտֆելի միտումները, ներառյալ ընդհանուր վարկային պորտֆելի հնարավոր կորուստները, պորտֆելի որակը,իրականացնում է վարկերի դասակարգման դինամի-կայի և պորտֆելի կենտրոնացման վերլուծություն և ամսա-կան հաշվետվություն ներկայացնում վարկային կոմիտեին։ Վարկային պորտֆելի որակի մասին հաշվետվություններն ամսական կտրվածքով ներկայացվում են Տնօրինությանը և Տնօրենների խորհրդին։ Վարկային ռիսկերի կառավարման համակարգի շնորհիվ Բանկը կարողանում է ժամանակին բացահայտել և նվազեցնել ռիսկերը։

Ռիսկը կառավարելու համար Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման կայուն համակարգ, որը ներառում է հետևյալը.

Ռիսկերի բացահայտում. վարկառուների և կոնտրագենտ-ների վարկունակության բացահայտում ֆինանսական կա-ռուության և վճարունակության մանրակրկիտ գնահատում-ների միջոցով։

Վարկավորման սահմանաչափեր. ֆիզիկական անձ վար-կառուների, տնտեսության ոլորտների և այլ ուղղությունների համար ռիսկի սահմանաչափերի սահմանում չափազանց մեծ կենտրոնացումներից խուսափելու համար։

Ռիսկերի գնահատման մոդելներ. դեֆլուտի ռիսկը գնա-հատելու համար Բանկը կորպորատիվ վարկերի համար կիրառում է հաստատված վարկանիշային մոդելներ, իսկ մանրածախ վարկերի համար՝ մեքենայական ուսուցման վրա հիմնված մոդելներ։

Գրավի կառավարում. Բանկն ընդունում է գրավ հնարավոր վարկային կորուստները նվազեցնելու համար և իրականաց-նում է գրավի առարկայի կանոնավոր մոնիտորինգ՝ ռիսկերի համարժեք ծածկույթ ապահովելու համար։

Մոնիտորինգ և հաշվետվողականություն. Մոնիտորինգի են ենթարկվում ֆիզիկական անձանց վարկերը, ընդիա-նուր պորտֆելի կատարողականը, ինչպես նաև արտաքին միտումները, որոնք կարող են ազդել պորտֆելի ռիսկայ-նության մակարդակի վրա։ Վարկային պորտֆելի որակի շարունակական մոնիտորինգը և Վարկային կոմիտեին կա-նոնավոր հաշվետվությունների ներկայացումը թույլ են տա-լիս ժամանակին բացահայտել վարկային ռիսկի փոփոխույթ-յունները։ Վարկային ռիսկի մոնիտորինգի համար կիրառվող հիմնական միջոցները ներառում են չաշխատող վարկերի ցուցանիշը, վարկային կորուստների գծով ծախսերի ցուցա-նիշը, խնդրահարույց վարկերի ծածկույթի ցուցանիշը և այլն։

Վարկային ռիսկի կառավարման հարցում Բանկը ձգտում է կիրառել պահպանողական մոտեցում՝ ապահովելով հնա-րավոր կորուստները ծածկելու համար կապիտալի բավա-րար պահուստների առկայությունը։

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկի գնահատումն ու կառավարումը հիմնվում են համապատասխան ռիսկի ւխորժակի շրջանակներում «ռիսկ/եկամուտ» հարաբերակցության վրա, որը սահմանվում է բաշխվում է ըստ ռիսկի հետևյալ ենթատեսակների՝ տոկո-սադրույքի, գնային, արժութային և բաժնեմասի գնի ռիսկեր։ Շուկայական ռիսկն առաջանում է շուկայի տատանումների պատճառով ակտիվների և պարտավորությունների ժամ-կետայնության, արժույթի և տոկոսադրույքների անհամա-պատասխանության, ինչպես նաև արժեթղթերի, անշարժ գույքի, Բանկին պատկանող կամ որպես գրավ ընդունված ակտիվների գնի փոփոխության հետևանքով։

Գործադիր մակարդակում շուկայական ռիսկերի կառա-վարման համար պատասխանատու է ակտիվների և պար-տավորությունների կառավարման կոմիտեն (ԱՊԿԿ)։ Բանկի նպատակն է կառավարել շուկայական ռիսկերը, սահմա-նել ընդունելի շեմեր և կիրառել որոշումների կայացման համապատասխան համակարգ՝ հնարավոր կորուստները ռիսկի ւխորժակի նախանշված սահմաններում պահելու համար։ Կիրառվող վաղ ահագանգման ազդակները և ռիս-կի հիմնական ցուցանիշների համակարգը, տարատեսակ սթրեսթեստերը նպատակ ունեն հաշվարկելու շուկայական տարբեր զարգացումների ազդեցությունը Բանկի վրա, ինչ-պես նաև հասկանալ շուկայական ռիսկի բաց դիրքի սահ-մանաչափերն ըստ շուկայական ռիսկի բոլոր աղբյուրների։ Իրականացվող սթրեսթեստերի սցենարները պարբերա-բար վերանայվում են՝ արտացոլելով շուկայի պայմանները։ Ռիսկերի պարամետրերի համակարգով սահմանվում են պարտադիր գործողություններ,պատասխանատու անձինք, ռիսկի գոտիներ, ինչպես նաև հաշվետվողականության և

որոշումների կայացման կանոնները։ Շուկայական ռիս-կերի կառավարման համակարգը պարբերաբար վերա-նայվում է և փոփոխվում Բանկի կողմից առաջարկվող ծառայությունների և շուկայական պայմանների զարգաց-մանը զուգահեռ։

Արժութային ռիսկ

Արտարժույթով (հիմնականում ԱՄՆ դոլարով) արտա-հայտված ակտիվների և պարտավորությունների մեծ ծավալը Բանկի համար առաջացնում է արտարժութա-յին ռիսկ։ Արդյունքում, փոխարժեքի ցանկացած տատա-նում կարող է հանգեցնել ռիսկով կշռված ակտիվների արժեքի փոփոխության և ճնշման տակ դնել Բանկի կա-պիտալի ցուցանիշները։ Արտարժութային ռիսկը նվազեց-նելու նպատակով Բանկը կիրառում է ռիսկի ենթարկված արժեքի (VaR) մեթոդաբանությունը՝ հիմնվելով Նախորդ ժամանակաշրջանների տվյալների և թեստերում օգտա-գործվող փոխարժեքների սիմուլյացիաների վրա, հաշվի առնելով տարբեր փոխարժեքների, ծայրահեղ արժեքնե-րի և հավանականության՝ նախկինում գրանցված հարա-բերակցությունը։ Ռիսկերի պարամետրերի համակարգը ներառում է նաև ընդհանուր բաց դիրքի պարամետրե-րը, որոնք սահմանափակվում են ըստ ռիսկի գոտիների, որոշում կայացնողների և սահմանաչափերի խախտման դեպքում ձեռնարկվող միջոցառումների։ Արտարժութային ռիսկը, բաց դիրքի արդյունքում կորուստը, ռիսկով կշռված ակտիվների աճը վաղ փուլում կանխատեսելու և Բանկի կապիտալի, կապիտալի համարժեքության ցուցանիշի և իրացվելիության վրա դրանց ազդեցությունը չափելու հա-մար կիրառվում են մի շարք սթրես-թեստեր՝ 3 հիմնական սցենարով։ Բացի դրանից, Բանկը կիրառում է լրացուցիչ առավելագույն արժեքի մոտեցում, որը հիմնվում է սիմուլ-յացիոն սխեմայի վրա և ապահովում արժութային ռիսկի վստահելի գնահատումներ։ Այս մոտեցումը կիրառվում է ռիսկի և ակնկալվող կորուստի օպերատիվ գնահատման և կառավարման համար։

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը սահմանված ժամանակաշրջանում զուտ տոկոսային եկամտի նվազման ռիսկն է՝ պայմանա-վորված շուկայական տոկոսադրույքների փոփոխությամբ։ Տոկոսադրույքի ռիսկի հիմնական աղբյուրներից մեկն է ներդրումային պորտֆելը, որը մեծամասամբ բաղկացած է հաստատուն եկամուտով գործիքներից։ Տոկոսադրույքի ռիսկի մեկ այլ աղբյուր է հանդիսանում լողացող տոկոսադ-րույքով ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջև ոչ զրոյական տարբերությունը, ինչպես նաև անհամապա-տասխանությունը հաստատուն եկամուտ ունեցող ակտիվ-ների և պարտավորությունների ժամետայնության միջև։ Զևևի որ լողացող տոկոսադրույքով վարկատեսակները տեղական շուկայում լավ չեն զարգացած, լողացող տո-կոսադրույքի տատանումները կարող են անդրադառնալ Բանկի վրա։Տոկոսադրույքի ռիսկը, ներառյալ հաստատուն տոկոսադրույքների փոփոխության արդյունքում առաջա-ցող ճեղքվածքը, ակնկալվող վերանայման պարամետրը, լողացող տոկոսադրույքի դիրքի չիեջավորված մասը և ար-ժեթղթերի պորտֆելը, վերահսկվում և նվազեցվում է ռիս-կերի մեծաթիվ պարամետրերի միջոցով։ Տոկոսադրույքի ռիսկի պարամետրերի համակարգը բաղկացած է ավելի քան 30 տարբեր տարրերից՝ ռիսկի համապատասխան գո-տիներով, սահմանաչափերով և կառավարման լիազորութ-յուններով։ Արժեթղթերի պորտֆելի ռիսկը կառավարվում է առանձին քաղաքականությամբ, որն ընդգրկում է պորտ-ֆելի պարամետրերը, համապատասխան ակտիվների տե-սակները, սթրեսթեստերը, ակտիվների տեղաբաշխման

վերաբերյալ որոշումների կայացման սահմանաչափերը և վաղ ահագանգման ազդակները, որոնք պարբերաբար վերանայվում են Բանկի գործունեության ընդայնմանը զուգահեռ։ Ռիսկերի կառավարման ընդհանուր քաղաքա-կանությունը սահմանվում է Տնօրենների խորհրդի կողմից և կառավարվում ԱՊԿԿի կողմից։ Տնօրինությունն ապա-հովում է տոկոսադրույքի ռիսկի սահմանափակում ռիսկի ւխորժակի նախանշված չափով։ Հնարավոր կորուստները գնահատվում են սցենարների վերլուծության, վիճակագ-րական սիմուլյացիայի, ռիսկի ենթարկված արժեքի և ակնկալվող պակասորդի հիման վրա։

Գնային ռիսկ

Բանկը ենթարկվում է վարկերի ապահովման ծածկույթի նվազման ռիսկին՝ ապահովման միջոցների և բաժնային գործիքների շուկայական գների տատանման հետևան-քով։ Գնային ռիսկի հիմնական աղբյուրն է գրավադրված անշարժ գույքի արժեգրկումը։ Գնային ռիսկը կարող է առաջանալ նաև կապիտալի գործիքների, ապրանքների, հիմնական միջոցների, գրավադրված շարժական գույքի և այլ ֆինանսական գործիքների շուկայական գների փո-փոխության արդյունքում։ Գնային ռիսկը կարող է էական ազդեցություն ունենալ վարկային ռիսկի վրա, քանի որ ան-շարժ գույքի գնային տատանումները կարող են հանգեցնել չապահովված վարկերի մեծ ծավալի առաջացման՝ պայ-մանավորված «վարկ/գրավ» հարաբերակցության աճով։ Վարկային ռիսկի մեկ այլ տարր, որը փոխկապակցված է գնային ռիսկի հետ, միջազային առևտրով զբաղվող վարկառուների վճարունակության անկման ռիսկն է, քա-նի որ նրանք կարող են տուժել տարբեր ապրանքների շուկայական գնի տատանումից։ Մակրոմիջավայրի ռիսկի մոնիտորինգի ներքո պարբերաբար վերլուծվում է տեղա-կան ընկերությունների վճարունակությունը հնարավոր համակարգային վատթարացումը։ Ի պատասխան այդ ռիսկերին խստացվում են վարկավորման պայմանները, շեղումների սահմանաչափերը, ռիսկերի պարամետրե-րի ընդհանուր համակարգում ներառվում է որոշումների կայացման հստակ սահմանված կարգ։ Բանկը մշակել է գործողությունների ծրագրեր սթրես-թեստերով նախա-տեսված գնային ցնցումների արդյունքում առաջացող ռիսկերին վաղ փուլում արձագանքելու համար։

Իրացվելիության ռիսկ

Ռիսկ, որ Բանկը չի կարողանա կատարել իր պարտավո-րությունները՝ առանց մեծ վնաս կրելու։ Իրացվելիության ռիսկը կարող է էապես բարձրանալ հետևյալ դեպքերում.

- ակտիվների և պարտավորությունների ժամետայնութ-յան զգալի անհամապատասխանություն
- ոչ դիվերսիֆիկացված հաշվեկշիռ
- խոշոր ավանդատուների և վարկառուների բարձր կենտրոնացում
- արժութային ցնցումներ ֆինանսական շուկաներում, որոնք հանգեցնում են ավանդների դուրսբերման կամ տեղական արժույթով արտահայտված ավանդների փոխարկմանն արտարժութային ավանդների
- ֆինանսական շուկայում իրացվելիության պակաս և ավանդների արտահոսք
- արժեթղթերի պորտֆելի որակի անկում կամ
- որոշ ֆինանսական գործիքների (ռեպո, սվոփ, օվերնայթ և այլն) անսպասելի անհասանելիություն։

Կորտֆելի գծով և ընդհանուր առմամբ պայմանավորված է եղել Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքակա-նության փոփոխություններով, այն է՝ ժամետանց վարկերի դուրսգրման հետաձգմամբ, այլ ոչ թե համապատասխան ակտիվների որակի վատթարացմամբ։ Եթե քաղաքա-կանության մեջ փոփոխություններ չկատարվեին, ապա խնդրահարույց վարկերի ծավալի աճը կկազմեր ընդամե-նը 0.25 տոկոսային կետ, և չաշխատող վարկերի ցուցանիշը կկազմեր 1.66%, ինչը բավականին լավ արդյունք է։

Չնայած նշված աննշան աճին, վարկային ռիսկի արժեքը մնացել է ցածր՝ Նախորդ տարվա նույն ժամանակահատ-վածի համեմատ աճելով ընդամենը 0.03 տոկոսային կետով և կազմելով 0.22%: Բանկի ակնկալվող վնասը մնում է լավ ապահովված, ինչին Նպաստում է խնդրահարույց վարկերիբավարար ծածկույթը, որը կազմում է 68.5%:

Ապահովման միջոցներ

Բանկը վարում է գրավով ապահովված վարկերի կառա-վարման համապարփակ համակարգ՝ երաշխավորելով վարկային պորտֆելի ապահովվածության բավարար մա-կարդակ՝ վարկային ռիսկը զսպելու համար: Գրավի ընդու-նելի տեսակներն են. անշարժ գույք, դրամական միջոց-ներ, շարժական գույք և այլ ընդունելի ակտիվներ։ Բոլոր գրավները գնահատվում են Բանկի ներքին քաղաքակա-նություններին և կարգավորող մարմինների կողմից սահ-մանվածկիրառելի ստանդարտներին համապատասխան։

Բանկի պորտֆելը բոլոր ոլորտներում հիմնականում ապա-հովված է։ 2025թ. դեկտեմբերի 31 դրությամբ Բակի վարկա-յին պորտֆելի 61.1%-ն ապահովված էր անշարժ գույքով, իսկ մնացած մասը՝ շարժական գույքով, հիմնական միջոց-ներով, ապրանքանյութական պաշարներով, դրամական հոսքերով և երաշխավորություններով։

Կենտրոնացում

Բանկն ակտիվորեն կառավարում է վարկերի կենտրոնաց-ման ռիսկը պատշաճ կերպով մշակված դիվերսիֆիկացման ռազմավարության միջոցով։ Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքը դիվերսիֆիկացված է ըստ գործունեության հիմնական ուղղությունների, ոլորտների, հաճախորդների և պրոդուկտների տեսակների, ինչը Նվազագույնի է հասցնում ռիսկի որևէ առանձին գործոնի ազդեցությունը։

2025թ. դեկտեմբերի 31 դրությամբ մանրածախ և ՓՄՁ պորտֆելը կազմում էր հիփոթեքային, ՓՄՁ և սպառողա-կան վարկերն ընդգրկող ընդհանուր պորտֆելի 62.5%:

Ամենամեծ կենտրոնացումը գրանցվել է հիփոթեքային պորտֆելում, հիմնականում՝ ցածր ռիսկ ներկայացնող ան-շարժ գույքի առաջնային շուկայում։ Այլ ոլորտները 2025թ. վերջի դրությամբ առանձինառանձին չէին գերազանցում ընդհանուր վարկային պորտֆելի 15%-ը։

Շուկայական ռիսկ

Ռիսկեր և անորոշություններ

2025թ. ընթացքում Բանկի շուկայական ռիսկերը հիմնակա-նում պայմանավորված էին փոխարժեքների և տոկոսադ-րույքների փոփոխություններով։
ՉՅ դրամը գրեթե ամբողջ տարվա ընթացքում կայուն էր՝ շնորհիվ հավասարակշռ-ված դրամավարկային պայմանների, ՉՅ Կենտրոնական բանկի կողմից սահմանված թիրախային մակարդակին մոտ գրանցված չնչին գնաճի և պահպանվող տնտեսա-կան ակտիվության հիմնականում ծառայությունների և շինարարության ոլորտներում։ Տարեվերջին տեղի ունեցավ որոշակի արժեզրկում՝ աշխարհում տիրող անորոշության, արտաքին աղբյուրներից դրամական միջոցների ներհոս-քի նվազման և հիմնական արժույթների նկատմամբ ԱՄՆ

դել տեղեկատվական անվտանգությունը՝ բարձրացնելով համակարգի կայունության և տվյալների պաշտպանութ-յան մակարդակը։

- Ներդրվել է կիբեր ռիսկերի և տվյալների կառավարման մեթոդաբանությունը, ինչպես նաև այդ ռիսկերի բացա-հայտման, գնահատման, մոնիտորինգի և հաշվետվութ-յունների ներկայացման համակարգը։

- Գործարար գործընթացների անընդհատության կառա-վարման շրջանակներում բարելավվել են գործարար գործընթացների անընդհատության և քաղաքացիական պաշտպանության ծրագրերը։

- Համաձայն ISO 22301 ստանդարտների՝ գործարար գոր-ծընթացների անընդհատության կառավարման ծրա-գիրը ներառում է ռիսկերի գնահատման, բիզնեսի վրա ազդեցության, պարբերական թարմացումների գործըն-թացները, որոնք ուղղված են համապատասխանության ապահովմանը։

- Տեխնոլոգիաների և այլ ծառայությունների պատվիրակ-ման ավելի լայն կիրառումն առավել կարևոր է դարձնում էրրորդ կողմի ռիսկերի արդյունավետ կառավարումը։ Բանկի՝ երրորդ կողմի ռիսկերի կառավարման համա-կարգը կատարելագործելու Նպատակով բարելավվել է մատակարարների ներգրավման գործընթացի գնա-հատման համակարգը և ներդրվել են առավել կարևոր մատակարարների կատարողականի վերաբերյալ հաշ-վետվություններ։

- Մշակվել է զեղծարարությունների բացահայտման Նոր ներքին մոդել, որը բացահայտում և գրանցում է զեղծա-րար հաճախորդներին։

- Զեղծարարության ռիսկերի հետևողական և համակարգ-ված բացահայտման, գնահատման, կանխարգելման, հայտնաբերման և դրանց արձագանքելու Նպատակով մշակվել է զեղծարարության ռիսկերի կառավարման համակարգը։

- Կառավարման, ռիսկի և համապատասխանության գոր-ծիքի ընտրության գործընթացն իրականացվել է կա-ռուցվածքային և թափանցիկ մեթոդաբանությամբ, որը մշակվել է բիզնեսի կարիքներին, կարգավորող մար-մինների կողմից սահմանված պահաջներին և Բանկի ռիսկերի կառավարման համակարգին համապատաս-խանություն ապահովելու համար։

- Ներդրվել է վաղ ահազանգման համակարգ, որն օգտա-գործում է ԱԶՌԱ-ի, Պետական եկամուտների կոմիտեի, Հարկադիր կատարման ծառայության և հաշիվների շրջանառության տվյալները։

Վարկային ռիսկ

Ռիսկեր և անորոշություններ

2025թ. Բանկի վարկային ռիսկերի կառավարման քաղա-քականություններում և ընթացակարգերում էական փոփո-խություններ չեն արվել։ Բանկը կրկին գործում էր միջին վարկային ռիսկի պայմաններում՝ կապված մակրոտնտե-սական և աշխարհաքաղաքական անորոշության հետ։ Թեև միջավայրը բավականին բարդ էր, Բանկը պահպա-նեց իր վարկային պորտֆելի բարձր որակը։

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Պորտֆելի որակ և ծածկույթ

Բանկի խնդրահարույց վարկերի ցուցանիշը կազմել է 2.09%՝ տարեկան կտրվածքով գրանցելով աճ 0.68 տոկոսային կե-տով։ Աճը հիմնականում գրանցվել է մանրածախ վարկային

յալն էին. ակտիվների աճը կազմել է 16.6%, վարկային պորտ-ֆելն ավելացել է 22.7%-ով, կապիտալի համարժեքությունը՝ 20.8%, կապիտալի եկամտաբերությունը՝ 21.4%, ընդհանուր կապիտալի աճը կազմել է 22.6%։

2025թ. Ամերիաբանկը գործել է միջին ռիսկի պայմաններում, կիրառված ռիսկի ախորժակը զգալիորեն ցածր է եղել ընդունելի սահմանաչափերից։ Կուտակված կորուստները ցածր էին Նախորդ տարվա ցուցանիշներից։ Բանկն ապահովել է կապիտալի եկամտաբերության ամենաբարձր ցուցանիշներից մեկը բանկային համակարգում։

Ռիսկերի կառավարման համակարգի զարգացումը և գործողությունները 2025թ.

- ՄՈՒԱԲ հիմք ունեցող ռիսկերի մոդելների մշակման շրջա-նակներում Բանկը կատարելագործեց ֆիզիկական ան-ձանց համար ավտոմատացված թվային վարկային պրո-դուկտների գծով ռիսկերի գնահատման և որոշումների կայացման մոդելները։ Չապահովված սպառողական վար-կերի, ապառիկ վարկերի, ՓՄՁ-ներին տրամադրվող վար-կերի և «գնիր հիմա, վճարիր հետո» ծառայության շրջանակ-ներում տրամադրվող պրոդուկտների համար ներդրվեց Նոր ճարտարապետական կառուցվածք։ Ավտոմատացված վարկավորման մոդելները շարունակաբար կատարելա-գործվում են՝ տվյալների աղբյուրների ընդլայնման և մոդել-ների մշակման առաջադեմ եղանակների կիրառման միջո-ցով։ Այս ընթացիկ բարելավումը հնարավորություն է տվել Բանկին գրանցել պորտֆելի զգալի աճ՝ միաժամանակ ապահովելով ժամետանց վարկերի ցածր մակարդակ։

- Ձեռնարկության ռիսկերի կառավարման համակարգի շարունակական կատարելագործման շրջանակներում Բանկը Նախաձեռնել է ամբողջ Բանկի մակարդակով ռիս-կերի գրանցամատյանի և վերահսկողական հիմնական մեխանիզմների համակարգի մշակում, որը հնարավո-րություն կտա արդյունավետ վերահսկողություն իրակա-նացնել ռիսկերի կառավարման գործառույթի նկատմամբ՝ ներառյալ երկմակարդակ ռիսկերի տաքսոնոմիան, էա-կանության սահմանումը և վերահսկողական հիմնական մեխանիզմների համակարգը։ Դրան Նպաստելու է ներքին վերահսկողության համապարփակ համակարգը՝ էական ռիսկերի արդյունավետ բացահայտումը, գնահատումը և կառավարումն ապահովելու համար։

- Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառա-վարման համակարգը զգալիորեն բարելավվել է։ Իրա-կանացվել է գործընթացների ավտոմատացման, հաշվետ-վությունների որակի, ինչպես նաև ՇՄՆՍ կառավարման ընդհանուր շրջանակի համապարփակ բարելավում։

- Բանկը բարելավել է ֆինանսական վիճակի բարելավ-մանն ուղղված վերականգնման ծրագիրը՝ մշակելով վաղ ահազանգման ցուցանիշներ, օպտիմիզացնելով հա-ղորդակցման շղթաները և վերականգնման ծրագրում ընդգրկված ներքին ընթացակարգերը՝ ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում ավելի արդյունավետ վերականգնման ընթացակարգեր ունենալու և Բանկի անընդհատության տեսանկյունից վտանգ ներկայացնող սցենարներն ավելի արագ հայտնաբերելու համար։

- Բարելավվել են գործառնական և SS ռիսկերի սթրեսթես-տավորման սցենարները և թարմացվել են համապատաս-խան ներքին կանոնակարգերը։

- Ճանաչելով բարդ և ամպային համակարգերին բնորոշ ռիսկերը, Բանկն ակտիվորեն գործարկել է SS ռիսկերի կառավարման վերանայված համակարգը, որի Նպատակն է՝ Նվազագույնի հասցնել SS խափանումները և ամրապն-

Մոդելի վավերացումն իրականացվում է Նախքան մոդել-լի հաստատումը և ներառում է մոդելի մեթոդաբանության, տվյալների որակի, ենթադրությունների, կատարողականի և սահմանափակումների անկախ գնահատում՝ ապահովելու համար, որ մոդելները համապատասխանեն իրենց Նպա-տակին։ Բացի այդ, մոդելային ռիսկի գնահատումն իրակա-նացվում է՝ մոդելների կիրառման արդյունքում հնարավոր կորուստների քանակական գնահատում իրականացնելու և Բանկի ռիսկի ախորժակի սահմանաչափերին դրանց հա-մապատասխանությունը պարզելու համար։

Ներդրումից հետո մոդելները ենթարկվում են շարունա-կական մոնիտորինգի, այդ թվում՝ կատարողականի և կայունության պարբերական ստուգումների՝ էական վատ-թարացումը, տվյալների փոփոխությունները կամ մոդելի կի-րառման արդյունքների փոփոխությունները բացահայտելու և անհրաժեշտության դեպքում ճիշտ ժամանակին ուղղիչ գործողություններ ձեռնարկելու համար։

Բանկը ենթարկվում է նաև այլ ռիսկերի, որոնց թվում են անհամապատասխանության ռիսկը, իրավական ռիսկը և ՓԼ/ԱՖ ռիսկը։

Ամերիաբանկը զբաղվում է քաղաքային պորտֆելի անհրաժեշտ կառավարմամբ

Մակրոտնտեսական միջավայր

2025թ. Բանկն իր գործունեությունը ծավալում էր պահպան-վող անկայուն աշխարհաքաղաքական միջավայրում, թեև արձանագրվել էին աստիճանական կայունացման նշան-ներ։ Նախորդ տարվա ընթացքում դիտարկված զսպող դրա-մավարկային քաղաքականությունից հետո խոշոր կենտ-րոնական բանկերն անցան զգուշավոր դրամավարկային մեղմացման, տարբեր տարածաշրջաններում գնաճային ճնշումները նվազեցին, իսկ տնտեսական աճի անհավասա-րությունը պահպանվեց։ Տոկոսադրույքների մասով, ընդհա-նուր առմամբ, գրանցվեց առավելագույն մակարդակներից նվազման միտում, մինչդեռ քաղաքականություն մշակող մարմինները հավասարակշռություն էին ապահովում գնաճի վերահսկման և նվազող տնտեսական ակտիվությունը խթա-նելու անհրաժեշտության միջև։ Չնայած գնաճի դինամիկայի բարելավմանը, անորոշությունը պահպանվեց՝ պայմանա-վորված աշխարհաքաղաքական ռիսկերով, հարկաբյուջե-տային ճնշումներով և խոշոր տնտեսություններում առկա աճի տարբեր միտումներով։ Գնաճի հետ կապված մտահո-գությունները նվազեցրեցին տոկոսադրույքների հետագա իջեցման սպասումները, ինչը հանգեցրեց շուկայի ավելի զգուշավոր հեռանկարի։ Ֆինանսական և ապրանքային շուկաների անկայունությունը պահպանվեց, Նավթի գները հիմնականում պայմանավորված էին առաջարկի գործոն-ներով, իսկ պղնձի գները՝ համաշխարհային պահանջարկի կանխատեսումներով։ Հայաստանում տնտեսական ակտի-վության բարձր մակարդակը պահպանվեց՝ շնորհիվ շինա-րարության, առևտրի և ծառայությունների ոլորտների, թեև միջազգային այցելուների հոսքի դանդաղումը Նպաստեց աճի աստիճանական կարգավորմանը։ 2025թ. Հայաստա-նում գնաճը եղել է Նպատակային ցուցանիշից զգալիորեն ցածր մակարդակում։ Գնաճի միջին մակարդակի և միջին փոխարժեքի պայմաններում 2025թ. ընթացքում Կենտրո-նական բանկը շարունակեց դրամավարկային քաղաքակա-նության մեղմացումը, նվազեցնելով վերաֆինանսավորման դրույքը կուտակային 1.25 տոկոսային կետով։ ՉՅ դրամով արտահայտված եկամտաբերության կորը նվազել է բոլոր մարման ժամետների գծով՝ ի պատասխան վերաֆինանս-սավորման տոկոսադրույքների կրճատման։

2024թ. համեմատ տնտեսական աճը եղել է կայուն՝ շնորհիվ շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտների, մինչդեռ զբոսաշրջությունն ու ներգաղթը կայունացել են Նպաստելով ծառայությունների նկատմամբ ավելի կայուն պահանջարկի ձևավորմանը։ Տարեվերջի դրությամբ **ՉՅ բանկային համակարգի** հիմնական ցուցանիշները հետև-

^[1] Ամերիաբանկը զբաղվում է քաղաքային պորտֆելի անհրաժեշտ կառավարմամբ

ընդհանուր և տնտեսության առանձին ճյուղերին բնորոշ օրինակելի գործունեության չափանիշները, ինչպես նաև ձեռնարկում է զսպող և կանխարգելիչ միջոցառումներ:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Բանկի վարկային պորտֆելի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերն ընդունելի մակարդակի վրա են: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի ավելի քան 52.4%-ը գտնվում են ցածր և միջին ռիսկի գոտում: Բանկի վարկային պորտֆելում ներկայացված էր «Բարձր Ա» դասի 1 ռիսկային վարկառու: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման և վարկային քաղաքականություններն ու ընթացակարգերը նպատակ ունեն նվազեցնել ֆինանսավորվող ծրագրերի բացասական բնապահպանական և սոցիալական ազդեցությունը՝ ֆինանսավորման պայմաններ, հրահանգներ և նախապայմաններ սահմանելու, խորհրդատվություն տրամադրելու և շրջակա միջավայրի ու սոցիալական ռիսկերի կառավարման մասնագետներ ներգրավելու միջոցով:


Ներդրողների ու հաճախորդների հետ համագործակցության շրջանակներում Ամերիաբանկը վարում է իր բիզնեսը՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը՝ հիմնված միջազգային ֆինանսական հաստատությունների չափանիշների, միջազգային լավագույն փորձի և տեղական օրենսդրության պահանջների վրա:

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման թիմը պատասխանատու է Բանկի պահանջներին համապատասխանող նախագծերի բացահայտման, ներքին քաղաքականություններին, կիրառելի օրենսդրությանը և չափանիշներին դրանց համապատասխանությունն ապահովելու համար:

Կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթաց

Կապիտալի համարժեքության գնահատման նպատակն է՝ գնահատել կապիտալի կարիքները Բանկի ստանձնած ռիսկերին և արտաքին միջավայրի փոփոխություններին համարժեք կապիտալի մեծություն սահմանելու նպատակով: Կապիտալի վրա կորուստների ազդեցությունը հաշվարկելու համար կիրառվում են միաժամանակյա սթրես-թեստեր, երբ դիտարկվում է բոլոր ռիսկերի միաժամանակ ի հայտ գալու հավանականությունը 4 տարբեր սցենարով: Բանկը գնահատում է կապիտալն ու դրա համարժեքությունը 12-ամսյա ժամանակահատվածի համար, հաշվարկում նվազագույն անհրաժեշտ կապիտալը, որը Բանկը պետք է համալրի՝ հաշվի առնելով ռիսկերից առաջացող կորուստները, ինչպես նաև կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների նպատակային մեծությունները: Առանձնացվում են ռիսկի հետևյալ տեսակները, որոնց ի հայտ գալու դեպքում Բանկը կարող է կրել վնաս՝ վարկային ռիսկ (պորտֆելի որակի, կենտրոնացման ռիսկ), շուկայական ռիսկ (լողացող տոկոսադրույք, եկամտաբերության կոր, ֆիքսված տոկոսադրույքի ճեղքվածք, արտարժույթային և բաժնային գործիքների գնային ռիսկ), գործառնական վնաս, ռիսկով կշռված ակտիվների աճ և այլ հնարավոր ռիսկեր: Կապիտալը և հնարավոր կորուստները գնահատելու համար կիրառվում է ռիսկային զարգացումների մեկ բազային և երեք առանձին սթրես-սցենար՝ սկսած զածր ռիսկային լավատեսական սցենարից մինչև ճգնաժամային սցենարը: Այն դեպքերում, երբ գնահատման արդյունքում կապիտալի համարժեքության կանխատեսվող մեծությունն ամենահավանական սցենարում (որը համապատասխանում է մակրոտնտեսական սպասումներին) չի բավարարում 33 ԿԲ նվազագույն պահանջները, Բանկը ձեռնարկում է գործողություններ՝ համարժեքության գործակցի բավարար մակարդակ ապահովելու համար: Այս ցուցանիշը խստորեն վերահսկվում է Բանկի ղեկավարության կողմից:

Սթրես-թեստեր՝ կապիտալի ցուցանիշը կումուլյատիվ սցենարի դեպքում



Բոլոր գումարները 33 դրամով են	Դեկտ-25	Հունվ-25	Դեկտ-24
1-ին մակարդակ	305,929	277,339	237,744
2-րդ մակարդակ	55,146	38,091	35,604
Ընդհանուր նորմատիվային կապիտալ	361,075	315,430	273,348
ՌԿԱ	2,127,632	1,866,634	1,649,751
Ընդհանուր կապիտալի համարժեքության գործակից (բազային)	16.97%	16.90%	16.57%
Կապիտալի համարժեքության գործակից	16.30%	19.01%	15.97%



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒՄԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 ԱՄԵՐԻԱԲԱՆԿ
 ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՅԵՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԿՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԿՐԹԱԿՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԿՐԹԱԿՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

Էջ 77-96


Կորպորատիվ կառավարման կառուցվածքը

Բաց և արդյունավետ հաղորդակցումը և Բանկի բաժնետերերի, Տնօրենների խորհրդի, ղեկավարության և այլ շահագրգիռ անձանց շահերի միջև հավասարակշռության պահպանումն Ամերիաբանկի կորպորատիվ կառավարման համակարգի հիմնաքարն են:

Մենք մշտապես հետևում ենք առաջացող միտումներին և ներկայացնում համապատասխան առաջարկներ՝ արդյունավետ և կայուն կորպորատիվ կառավարումը պահպանելու, միջազ-

գային լավագույն փորձին, գործող օրենսդրությանը և կարգավորող մարմինների կողմից սահմանված պահանջներին ամբողջական համապատասխանություն ապահովելու համար:

Ամերիաբանկի կորպորատիվ կառավարման համակարգը կազմված է հետևյալ կառավարման մարմիններից՝ Բաժնետերերի ընդհանուր ժողով, որը համարվում է կառավարման գերագույն մարմինը, Տնօրենների խորհուրդ, Խորհրդին կից կոմիտեներ, Տնօրինություն և գլխավոր տնօրեն:



Տնօրենների խորհուրդ

Տնօրենների խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ռազմավարական ղեկավարումը՝ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Տնօրենների խորհրդի հիմնական նպատակն է՝ ապահովել Բանկի երկարաժամկետ զարգացումն ու հաջողությունը, ինչպես նաև հավասարակշռություն Բանկի բաժնետերերի, ղեկավարության և այլ շահագրգիռ անձանց շահերի միջև:

2025թ. Տնօրենների խորհուրդն անցկացրեց 26 նիստ հեռակա կարգով՝ քվեարկության և քննարկումների համար նախատեսված հատուկ պորտալի միջոցով: Խորհուրդն անցկացրեց նաև 5 առկա նիստ՝ Բանկի ռազմավարությունը և գործարար ծրագիրը, եռամսյակային հաշվետվությունները և ֆինանսական ցուցանիշները քննարկելու համար:

Նախանշված օրակարգ և ժամանակացույց ունեցող պաշտոնական նիստերից բացի, Տնօրենների խորհուրդը, Խորհրդին կից կոմիտեները, ինչպես նաև Խորհրդի առանձին անդամներ առանձին հարցերի շուրջ հանդիպումներ և քննարկումներ են անցկացրել Բանկի գործադիր ղեկավարության և այլ պատասխանատուների հետ: Նման հանդիպումներն ու քննարկումները ներառված են Խորհրդի անդամների՝ Երևան և Բանկի գլխամաս կանոնավոր այցերի պաշտոնական օրակարգում: Վերջին տարիներին այսպիսի ոչ պաշտոնական հանդիպումներն անցկացվել են ավելի հաճախակի:

Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի և Խորհրդին կից կոմիտեների կանոնակարգերը սահմանում են Խորհրդի և կոմիտեների գործունեության հիմնական նպատակներն ու խնդիրները, իրավասությունների շրջանակը, նիստերի նախապատրաստման և վարման կարգը:

Տնօրենների խորհրդի անդամները նշանակվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավել տոկոսին տիրապետող բաժնետերերն իրավունք ունեն ընդգրկվել Տնօրենների խորհրդի կազմում՝ առանց ընտրությունների՝ 33 օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Այն չի կարող 5 տարուց պակաս և 10 տարուց ավել լինել: Տնօրենների խորհրդի նախագահն ու անդամներն ունեն վերը նկարագրված իրավունք:

Խորհրդի կազմը, անդամների թիվը և որակավորումը, ինչպես նաև փորձառությունն ու հմտություններն անմիջականորեն ազդում են Խորհրդի արդյունավետության վրա: Խորհուրդը պարբերաբար անդադառնում է այս հարցին՝ հասկանալու համար, թե ինչպիսի մարդիկ են անհրաժեշտ Բանկին ներկայում և կարող են անհրաժեշտ լինել ապագայում՝ արդյունավետ կառավարման համար: Գիտակցելով Խորհրդի կազմում բազմազան հմտություններ և գիտելիք ունենալու բոլոր առավելությունները՝ մենք Տնօրենների խորհրդում ընդգրկել ենք Բանկն արդյունավետ կերպով ղեկավարելու համար անհրաժեշտ ամենատարբեր ունակություններ և փորձառություն ունեցող մարդկանց: Խորհրդի նոր անդամներ ներգրավելիս՝ մենք հաշվի ենք առնում աշխարհագրական բազմազանությունը, բանկային գործի, ակտիվների կառավարման, խորհրդատվության, ֆինանսների և միջազգային բիզնեսի ոլորտներում հարուստ մասնագիտական փորձը:

Տեղեկատվության և կառավարման գործընթացների՝ ժամանակին և լիարժեք հասանելիությունն էական նշանակություն ունի Խորհրդի արդյունավետության համար: Բանկում ներդրվել է հատուկ Խորհրդի անդամների համար նախատեսված ներքին էլեկտրոնային համակարգ՝ պորտալ: Դա յուրօրինակ անվտանգ միջավայր է, որը հնարավորություն է տալիս Խորհրդի անդամներին համագործակցել, մասնակցել Խորհրդի առօրյա աշխատանքին և համակարգել բոլոր փաստաթղթերը (որոշումները, արձանագրությունները, շնորհանդեսները, հաստատումները և հաշվետվությունները)՝ մեկ վայրում, կազմակերպել քվեարկություն, հաղորդակցվել Խորհրդի մյուս անդամների հետ, այդ թվում՝ ներկայացնել հաշվետվություններ, փաստաթղթեր և տեղեկություններ և ամփոփել նիստերի արձանագրությունները:

Խորհրդի նախագահը կարևոր դեր է խաղում՝ ապահովելով, որ Խորհրդի բոլոր անդամները լինեն տեղեկացված և հնարավորություն ունենան լիարժեք մասնակցելու Խորհրդի բոլոր քննարկումներին: Խորհրդի նախագահն է խթանում արդյունավետ կապը բաժնետերերի և Խորհրդի, ինչպես նաև Խորհրդի և ղեկավարության միջև:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Տնօրենների խորհրդի կազմում ընդգրկված էին Տնօրենների խորհրդի նախագահ լիազոր անդամն ու վեց անդամ, ընդ որում յոթ անդամներից երեքը անկախ անդամներ էին:

Անուն, ազգանուն	Պաշտոն	Խորհրդի կազմում ընդգրկվելու տարին
Անդրեյ Մկրտչյան	Տնօրենների խորհրդի նախագահ	2007
Ռոբերտ ֆոն Ռեկովսկի	Տնօրենների խորհրդի անդամ	2012
Արչիլ Գաչեչիլաձե	Տնօրենների խորհրդի անդամ	2024
Սուլիսան Գվալիա	Տնօրենների խորհրդի անդամ	2024
Ռիչարդ Օզդոն	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	2020
Տիգրան Դավթյան	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	2020
Թամազ Գեորգաձե	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	2024

Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ

Խորհուրդը կոմիտեներին է փոխանցել իրավասությունների լայն շրջանակ նախնական ուսումնասիրության համար և շատ հարցերում հիմնվում է նրանց գործունեության արդյունքների վրա: Գրեթե բոլոր հիմնական հարցերը, որոնք պահանջում են Խորհրդի հաստատում կամ քննարկում, նախ քննարկվում են կոմիտեների մակարդակում: Նման մոտեցումը բարելավում է որոշումների կայացման որակը՝ հնարավորություն ընձեռելով Խորհրդին կայացնել հիմնավորված, արդյունավետ որոշումներ և միաժամանակ թույլ տալով նրան ավելի շատ ժամանակ հատկացնել ռազմավարական և ընդհանուր բնույթի առաջնահերթ խնդիրներին:

Կոմիտեների գործունեությունը որևէ կերպով չի ազդում Տնօրենների խորհրդի իրավասությունների ու պարտականությունների վրա և չի սահմանափակում Տնօրենների խորհրդի պատասխանատվությունը: Կոմիտեներն ունեն խորհրդատվական դեր, իսկ վերջնական որոշումները կայացվում են Խորհրդի կողմից:

Ներկայումս Բանկում գործում է Խորհրդին կից չորս կոմիտե՝ Աուդիտի կոմիտե, Ռիսկերի կոմիտե, Վարձատրության կոմիտե և Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե:

	Աուդիտի կոմիտե	Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե	Վարձատրության կոմիտե	Ռիսկերի կոմիտե
Արջիլ Գաչեչիլաձե		անդամ	անդամ	
Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի		անդամ	Նախագահ	
Ռիչարդ Օգոն	անդամ			Նախագահ
Թամազ Գեորգաձե	Նախագահ			անդամ
Տիգրան Դավթյան		Նախագահ	անդամ	
Սուլխան Գվալիա	անդամ			անդամ
Անդրեյ Մկրտչյան				

Աուդիտի կոմիտե

Կոմիտեի հիմնական նպատակն է՝ վերահսկել Բանկում ֆինանսական հաշվետվողականության, արտաքին աուդիտի և Ներքին հսկողության գործընթացները և բարձրացնել դրանց արդյունավետությունը, ինչպես նաև ապահովել բաժնետերերի շահերի պաշտպանությունը:

2025թ. Աուդիտի կոմիտեն անցկացրեց 5 նիստ, որոնց ընթացքում հյուրընկալվեցին Բանկի արտաքին աուդիտի իրականացնող կազմակերպության ներկայացուցիչները, քննարկվեցին ՖՅՄՍ համաձայն ներկայացվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները, Ներքին աուդիտի ստորաբաժանման եռամսյակային հաշվետվությունները և Ներքին հսկողության համակարգին վերաբերող այլ հարցեր:

Վարձատրության կոմիտե

Վարձատրության կոմիտեի հիմնական նպատակն է՝ աջակցել Խորհրդին Բանկում վարձատրության արդյունավետ համակարգի ձևավորման և պահպանման գործում, այդ թվում՝ ապահովել վարձատրության քաղաքականության բարելավումը և վերահսկումը, վարձատրության մեխանիզմների արդյունավետ կիրառումը լավագույն ղեկավարներին ներգրավելու և պահելու, ինչպես նաև չարաշահման ցանկացած հնարավորություն բացառելու համար:

2025թ. Վարձատրության կոմիտեն անցկացրեց 2 նիստ: Ըստ սահմանված կարգի՝ նիստերը կայացան կիսամյակային և տարեկան գնահատումից հետո՝ քննարկելու համար անձնակազմի տարեկան պարգևատրման հարցը, ղեկավարների վարձատրությունը, ուսումնասիրելու ՄՌԿ Կոմիտեի կողմից ներկայացված հաշվետվությունն անձնակազմի, այդ թվում՝ ընդհանուր արդյունավետության և շուկայի ուսումնասիրության վերաբերյալ:

Ռիսկերի կոմիտե

Ռիսկերի կոմիտեի հիմնական նպատակն է՝ օժանդակել Տնօրենների խորհրդին ռիսկի ազդեցության, դիրքի և գործունեության վերահսկողություն իրականացնելիս, խորհրդատվություն տրամադրել ռիսկերի ռազմավարության վերաբերյալ, վերահսկել ռիսկերի կառավարման համակարգը և մշակույթը, ապահովել ռիսկերի և ռազմավարության համաժամանակյա կառավարումը, այդ թվում՝ ռիսկի ախտորոշիչի դիտարկումը և ռիսկերի մոնիտորինգը:

2025թ. Ռիսկերի կոմիտեն անցկացրեց 4 նիստ, որոնց ընթացքում ուսումնասիրվել են ռիսկերի կառավարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունները և այլ հարցեր, այդ թվում՝ ռիսկի ախտորոշիչը և Բանկի վերականգնման ծրագիրը:

Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե

Կոմիտեի գլխավոր նպատակը Բանկի Տնօրենների խորհրդի, վերջինիս կից կոմիտեների և ղեկավարության համար արհեստավարժ, հմուտ, փորձառու, առաքինի մասնագետներից բաղկացած կադրային բազայի ստեղծումն է, կորպորատիվ կառավարման ոլորտում միջազգային լավագույն փորձի ներդրումն օրենսդրական պահանջներին համապատասխան, ինչպես նաև փոխարինելիության անխցընդոտ ապահովումն ու կադրային բարելավումը:

2025թ. կոմիտեն անցկացրեց 2 նիստ, որոնց ընթացքում ուսումնասիրվեցին և քննարկվեցին փոխարինելիության պլանավորման և այլ ծրագրերի հետ կապված հարցեր, ներկայացվեցին առաջարկություններ:

Տնօրենների խորհրդի անդամներ



Անդրեյ Մկրտչյան Տնօրենների խորհրդի նախագահ

Պարոն Մկրտչյանը նշանակվել է Տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնում 2013թ. նոյեմբերին:

Պրն Մկրտչյանն ավելի քան 25 տարի է, ինչ ղեկավարում է «Ամերիա» խումբը՝ հանդիսանալով խմբի հիմնադիրն ու նախագահը: Նրա հարուստ փորձը Հայաստանում ներդրումաբանկային գործունեության և կառավարման խորհրդատվության ոլորտներում դարձել է «Ամերիա» խմբի աճի ու զարգացման գրավականը: Անդրեյ Մկրտչյանն առաջին գործարարն է Հայաստանից, որ դարձել է Համաշխարհային տնտեսական համաժողովի նոր առաջնորդների ենթախմբերից մեկի հիմնադիր անդամ: Ա. Մկրտչյանը նաև մի շարք մասնավոր և պետական կազմակերպությունների խորհուրդների անդամ է:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: Ստացել է Ամերիկյան տնտեսական ասոցիացիայի (AEA) կրթաթոշակը Կոլորադոյի պետական համալսարանի տնտեսագիտական բաժնում իր գիտական աշխատանքի համար, մասնակցել է մի շարք համալսարանների ծրագրերին, այդ թվում՝ Զինգսթրոմի բիզնեսպրոցի, Հարվարդի բիզնեսպրոցի, INSEAD-ի և այլն ծրագրերի:



Արչիլ Գաչեչիլաձե Տնօրենների խորհրդի անդամ


Արչիլ Գաչեչիլաձեն ունի ավելի քան 20 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական ծառայությունների ոլորտում:

Զբաղեցրել է տարբեր ղեկավար և գործադիր պաշտոններ Վրաստանում և այլ երկրներում: Որոշ ժամանակ աշխատելով «Լեհման Բրադերս Փրայվիթ Իքուիթի» (Lehman Brothers Private Equity) ընկերությունում (2006 - 2008թթ.)՝ 2008թ. վերադարձել է Վրաստան և միացել «Բենք օֆ Ջորջիա» (Bank of Georgia) ընկերությանը՝ զբաղեցնելով ընկերության կորպորատիվ բանկային գործառնությունների գծով գլխավոր տնօրենի տեղակալի (2009 - 2013թթ.) և Ակտիվների ու սեփական կապիտալի կառավարման գծով տնօրենի (2013 - 2017 թթ.) պաշտոնները:

Այնուհետև «ԲիՋիԻՕ Գրուպ ԲիԷԼՍի» (BCEO Group PLC) ընկերությունում զբաղեցրել է նաև ներդրումների կառավարման գծով գլխավոր տնօրենի տեղակալի, Խմբի ֆինանսական տնօրենի, կորպորատիվ և ներդրումային բանկային գործառնությունների գծով գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնները:

Պարոն Գաչեչիլաձեն աշխատել է նաև «Սալֆորդ Իքուիթի Փարթներս» (Salford Equity Partners) ընկերությունում (2002 - 2004թթ.), ՎՋԵԲ-ում (2001 - 2002թթ.) և «Բեյ ՓիԷմ Զի Բարենթս» ընկերությունում (2000 - 2001թթ.):

2019 թվականից հանդիսանում է «Լայն Ֆայնեսս Գրուպ ԲիԷԼՍի» ընկերության գործադիր և գլխավոր տնօրենը և «Բենք օֆ Ջորջիա» ընկերության գլխավոր տնօրենը: Արչիլն ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանը՝ ստանալով տնտեսագիտության բակալավրի աստիճան, ինչպես նաև գերազանցությամբ ավարտել է Կոռնելի համալսարանը՝ ստանալով բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան: Նա նաև ունի արտոնագրված ֆինանսական վերլուծաբանի (CFA) որակավորում և հանդիսանում է Միացյալ Թագավորությունում Արտոնագրված ֆինանսական վերլուծաբանների ասոցիացիայի անդամ:



Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի Տնօրենների խորհրդի անդամ

Ռոբերտ Ֆոն Ռեկովսկին զբաղեցնում է Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի անդամի պաշտոնը 2012թ. հոկտեմբերից: Ռոբերտն ունի շուրջ 35 տարվա փորձ համաշխարհային մակարդակով ակտիվների կառավարման ոլորտում: Հանդիսացել է Fidelity Investments ընկերության զարգացող շուկաների գծով պորտֆելի կառավարիչը և ռազմավարության պատասխանատուն՝ կառավարելով մի շարք ինստիտուցիոնալ և մանրածախ ներդրումային հիմնադրամներ ԱՄՆ, Կանադայի, ՄԹԻ, Եվրոպական և ասիական ներդրողների համար:

1989թ. ընդունվել է Fidelity Investments ընկերության ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումների ստորաբաժանումը: 1995թ. տեղափոխվել է բարձր եկամտաբերությամբ ներդրումների ստորաբաժանում՝ որպես սուվերեն պարտքային գործառնությունների վերլուծաբան: 1996թ. մինչև 2003թ. աշխատել է որպես փայտափրկական կապիտալի վերլուծաբան, ֆոնդերի կառավարիչ ընկերության լոնդոնյան գրասենյակում՝ զբաղվելով Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջաններում զարգացող շուկաների հարցերով և Եվրոպական շուկայի ուսումնասիրությամբ:

2004թ. վերադարձել է Բոստոն, որտեղ ստանձնել է ընկերության՝ զարգացող շուկաներում փայտափրկական կապիտալի կառավարումը:

Ունի գիտությունների մագիստրոսի աստիճան Բրենդայսի համալսարանից, քաղաքագիտության մագիստրոսի աստիճան Յուտա Բեյկոնի համալսարանից և բակալավրի կոչում՝ «Ջադաքագիտություն և կառավարում» մասնագիտությամբ Օլբանիի համալսարանից (SUNY):



Թամազ Գեորգաձե
Անկախ ոչ գործադիր
անօրեն

Թամազ Գեորգաձեն ունի միջազգային տարբեր ընկերություններում աշխատելու հարուստ փորձ: 1994-1995 թթ. աշխատել է որպես Կրաստանի Նախագահի օգնական Արտաքին հարաբերությունների վարչությունում: Տասը տարի աշխատել է Բեռլինի «Մրջքենզի ընդ Քոմփանի» ընկերությունում (McKinsey & Company), իսկ 2009-2013 թթ. հանդիսացել է ընկերության բաժնետեր: «Մրջքենզի ընդ Քոմփանի» ընկերությունում աշխատելու տարիներին համագործակցել է գերմանական, շվեյցարական, ռուսական, վրացական և վիետնամական բանկերի հետ՝ ռազմավարության, ռիսկերիբացահայտման և կառավարման, ավանդային և ներդրումային պրոդուկտների, գործառնությունների և վաճառքի ոլորտներում:

2013 թ. հիմնադրել է Raisinը՝ գործարկելով առաջին համաշխարհային ավանդային հարթակը Եվրոպայում, որտեղ մինչև այժմ զբաղեցնում է գլխավոր տնօրենի պաշտոնը:

Նախկինում աշխատել է որպես «ԲիՋիԻՕ Գրուպ ֓իլԷԼՍի» (BGEO Group PLC) ընկերության անկախ ոչ գործադիր տնօրեն՝ զբաղեցնելով պաշտոններ Աուդիտի, Ղեկավար անձնակազմի նշանակման և Ռիսկերի կառավարման կոմիտեներում: Ներկայումս հանդիսանում է «Բենք օֆ Ջորջիա» (Bank of Georgia) ընկերության ոչգործադիր տնօրեն, ինչպես նաև «Լայոն ֆայնենս Գրուպ ֓իլԷԼՍի» (Lion Finance Group PLC) ընկերության անկախ ոչգործադիր տնօրեն: Ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանը՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի աստիճան և Գիսենի Յուստուս Լիբիգի անվան համալսարանը՝ ստանալով գյուղատնտեսության տնտեսագիտության թեկնածուի աստիճան: Գերազանցությամբ ավարտել է նաև Գիսենի Յուստուս Լիբիգի անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:



Ռիչարդ Օգոսյան
Տնօրենների խորհրդի
անկախ անդամ

Ռիչարդ Օգոսյանը Տնօրենների խորհրդի անկախ անդամ է, որն ունի ավելի քան 30 տարվա աշխատանքային փորձ միջազգային ֆինանսների, ներդրումների և կառավարման ոլորտներում: Նա 2020 թվականից Ամերիաբանկում հանդես է գալիս որպես անկախ ոչ գործադիր տնօրեն՝ Նախագահելով Խորհրդին կից Ռիսկերի կառավարման կոմիտեն և հանդիսանում է Խորհրդին կից Աուդիտի կոմիտեի անդամ:

Ռիչարդը նաև «ԱլթայԳլոբալ» ընկերության (Մավրիկիոսի ֆինանսական ծառայությունների կոմիտեի կողմից կարգավորվող ներդրումային դիվեր, որի գործունեությունը հիմնականում կենտրոնացած է ԱՊՅ, Մերձավոր Արևելքի և Յնդկաստանի շուկաների վրա) ոչ գործադիր տնօրենն է և իրականացնում է կառավարմանը և կարգավորող ռիսկերին առնչվող վերահսկողության գործառնությո:

Նախկինում նա 6 տարի (2012-2018 թթ.) աշխատել է Միացյալ Թագավորության ֆինանսական ոլորտի վերահսկման մարմնի կողմից վերահսկվող «Sova Capital» ընկերությունում, որտեղ ստեղծել է Խորհրդի կից Աուդիտի կոմիտեն և ներքին աուդիտի գործառնությունները: 6 տարի (2017-2022 թթ.) աշխատել է նաև ԱՊՅ տարածաշրջանում ուղղակի ներդրումների առաջատար սուվերեն հիմնադրամում՝ որպես միջազգային ակտիվների կառավարման գործառնությունների գծով տնօրեն՝ վերահսկելով պաշտոնական հաշվետվությունները և սահմանափակ գործընկերների հաղորդակցությունը հիմնադրամի և Պարսից ծոցի համագործակցության խորհրդի սուվերեն հիմնադրամների համատեղ ներդրումային ծրագրերի համար:

Իր կարիերայի սկզբում Ռիչարդը աշխատել է որպես ներդրումային բանկիր Մոսկվայում և Լոնդոնում: Նա կանգնած էր հետխորհրդային Ռուսաստանի Դաշնությունում իրականացվող միջազգային կապիտալի շուկաների առաջին գործարքներից շատերի ակունքներում:

Ֆինանսական ոլորտից գատ՝ Ռիչարդը նաև Դիլիջանի միջազգային դպրոցի (UWCD) Կառավարման խորհրդի անդամ է և զբաղեցնում է ֆինանսների և աուդիտի կոմիտեի Նախագահի պաշտոնը: Աշխատել է որպես զարգացման գծով տնօրեն Իթլնի քոլեջում (որի շրջանավարտն է հանդիսանում)՝ մասնակցելով քոլեջի զարգացման նպատակով ֆինանսական միջոցների ներգրավման արշավին և Քեմբրիջի կրթական բարեգործական կազմակերպությունում՝ կազմակերպությունում մասնավոր հատվածի և առևտրային ոլորտի բարեփոխումներ իրականացնելու նպատակով:

Ռիչարդը ավարտել է Օքսֆորդի համալսարանի Լինքոլնի քոլեջը՝ ստանալով դասական և ժամանակակից լեզուների մագիստրոսի աստիճան: Միացյալ Թագավորության քաղաքացի է և հանդիսանում է «Իմփեքթ Բորդս Իմերջինգ Մարքեթս» (ImpactBoards Emerging Markets) կազմակերպության անդամ:



Սուլխան Գվալիա
Տնօրենների
խորհրդի անդամ

Պարոն Գվալիան բանկային գործունեության ոլորտում հարուստ փորձ ունի: Բանկային ոլորտում իր կարիերան սկսել է «ԹբիլիսիՅունիվերսալԲենք» (TbilUniversalBank) ընկերությունում, որտեղ աշխատել է որպես գլխավոր տնօրենի տեղակալ՝ Նախքան 2004 թ. Նոյեմբերին վերջինիս ձեռքբերումը «Բենք օֆ Ջորջիա» ընկերության կողմից: «Բենք օֆ Ջորջիա» (Bank of Georgia) ընկերությունում զբաղեցրել է տարբեր ղեկավար պաշտոններ՝ մասնավորապես աշխատել է որպես գլխավոր տնօրենի տեղակալ ռիսկերի կառավարման գծով տնօրեն (2005-2013թթ.) և գլխավոր տնօրենի տեղակալ կորպորատիվ բանկային գործառնությունների գծով տնօրեն (2013-2016թթ.): Ներկայումս հանդիսանում է «Բենք օֆ Ջորջիա» ընկերության գլխավոր տնօրենի տեղակալը, ֆինանսական տնօրենը և «Լայոն ֆայնենս Գրուպ ֓իլԷԼՍի» ընկերության գլխավոր տնօրենի տեղակալը, ֆինանսական տնօրենը:

Նախքան Նշված պաշտոնում նշանակվելը՝ հիմնադրել և ղեկավարել է «ԻՍփեյս Լիմիթեդ» (ESpace Limited) ընկերությունը, որը Կրաստանում էլեկտրական մեքենաների լիցենզավորման ենթակառուցվածքի զարգացմամբ զբաղվող վրացական ընկերություն է:

Ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանը՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան:



Տիգրան Դավթյան
Անկախ ոչ գործադիր
տնօրեն

Տիգրան Դավթյանը Տնօրենների խորհրդի անդամ է նշանակվել 2020 թ. հուլիսին:

Ունի աշխատանքային հարուստ փորձ Հայաստանի ֆինանսական ոլորտում, ինչպես նաև դասախոսական փորձ ՀՀ առաջատար բուհերում:

Զբաղեցրել է ղեկավար պաշտոններ ՀՀ առևտրային բանկերում. եղել է «Ինկոբանկ» ՓԲԸ տնօրինության Նախագահ, գործադիր տնօրեն (2018-2019թթ.), «Կոնվերս Բանկ» ՓԲԸ տնօրինության Նախագահ, գործադիր տնօրեն (2009-2016թթ.): Մինչ այդ զբաղեցրել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ գործադիր տնօրենի տեղակալի, ֆինանսական շուկաների վարչության ղեկավարի պաշտոնը (2008-2009թթ.):

2016-2018թթ. աշխատել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում՝ որպես ֆինանսական քաղաքականության վարչության ղեկավար:

Ղեկավարել է USAID/EMC Հայաստանում ֆինանսական շուկաների զարգացման ծրագրի (2006-2008թթ.), ինչպես նաև USAID/IBM BCS Հայաստանում կապիտալի շուկաների զարգացման ծրագրի (2002-2004թթ.) աշխատանքային խմբերը:

1999-2002թթ. Տիգրանը զբաղեցրել է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի վարչության Նախագահի պաշտոնը: Մինչ այդ հանդիսացել է ՀՀ վարչապետի խորհրդականը ֆինանսական շուկաների գծով (1998-1999թթ.):

Իր աշխատանքային գործունեությունն սկսել է 1991թ.՝ որպես ներդրումային ընկերության գլխավոր տնօրեն, ապա աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում, որտեղ զբաղեցրել է տարբեր ղեկավար պաշտոններ (1994-1998թթ.):

Զբաղեցրել է ծրագրի ղեկավարի և տնօրենի պաշտոնը «Էներգիսեկտ» ԾԻԳ-ում՝ ՀԲ/ՄՀԸԸ Էլեկտրահաղորդման և փոխանցման ծրագրի ներքո (2004-2006թթ.):

Տիգրանը եղել է Եվրասիական համագործակցության ֆինանսաբանկային ասոցիացիայի համակարգող խորհրդի անդամ (2016-2020թթ.), ինչպես նաև Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի (Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի անդամ (2017-2020թթ.):

Ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը՝ ստանալով տնտեսագետ-մաթեմատիկոսի որակավորում: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու է:

Տնօրինություն և գլխավոր տնօրեն

Ամերիաբանկի գործադիր մարմինը ներկայացնում են Տնօրինությունն ու գլխավոր տնօրենը, որոնց իրավասությանն են պատկանում Բանկի ընթացիկ գործունեությանը վերաբերող բոլոր հարցերը, բացառությամբ Բանկի կանոնադրությամբ և այլ ներքին իրավական ակտերով այլ մարմինների բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի: Տնօրինության կազմի մեջ են մտնում նախագահը և 6 անդամ (այդ թվում՝ գլխավոր հաշվապահը): Գլխավոր տնօրենին և վերջինիս ներկայացմամբ՝ Տնօրինության անդամներին նշանակում է Տնօրենների խորհուրդը:



Արտակ Յանեսյան Տնօրինության նախագահ- գլխավոր տնօրեն

Արտակ Յանեսյանն Ամերիաբանկի գլխավոր տնօրենն է 2007թ. հոկտեմբերից ի վեր: 2008թ. ապրիլից առ այսօր զբաղեցնում է «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենի պաշտոնը:

Արտակն ունի 33 բանկային համակարգում բարձրագույն ղեկավար պաշտոններում աշխատելու հարուստ փորձ: Այս ոլորտում նա աշխատում է ավելի քան 30 տարի: Աշխատանքային ուղին սկսել է «Արմինվեստբանկ» ՓԲԸ-ում որպես վարկային մասնագետ (1993-1994թթ.), մի շարք կարևոր պաշտոններ է զբաղեցրել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում, ներառյալ գլխավոր տնօրենի (2006-2007թթ.), գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնները, համակարգել է վարկավորման, առևտրային գործառնությունների և թղթակցային հարաբերությունների վարչությունները (1998-2006թթ.): Իր աշխատանքային գործունեության սկզբում աշխատել է 33 Կենտրոնական բանկում հետևյալ պաշտոններում՝ Վերահսկողության, կարգավորման և արտոնագրման վարչության մասնագետ, ավագ մասնագետ, Վերահսկողության վարչության առաջին բաժնի պետ (1995-1998թթ.): Եղել է Հայաստանում Բազելյան կոմիտեի քարտուղարության ղեկավարը:

1995թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը (տնտեսագետի որակավորմամբ)՝ ստանալով մագիստրոսի կոչում:



Հովհաննես Թորոյան Տնօրինության անդամ, ֆինանսական գծով տնօրեն

Հովհաննես Թորոյանը «Ամերիաբանկ»-ի Տնօրինության անդամ է 2022 թվականի նոյեմբերից և զբաղեցնում է Բանկի ֆինանսական գծով տնօրենի պաշտոնը:

Ստացել է տնտեսական մոդելավորման մագիստրոսի աստիճան Երևանի պետական համալսարանում և բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան Բինգհեմթոնի համալսարանում (ԱՄՆ): Ավարտել է Երևանի տնտեսագիտական համալսարանի ասպիրանտուրան և պաշտպանել է «Ֆինանսական ինստիտուտների գործունեության համեմատական արդյունավետության գնահատումը ֆինանսամթթեմատիկական մեթոդներով» թեմայով թեզ՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Բացի վերոնշյալից, մասնակցել է գործադիր և մասնագիտական մի շարք դասընթացների և վերապատրաստումների առաջատար ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ Հարվարդի, Կոլումբիայի, INSEAD-ի համալսարաններում:

Պարոն Թորոյանը իր մասնագիտական ուղին սկսել է 2004 թվականին՝ Հայաստանի բանկային ոլորտում, և ունի մեծ փորձ ֆինանսների, կապիտալի և իրացվելիության կառավարման, հետազոտությունների և ռազմավարական վերահսկողության ոլորտներում: Նա նաև դասավանդել է Երևանի պետական համալսարանում և հանդես է եկել որպես խորհրդատու տարբեր մասնագիտական հարթակներում: Նախքան Հայաստան վերադառնալը որոշ ժամանակ աշխատել է Արժույթի միջազգային հիմնադրամում:

2010 թվականից աշխատում է Ամերիաբանկում: Այս տարիների ընթացքում Հովհաննեսը զբաղեցրել է մի շարք ղեկավար պաշտոններ, ղեկավարել է ռազմավարության, ակտիվների և պարտավորությունների կառավարման, կորպորատիվ ֆինանսների, հետազոտությունների և վերլուծությունների ոլորտները՝ նպաստելով Բանկի կայուն ֆինանսական կառավարմանը, թափանցիկության բարձրացմանն ու կայուն աճին: Հովհաննեսը եղել է Բանկի տարբեր կոլեգիալ մարմինների անդամ:

Հովհաննեսը մի շարք գիտական հոդվածների և հրապարակումների հեղինակ է, արժանացել է մասնագիտական տարբեր մրցանակների: Հովհաննեսը ներգրավված է նաև կյանքի որակի բարելավմանն ուղղված սոցիալական տարաբնույթ նախաձեռնություններում:



Գագիկ Սահակյան Տնօրինության անդամ, կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն

Ամերիաբանկի Տնօրինության անդամ է 2012թ. փետրվարից:

1995թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը: 1995-1997թթ. ուսումը շարունակել է Հայաստանի ամերիկյան համալսարանի բիզնեսի և կառավարման ֆակուլտետում և ստացել գործարար կառավարման մագիստրոսի կոչում: Մասնակցել է մի շարք մասնագիտական դասընթացների, այդ թվում՝ Հարվարդի համալսարանի Քենեդի կառավարման դպրոցում (2004թ.) և Հարվարդի համալսարանի բիզնեսի դպրոցում (2018թ.):

Գագիկն ունի Հայաստանում որպես խորհրդական և ղեկավար աշխատելու մեծ փորձ: Նա Ամերիա թիմում է եղել ընկերության սկզբնավորման օրից՝ նախ աշխատելով որպես ավագ խորհրդական, իսկ հետո՝ գործընկեր և կառավարման խորհրդատվության բաժնի ղեկավար (1999-2012թթ.): Մասնակցելով Հայնեթարտբանկի ձեռքբերման ամբողջ գործընթացին՝ Ամերիաբանկում ստանձնել է կարևոր պաշտոններ՝

խորհրդական (2008-2010թթ.), կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն (2010-2012թթ.), Տնօրինության անդամ կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն (2012-2019թթ.), Տնօրինության անդամ կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն (2019 թից առ այսօր):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՍԵՐՎԻՍ ԿՈՄՊԼԵՔՍԻ ՍՊԵՇԻԱԼԻԶԻՐՈՎԱԿԱՆ ԲԱՆԿ



Արման Բարսեղյան
Տնօրինության անդամ,
մանրածախ բանկինգի տնօրեն

Արման Բարսեղյան Տնօրինության անդամ է 2012թ. սեպտեմբերից:

Ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ «Համաշխարհային Էկոնոմիկա» մասնագիտացմամբ: Ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան ՌԳ գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում:

Ավելի քան 20 տարի է, ինչ աշխատում է մանրածախ բանկային ոլորտում՝ կուտակելով հարուստ փորձ: Աշխատանքային ուղին սկսել է 1997թ. «ԷլչէսԲիՍի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի Ֆինանսական վերահսկողության բաժնում: Այնուհետև զբաղեցրել է տարբեր պաշտոններ, մասնավորապես՝ ֆինանսական վերահսկողության բաժնի գործառնությունների կառավարիչ (2001-2004թթ.), մասնաճյուղի կառավարիչ (2004-2008թթ.) և մանրածախ ծառայությունների դեպարտամենտի տնօրեն (2008-2012թթ.):

Մինչև 2025 թ. հուլիս Արմանը հանդիսացել է «Արմենիան Զարտ» ՓԲԸ (ArCa) Հայաստանի ազգային քարտային վճարային համակարգի Տնօրենների խորհրդի անդամ:

2012թ. հունիսին ստանձնել է Ամերիաբանկի մանրածախ բանկինգի տնօրենի պաշտոնը:



Գոհար Խաչատրյան
Տնօրինության անդամ,
գլխավոր հաշվապահ

Գոհար Խաչատրյանը Ամերիաբանկի գլխավոր հաշվապահն է և Տնօրինության անդամը 2008թ.-ից:

Ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ տնտեսագետի որակավորմամբ: Շուրջ 30 տարի է, ինչ աշխատում է բանկային համակարգում՝ ստանձնելով առանցքային պաշտոններ ինչպես կարգավորող մարմնում, այնպես էլ մասնավոր բանկերում:

Գոհարն իր աշխատանքային ուղին սկսել է ՌԳ Կենտրոնական բանկում, որտեղ զբաղեցրել է հետևյալ պաշտոնները՝ Գործառնական վարչության հաշվեգործառնական բաժնի հաշվապահ (1990-1992թթ.), Գործառնական վարչության տնտեսագիտական վերլուծությունների բաժնի տնտեսագետ (1992-1994թթ.), այնուհետև գլխավոր տնտեսագետ (1994թ.) և Վերահսկողության դեպարտամենտի առաջատար մասնագետ (1994-2000թթ.):

Այնուհետև տեղափոխվել է «Հայնեարտբանկ» ՓԲԸ, ներկայումս՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ, որտեղ աշխատելով առ այսօր՝ զբաղեցրել է հետևյալ պաշտոնները. ֆինանսական դեպարտամենտի Հաշվեկշիռների և հաշվետվությունների վերլուծության վարչության պետ (2000թ.), ֆինանսական հաշվետվությունների և ծախսերի վերահսկման վարչության պետ (2000-2001թթ.), ֆինանսական դեպարտամենտի կառավարչական հաշվապահության վարչության պետ (2001-2003թթ.), գլխավոր կառավարչական հաշվապահ (2003-2006թթ.), գլխավոր հաշվապահ կառավարչական հաշվապահության դեկավար (2006-2008թթ.): Ամերիա Խմբի կողմից Հայնեարտբանկի ձեռքբերումից հետո՝ 2008թ., նշանակվել է Տնօրինության անդամ գլխավոր հաշվապահ (2008թ.-ից առ այսօր): Գոհարին շնորհվել է փորձագետ հաշվապահի հավաստագիր Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կողմից:

Բանկային համակարգում աշխատանքը համատեղել է դասախոսական գործունեության հետ: Հաշվապահությանը վերաբերող մի շարք հրապարակումների համահեղինակ է:



Անդրանիկ Բարսեղյան
Տնօրինության անդամ, ռիկերի
կառավարման գծով տնօրեն

Տնօրինության անդամ է 2009թ. դեկտեմբերից: Ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) «Հաշվիչ տեխնիկա և ինֆորմատիկա» ֆակուլտետը, ՀՊՃՀ մագիստրատուրան, այնուհետև՝ ասպիրանտուրան՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Անդրանիկը մի շարք գիտական հոդվածների և հրապարակումների, այդ թվում՝ բանկային ռիսկերի կառավարման ինդիկատորներին վերաբերող նյութերի (Սևն միջազգային) հեղինակ է:

Բանկային գործի, տնտեսագիտության և ռիսկերի կառավարման ոլորտի կարկառուն ներկայացուցիչ է: Աշխատանքային գործունեությունը բանկային տեխնոլոգիաների ոլորտում սկսել է 1995թ. «Հայագրոբանկ» ԲԲԸում, որտեղ 1995-2002թթ. աշխատել է սկզբում որպես Իրացվելիության և ռեսուրսների կառավարման բաժնի պետ Բանկային տեխնոլոգիաների ավտոմատացման կառավարչությունում, այնուհետև որպես Բանկային ռիսկերի կարգավորման վարչության պետ և վերջապես որպես Ավտոմատացման վարչության պետ: 2003 թվականից աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸում որպես հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի պետ, այնուհետև՝ Ռիսկերի կառավարման վարչության պետ, բանկի Վարչության անդամ: «Ամերիաբանկ» ՓԲԸում աշխատանքի է անցել 2009թ.՝ որպես Ռիսկերի կառավարման գծով տնօրեն և Տնօրինության անդամ:



Արմինե Ղազարյան
Տնօրինության անդամ,
տաղանդների կառավարման և
ծառայությունների գծով տնօրեն

Տնօրինության անդամ է 2019թ. հոկտեմբերից: Ավարտել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը՝ «Արևելյան լեզուներ և գրականություն» մասնագիտացմամբ (1999թ.): 2009թ. ավարտել է ՀՀ Պետական կառավարման ակադեմիան՝ «Հանրային կառավարում» մասնագիտությամբ:

Մասնակցել է միջազգային ճանաչում ունեցող մի շարք հաստատությունների մասնագիտական դասընթացների ու միջոցառումների (Հարվարդի համալսարանի բիզնես-դպրոց, INSEAD համալսարանի բիզնես-դպրոց, Լոնդոնի համալսարանի բիզնես-դպրոց, Սթենֆորդի համալսարանի բիզնես-դպրոց, «Սկոլկովո» բիզնես-դպրոց, «Օքսֆորդ Թրեյնինգ», Սբերբանկի կորպորատիվ համալսարան, KFW բիզնես-դպրոց, Սիլիկոնյան հովտի կազմակերպություններ, Եվրոպական 15 առաջատար բանկ, Համաշխարհային տնտեսական համաժողով և այլն):

Արմինեն իր աշխատանքային գործունեությունը սկսել է 2001թ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸում՝ որպես Վարկային վարչության գործավար: 2004-2008թթ. իր մասնագիտական աճը շարունակել է մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում՝ նույն բանկում որպես անձնակազմի կառավարման բաժնի ղեկավար: 2008թ. հոկտեմբերին նշանակվել է Ամերիաբանկի Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար:

Հաշվի առնելով տիկին Ղազարյանի՝ մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում ունեցած հարուստ փորձն ու առաջնորդության հմտությունները՝ 2019թ. մայիսին նշանակվել է Ամերիաբանկի տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն: Նույն թվականի հոկտեմբերից զբաղեցնում է Տնօրինության անդամի, տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրենի պաշտոնը:


«Ամերիաբանկ» ՓԲԸ

Վարչակազմակերպական կառուցվածք

Հաստատվել է Տնօրենների խորհրդի 10.06.2024թի թիվ 05/24/06 որոշմամբ

Տնօրենների խորհրդի նախագահ՝ Անդրեյ Սկրոչյան

Ուժի մեջ է՝ 23.07.2024 թից





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԲԱՆԿԻ ՍՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՏԵՆՅԱԿ

Մեր անձնակազմը

2,326

Աշխատակիցների ընդհանուր թիվը (2025թ. վերջի դրությամբ)



Մենք կարևորում ենք վստահությունը, բաց մտածողությունը, ներգրավվածությունը և իմաստալից երկխոսությունը, որոնք մեր մշակույթի էական մասն են կազմում: Կարծում ենք, որ թափանցիկ հաղորդակցումը միավորում և հզորացնում է մարդկանց՝ յուրաքանչյուր աշխատակցին տալով իրական ձայնի իրավունք մեր աշխատավայրը ձևավորելու գործընթացում: Ղեկավարության և թիմերի միջև շարունակական երկխոսության միջոցով մենք ձևավորում ենք համաձայնեցվածություն, ներգրավվածություն և համատեղ պատասխանատվություն մեր ապագայի համար:

Մենք ակտիվորեն ներգրավում ենք աշխատակիցներին գլխավոր տնօրենի հետ առերես հանդիպումների, աշխատակազմի հետ քննարկումների և ինտերակտիվ հաղորդակցման այլ եղանակների միջոցով, ինչն ուղղակի և բաց կապուղիներ է ստեղծում աշխատակիցների և ղեկավարների միջև: Այդ հարթակները հնարավորություն են տալիս ներկայացնել բանկի ռազմավարությունը, հիմնական նորությունները և առաջնահերթ խնդիրները միաժամանակ ուշադիր լսելով աշխատակիցների կարծիքները, գաղափարներն ու մտահոգող հարցերը: Մենք ուղջունում ենք բաց երկխոսությունը, որի պայմաններում բոլորը կարող են հարց տալ, կարծիք հայտնել և զգալ, որ այդ կարծիքը կարևորվում է:

Գլխավոր տնօրենի հետ առերես հանդիպումները, որոնք կազմակերպվում են մեր ներքին Workvivo հարթակում, այդ բաց հաղորդակցման էկոհամակարգի կարևոր մաս են կազմում: Նման քննարկումները բոլոր մասնաճյուղերի և դեպարտամենտների աշխատակիցներին մշտապես հնարավորություն են ընձեռում՝ հաղորդակցվելու ղեկավարների հետ, ծանոթանալու ռազմավարական նշանակություն ունեցող նորություններին և մասնակցելու անկեղծ գրույցների: Չնարավորություն տալով աշխատակիցներին նախապես և անանուն կերպով ներկայացնելու իրենց հարցերը, մենք ստեղծում ենք ավելի ներառական միջավայր, որտեղ բոլորը կարող են իրենց անկաշվանդ և վստահ զգալ:

Դրանով մենք նաև բարելավում ենք ղեկավարության տեսանկյունից ու հասանելիությունը՝ առերես քննարկումներում ներգրավելով վերին օղակի ղեկավարներին: Տարբեր բիզնես ոլորտների, այդ թվում՝ ապակենտրոնացված թիմերի ղեկավարներին աշխատակիցների հետ բաց երկխոսության մեջ ներգրավելով մենք ապահովում ենք բանկի բոլոր մակարդակներում առկա տեսակետների ներկայացումը և դրանց մասին տեղեկացվածությունը: Այս մոտեցումը մեզ օգնում է մնալ համայնքաված և մեր թիմերի կարիքների մասին տեղեկացված, ինչպես նաև արձագանքել այդ կարիքներին:

Աշխատակազմի հետ քննարկումներն էլ ավելի են ամրապնդում մեր միասնությունն ու ընդհանուր նպատակ ունենալը: Ընդարձակ քննարկումներին մասնակցում են բոլոր բիզնես ոլորտների ղեկավարները՝ ռազմավարության, առաջնահերթությունների և ապագա ծրագրերի շուրջ համաձայնության գալու նպատակով, մինչդեռ հետգրասենյակային տարածքներում կազմակերպվող ավելի փոքր հանդիպումները ստեղծում են ավելի անհատական, անմիջական գրույցներ ունենալու հնարավորություն: Այս ձևաչափերը մեզ օգնում են կապ պահանջել բանկի բոլոր մակարդակներում և ապահովել, որ ղեկավարությունը մոտ լինի անձնակազմին:

Մենք առաջնահերթ ենք համարում նաև մշտական հաղորդակցումը հաճախորդներին սպասարկող մեր անձնակազմի հետ, որը տեղի է ունենում գլխավոր տնօրենի և ղեկավարների կողմից 33 մարզերում և Երևանում գտնվող մասնաճյուղերի պարբերական այցելությունների միջոցով: Այդ հանդիպումները հիմք են ստեղծում բաց հետադարձ կապի, ավելի խորը փոխմթերման և ղեկավարների ու աշխատակիցների միջև ավելի լավ հարաբերությունների ձևավորման համար՝ ամրապնդելով վստահության, թափանցիկության և փոխադարձ հարգանքի մշակույթը:

Հաղորդակցման նշված հարթակների և գործելակերպերի միջոցով մենք ստեղծում ենք այնպիսի միջավայր, որտեղ

մարդիկ իրենց զգում են տեղեկացված, ներգրավված և գնահատված կառուցելով բաց, ներառական և վստահության վրա հիմնված մշակույթ, որը նպաստում է ինչպես անհատական աճին, այնպես էլ ողջ կազմակերպության հաջողությանը:

2026թ. առաջնահերթ նպատակները

2026թ. մեր նպատակն է՝ արագացնել կայուն աճն ու նորարարությունների ներդրումը, ամրապնդել ապագա մարտահրավերներին պատրաստ անձնակազմը բարելավելով կազմակերպական կարողությունները՝ տաղանդների զարգացման, առաջնորդների և թիմերի հնարավորությունների ընդլայնման, տվյալների, արհեստական բանականության, տեխնոլոգիաների և պրոդուկտների գծով գիտելիքների ընդլայնման միջոցով: Հիմնական նպատակներն ու առաջնահերթ խնդիրները կլինեն.

- Ֆինտեխ միջավայր. բարձր արդյունավետությամբ թվային մշակույթ
- Հմուտ աշխատակազմի ռազմավարական կառավարում
- Ընդարձակ հնարավորություններով օժտված առաջնորդներ և ճկուն մտածողությամբ թիմեր
- Որակյալ և շարունակական ուսուցում
- Մշակույթով, արժեքներով առաջնորդվող, մարդակենտրոն անձնակազմ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությամբ
- Աշխատակիցների ապահովում ճկուն, արդյունավետ և տվյալահեն փորձով

Նպատակ ունենալով կիրառել լավագույն միջազգային փորձը, ինչպես նաև թիմակիցներին վերագինել արդի թվային հմտություններով՝ բանկը սերտորեն համագործակցելու է առաջատար հայաստանյան և միջազգային կազմակերպությունների հետ և իրականացնելու է զարգացման թիրախային նախագծեր: Հատուկ ուշադրության կենտրոնում են լինելու տվյալների կառավարումը, տվյալների հետ գրագետ աշխատանքը, վերլուծությունը և արհեստական բանականությունը, ինչպես նաև պրոդուկտները, տեխնոլոգիաներն ու թվային հնարավորությունները:


Համագործակցելով որոշ հայաստանյան և միջազգային ընկերությունների հետ՝ մենք նախատեսում ենք նախաձեռնել Tech Gen ծրագիրը երիտասարդ տաղանդների և նոր որակավորում ձեռք բերող մասնագետների համար, ինչպես նաև մասնագիտական համայնքների և հմտությունների վրա հիմնված գնահատման ու զարգացման մոդելների մշակման նպատակով:

Զարգացնելով առաջնորդության հմտությունները՝ մենք նախատեսում ենք իրականացնել քրոչիսթի, մենթորության, փոխարինելիության պլանավորման և ուսումնական ծրագրեր, որոնք կօգնեն ղեկավարներին՝ արդյունավետ, կայուն թիմեր կառուցելու գործում:

Ներգրավվածության ապահովման միջոցառումների շրջանակներում մենք շարունակելու ենք բարելավել հետադարձ կապի մշակույթը և իրականացնել ստացված կարծիքների և առաջարկների վրա հիմնված բարելավումներ: Մենք բարելավելու ենք աշխատանքի ընդունման, ուսուցման և ներքին հաղորդակցման ծրագրերը, վերանայելու և կատարելագործելու ենք խրախուսման մեխանիզմները և մշակելու ենք գնահատանքի նոր մոդելներ թիրախային խմբերի համար: Գործատուի հեղինակության ամրապնդումը և երիտասարդներին թիրախավորող մասնագիտական միջոցառումներին ակտիվ մասնակցությունը նույնպես նպաստելու են տաղանդների ներգրավմանը և համայնքի ձևավորմանը:

Ավտոմատացման, օպտիմալացված գործընթացների և անձնակազմի տվյալահեն կառավարման միջոցով մենք ծրագրում ենք ներդնել դեջբորդներ և կառավարման գործիքներ, որոնք կնպաստեն ղեկավարների կողմից ճիշտ, պատեհաժամ որոշումներ կայացնելուն և աշխատակիցների ու ղեկավարների փորձառության շարունակական բարելավմանը:

Գենդերային բաշխվածություն ըստ պաշտոնի տեսակի



05



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԵՏԻՆԳի ԳՆԱՀԱՏՈՒՄԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

Էջ 97-206

գործարար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԵՏԻՆԳի ԳՆԱՀԱՏՈՒՄԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԵՏԻՆԳի ԳՆԱՀԱՏՈՒՄԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԵՏԻՆԳի ԳՆԱՀԱՏՈՒՄԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԵՏԻՆԳի ԳՆԱՀԱՏՈՒՄԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



«Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
 Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
 Վ. Սարգսյան փ. 26/1
 «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
 Հեռախոս + 374 (10) 595 999
 Կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի («Բանկ») և վերջինիս դուստր ընկերությունների («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՅՄՄ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՅՄՄ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների Եթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՅԵՄՍԻ կանոնագրք), որը կիրառելի է հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների: Մենք կատարել ենք նաև Եթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջների և ՅԵՄՍԻ կանոնագրքի համաձայն: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի են ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում, և համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

«Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր սնունդով ընկերություն՝ «KPMG International Limited»-ի անդամակցող «Բեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ



«Ամերիաբանկ» ՓԲԸ
 Անկախ աուդիտորական եզրակացություն
 Էջ 2

Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստներ	
Տեղեկատվությունը ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 20-ում և Ծանոթագրություն 31-ի (գ) կետում:	
Աուդիտի առանցքային հարց	Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված աուդիտորական ընթացակարգեր
<p>Հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները կազմում են ընդհանուր ակտիվների 72%-ը և ներառում են ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը, որը գնահատվում է կանոնավոր հիմունքով և զգայուն է կիրառվող ենթադրությունների նկատմամբ, որոնք ներկայացված են ստորև:</p> <p>Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման մոդելը ղեկավարությունից պահանջում է կատարել մասնագիտական դատողություններ և ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված.</p> <ul style="list-style-type: none"> պարտքային ռիսկի նշանակալի աճի և պարտազանցման ռեպերի ժամանակին հայտնաբերում հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների հետ կապված (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՅՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» (այսուհետ՝ ՖՅՄՍ 9) համաձայն), պարտազանցման հավանականության, ներառյալ մոդելի արդյունքների ճշգրտման, և պարտազանցման ղեպքում առաջացող կորստի գնահատում, ապագայամետ տեղեկատվությունը ներառելու համար կատարված ճշգրտման գնահատում, ակնկալվող դրամական հոսքերի, այդ թվում՝ գրավի իրացումից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսում 3-րդ փուլ դասված հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների համար: <p>Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների մեծ ծավալի և ակնկալվող պարտքային կորուստների գումարների գնահատման բարդության և սուբյեկտիվության պատճառով, այս հարցը դիտարկվում է որպես աուդիտի առանցքային հարց:</p>	<p>Մենք վերլուծել ենք ակնկալվող պարտքային կորուստների գնահատմանը վերաբերող Բանկի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՅՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներգրավելով պարտքային ռիսկերի մեր ներքին մասնագետներին:</p> <p>Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարված մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.</p> <ul style="list-style-type: none"> Իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի փուլերի միջև բաշխումը վերահսկող մեխանիզմների կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը: Ֆիզիկական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք ժամկետանց օրերի հաշվարկը վերահսկող մեխանիզմների կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը, որոնք օգտագործվում է որպես հիմք վարկերը փուլերի միջև բաշխելու համար: Իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, արդյոք փուլերը ճիշտ են որոշված Բանկի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի կողմից կատարված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները: 1-ին և 2-րդ փուլերին բաշխված՝ իրավաբանական անձանց տրված վարկերի համար, որոնք գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են խմբային հիմունքով, գնահատել ենք համապատասխան մոդելների տեղին լինելը և համարել ենք մոդելի ելակետային տվյալներն առաջնային աղբյուրների տվյալների հետ՝ ընտրանքային կարգով:



	<ul style="list-style-type: none"> - Իրավաբանական անձանց տրված 1-ին և 2-րդ փուլերի վարկերի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք պարտքային ռիսկի ներքին վարկանիշային մոդելի տեղին լինելը և համադրել ենք մոդելի ելակետային տվյալներն առաջնային աղբյուրների տվյալների հետ՝ ընտրանքային կարգով: Գնահատել ենք պարտազանցման ռեպրում առաջացող կորուստի հաշվարկում օգտագործված ելակետային տվյալները՝ համեմատելով գրավի արժեքներն արտաքին գնահատողների հաշվետվությունների տվյալների հետ և ստուգելով կիրառված գեղջերի ճշտությունը և տեղին լինելը: Գնահատել ենք մոդելի արդյունքների ճշգրտման տեղին լինելը: - Իրավաբանական անձանց տրված 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք ապագա դրամական հոսքերի, այդ թվում՝ գրավի իրացումից ակնկալվող մուտքերի և իրացման ակնկալվող պայմանների կանխատեսման համար Բանկի կողմից կատարված ենթադրությունները՝ հիմք ընդունելով մեր պատկերացումները և շուկայում հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը: Հատուկ ուշադրություն ենք դարձրել հաճախորդներին տրված այն վարկերին և փոխառություններին, որոնք ըստ հավանականության կարող են առավել նշանակալի ազդեցություն ունենալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա: - Ֆիզիկական անձանց տրված վարկերի համար ընտրանքային կարգով ստուգել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մոդելներում օգտագործված ելակետային տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը՝ համեմատելով հիմքում ընկած գրանցումների և փաստաթղթերի հետ: - Ֆիզիկական անձանց տրված 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք՝ շուկայում հասանելի տեղեկատվության հետ համեմատության միջոցով, ապագա դրամական հոսքերի, այդ թվում՝ գրավի իրացումից ակնկալվող մուտքերը և իրացման ակնկալվող պայմանների կանխատեսման համար Բանկի կողմից կատարված ենթադրությունները: Ներգրավել ենք գնահատման մեր ներքին մասնագետներին պարտազանցման ռեպրում առաջացող կորուստի հաշվարկի համար օգտագործված գրավի արժեքների տեղին լինելը ընտրանքային կարգով գնահատելու համար:
--	---



	<ul style="list-style-type: none"> - Գնահատել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի Բանկի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2025թ. հունվարի 1-ի դրությամբ կատարված գնահատումները 2025թ. փաստացի արդյունքների հետ: - Գնահատել ենք ապագայամետ տեղեկատվությունը ներառելու նպատակով կատարված ճշգրտման համար կիրառված մակրոտնտեսական կանխատեսումների ճշգրտությունը և տեղին լինելը՝ կրկին իրականացնելով ռեգրեսիոն վերլուծություն և համեմատելով մակրոտնտեսական տվյալները հրապարակայնորեն հասանելի տեղեկատվության հետ: - Գնահատել ենք նաև, արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներն ըստ պատշաճի արտացոլում են Բանկի ենթարկվածությանը պարտքային ռիսկին:
--	--

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է տարեկան հաշվետվությունում ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում համախմբված ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի այս աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք չենք արտահայտի որևէ ձևի հավաստիացման եզրակացություն այդ տեղեկատվության վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պատասխանատվությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն դառնա հասանելի, և ծանոթանալիս դիտարկել, արդյոք այլ տեղեկատվությունն էականորեն չի համապատասխանում համախմբված ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքներին կամ այլ կերպ կարող է էականորեն խեղաթյուրված լինել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի հումքը լուծարելու կամ խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԱՍՏԻՂԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎՃԱՐՄԱՆ ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԱՍՏԻՂԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ



«Ամերիաբանկ» ՓԲԸ

Անկախ աուդիտորական եզրակացություն

Էջ 5

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ որպես մեկ ամբողջություն, զերծ են Եական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի Եական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են Եական, երբ խեղամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների Եական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած Եական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով Եական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված Եական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է Եական անորոշություն, մեզ կից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- պլանավորում և իրականացնում ենք խմբի աուդիտը խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ բիզնես միավորների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու համար՝ որպես հիմք խմբի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի նպատակով իրականացվող աուդիտորական աշխատանքների ուղղորդման, ղեկավարման և ստուգման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:



«Ամերիաբանկ» ՓԲԸ

Անկախ աուդիտորական եզրակացություն

Էջ 6

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի համապատասխան պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հարողակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ իրավական ակտով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի համար պատասխանատու ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է այս աուդիտորական եզրակացությունը, Լուսինե Սարգսյանն է:



 Լուսինե Սարգսյան
 Աուդիտորական առաջադրանքի
 պատասխանատու ղեկավար
 Իրիսա Գևորգյան
 «ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԿՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի տնօրեն
 ղեկավար գործընկեր

KPMG Armenia
«ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԿՐՄԵՆԻԱ» ՍՊԸ
11 մարտի 2026թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԵՆՏՐԱԿԱԼ ԲԱՆԿԻ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ


	Ծնթգ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեղջորդվ հաշվարկված տոկոսային եկամուտ	6	180,687,463	136,794,320
Այլ տոկոսային եկամուտ	6	10,306,226	6,795,841
Տոկոսային ծախս	6	(71,749,824)	(49,770,188)
Չուտ տոկոսային եկամուտ		119,243,865	93,819,973
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	7	27,328,743	20,210,576
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	7	(7,536,224)	(3,957,101)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		19,792,519	16,253,475
Չուտ օգուտ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով	8	2,744,152	273,779
Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	9	19,618,268	23,729,562
Չուտ օգուտ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով		172,655	258,605
Այլ գործառնական եկամուտ	10	2,990,252	3,866,671
Բանկային ուղղակի ծախսեր	11	(12,510,364)	(8,819,141)
Գործառնական եկամուտը մինչև արժեգրկումը և այլ վարչական ծախսերը		152,051,347	129,382,924
Ֆինանսական գործիքների արժեգրկումից զուտ կորուստներ	12	(3,879,494)	(1,586,075)
Այլ արժեգրկում և պահուստներ		(14,228)	(18,752)
Գործառնական եկամուտը արժեգրկումից հետո և մինչև այլ վարչական ծախսերը		148,157,625	127,778,097
Անձնակազմի գծով ծախսեր	13	(44,254,713)	(41,887,053)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	14	(15,025,255)	(11,957,780)
Ճահույթ մինչև շահութահարկով հարկումը		88,877,657	73,933,264
Ճահութահարկի գծով ծախս	15	(16,268,662)	(13,903,928)
Տարվա շահույթ		72,608,995	60,029,336
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք առանց շահութահարկի			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ			
- իրական արժեքի զուտ փոփոխություն		1,073,723	683,684
- շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար		(141,577)	(212,056)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս՝ առանց շահութահարկի		932,146	471,628
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի		932,146	471,628
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		73,541,141	60,500,964

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Բազային	30	619.89	512.49
Նոսրացված	30	619.89	512.49

9-ից 107-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Տնօրինության կողմից 2026թ. մարտի 11-ին և ստորագրվել են վերջինիս անունից:


Արտակ Չանեսյան
 Տնօրինության նախագահ, զիջավոր տնօրեն




Միեր Կանդալյան
 Գլխավոր հաշվապահի տեղակալ

ԱԿՏԻՎՆԵՐ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
 Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
 - Խմբի կողմից պահվող
 - Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված
 Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր
 - Խմբի կողմից պահվող
 - Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված
 Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր
 - Խմբի կողմից պահվող
 - Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված
 Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ
 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ
 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ
 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ
 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ
 Չետաձգված հարկային ակտիվ
 Բռնագանձված ակտիվներ
 Այլ ակտիվներ

**Ընդամենը ակտիվներ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ
 Բանկերի ավանդներ և մնացորդներ
 Չետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ
 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ
 Թողարկված պարտքային արժեթղթեր
 Այլ փոխառու միջոցներ
 Ստորադաս փոխառություններ
 Ընթացիկ հարկային պարտավորություն
 Փոխատվության հանձնառությունների գծով պահուստ
 Վարձակալության գծով պարտավորություն
 Այլ պարտավորություններ

**Ընդամենը պարտավորություններ
 ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ**

Բաժնետիրական կապիտալ
 Էմիսիոն եկամուտ
 Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ
 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ
 Չբաշխված շահույթ
Ընդամենը սեփական կապիտալ
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ

	Ծնթգ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
	16	109,462,529	198,947,225
17(ա)			
		19,506,233	26,271,864
		-	3,840,589
17(բ)			
		35,791,403	12,719,759
		-	6,737,551
17(գ)			
		178,100,162	116,758,955
		20,883,372	38,145,422
18		163,933,651	85,290,615
19		55,781,510	28,760,592
20		1,672,455,584	1,309,937,917
21		24,738,034	20,211,084
22		12,470,937	10,977,803
15		12,085	1,995,423
20		635,895	856,337
23		40,995,076	21,056,704
		2,334,766,471	1,882,507,840
17(ա)		178,471	487,082
24		95,759,071	68,619,504
29		23,365,343	45,064,852
25		1,362,273,949	1,122,212,988
26		167,840,072	163,153,204
27		256,571,872	135,933,377
27		36,909,678	27,996,197
		8,351,651	9,344,009
33		784,561	236,484
22		14,692,281	12,839,765
28		31,091,143	40,332,079
		1,997,818,092	1,626,219,541
30			
		54,466,380	54,466,380
		274,861	274,861
		492,201	(439,945)
		7,118,939	-
		274,595,998	201,987,003
		336,948,379	256,288,299
		2,334,766,471	1,882,507,840

	Ծնթ.թ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		187,548,437	142,734,218
Վճարված տոկոսներ		(65,534,340)	(48,872,027)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ		27,328,743	20,210,576
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(7,536,224)	(3,957,101)
Զուտ մուտքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից		2,412,368	1,371,562
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	9	19,757,847	23,664,321
Զուտ այլ գործառնական վճարումներ		(9,552,081)	(4,952,470)
Աշխատավարձ և այլ վճարումներ աշխատակիցներին		(45,949,766)	(35,556,396)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(8,302,749)	(6,788,827)
Գործառնական ակտիվների (աճ)/սվազում			
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		10,947,404	(15,598,131)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ		(78,111,260)	3,206,079
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		(27,070,280)	(13,485,214)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		(363,748,758)	(341,253,250)
Այլ ակտիվներ		(19,834,075)	(3,238,602)
Գործառնական պարտավորությունների (սվազում)/աճ			
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		(849,398)	(725,338)
Բանկերի ավանդներ և մնացորդներ		26,367,715	15,554,818
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		(21,685,653)	27,775,465
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		239,267,077	231,249,111
Այլ պարտավորություններ		(376,959)	3,605,914
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը		(134,921,952)	(5,055,292)
Վճարված շահութահարկ		(15,475,054)	(12,173,885)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր		(150,397,006)	(17,229,177)
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	21	(9,842,748)	(9,013,580)
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(24,868,240)	(275,594)
Մուտքեր իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից		9,889,114	5,856,845
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(480,205,961)	(285,276,361)
Մուտքեր ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի մարումից		434,772,521	227,407,704
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր		(70,255,314)	(61,300,986)
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	22	(1,101,132)	(1,042,880)
Ստացված այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	27	158,039,868	129,780,529
Այլ փոխառու միջոցների և ստորադաս պարտավորությունների մարում	27	(31,846,488)	(25,706,499)
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	26	63,451,503	76,234,658
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	26	(57,083,627)	(28,965,492)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր		131,460,124	150,300,316
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (սվազում)/աճ		(89,192,196)	71,770,153
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(292,318)	(6,016,741)
Արժեզրկման գծով պահուստի փոփոխությունների ազդեցությունը		(182)	105
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեկազբի դրությամբ		198,947,225	133,193,708
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեկազբի դրությամբ	16	109,462,529	198,947,225

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ	Զբաղյալված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
հազ. դրամ						
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ		274,861	(911,573)	-	141,957,667	195,787,335
Տարվա շահույթ	-	-	-	-	60,029,336	60,029,336
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ						
- իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	683,684	-	-	683,684
- շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	-	-	(212,056)	-	-	(212,056)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	471,628	-	60,029,336	60,500,964
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,466,380	274,861	(439,945)	-	201,987,003	256,288,299
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	54,466,380	274,861	(439,945)	-	201,987,003	256,288,299
Տարվա շահույթ	-	-	-	-	72,608,995	72,608,995
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ						
- իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	1,073,723	-	-	1,073,723
- շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	-	-	(141,577)	-	-	(141,577)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	932,146	-	72,608,995	73,541,141
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում						
Բաժնային գործիքներով մարվող՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծանոթագրություն 13)	-	-	-	7,118,939	-	7,118,939
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	-	-	-	7,118,939	-	7,118,939
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,466,380	274,861	492,201	7,118,939	274,595,998	336,948,379

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1. Ընդհանուր տեղեկատվություն

(ա) Կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայներարտբանկ» ՓԲԸ) (Բանկ) հիմնադրվել է 1992թ. դեկտեմբերի 8-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: 2007թ-ին Բանկի բաժնետիրական կապիտալի 96.15%-ի ձեռք բերեց «Թի-Դի-Էյ Դոլդինգս Լիմիթեդ» ընկերությունը, որը 2011թ-ին անվա- նափոխվեց «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթեդ» ընկերության: 2013թ-ին «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) Լիմիթիդ ձեռք բերեց Բանկի բաժնետիրական կապիտալի 100%-ը:

2015-2020թթ. «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ)» ընկերությունն իր բաժնետոմսերի մի մասը վաճառեց Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին (ՎՋԵԲ), Ասիական զարգացման բանկին (ԱՋԲ), «Ի-Էս-Փի-Էս Դոլդինգ Լիմիթեդ» ընկերությանը և «Աֆեյան Նախաձեռնություններ Հայաստանի համար» հիմնադրամ ԻՆԿ.: 2020թ. հուլիսի 14-ին «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ)» ընկերությունը անվանափոխվեց «Իմաստ Գրուպ (Սի-Ուայ)» ընկերության:

2021-2023թթ. ընթացքում Բանկը թողարկեց լրացուցիչ 298 բաժնետոմսեր, որոնք ձեռք բերվեցին «Ի-Էս-Փի-Էս Դոլդինգ Լիմիթեդ» ընկերության կողմից՝ 288,996 հազար դրամով: 2024թ. ապրիլի 3-ին «Լայըն Ֆայնենս Գրուպ» ՀՄՊԸ (նախկինում՝ «Բենք օֆ Ջորջիա Գրուպ» ՀՄՊԸ) և «Բենք օֆ Ջորջիա» ԲԸ ձեռք բերեցին Բանկի բաժնետոմսերի 90%-ը:

Ստորև ներկայացված է Բանկի բաժնետերերի կազմը 2025թ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
«Լայըն Ֆայնենս Գրուպ» ՀՄՊԸ	60.00%	60.00%
«ՋիԷսՍի Բենք օֆ Ջորջիա» ԲԸ	30.00%	30.00%
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎՋԵԲ)	10.00%	10.00%
	100.00%	100.00%

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպա- սարկումը, վարկերի և երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնություննե- րի և արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգա- վորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեության լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի ան- դամ է: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանում:

Բանկն ունի 29 մասնաճյուղ (2024թ-ին՝ 25 մասնաճյուղ), որոնց միջոցով իրականացնում է իր գործու- նեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան փ. 2:

2023թ. ապրիլի 21-ին և 2023թ. ապրիլի 28-ին Բանկը հիմնադրեց երկու դուստր ընկերություն՝ համապա- տասխանաբար «Ինվիզա» ՓԲԸ-ն և «Դինևո» ՓԲԸ-ն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն (Բանկը և դուստր ընկերությունները միասին անվանվում են «Խումբ»):

Բանկին է պատկանում երկու դուստր ընկերությունների բաժնետոմսերի 100%-ը: Դուստր ընկերություն- ները գտնվում են մեկնարկային փուլում, և այդ ընկերությունների պլանավորված հիմնական գործու- նեությունն իրավասորիորդատվական և թվային տեխնոլոգիաների հետ կապված ծառայությունների մատուցումն է: Դուստր ընկերությունների ֆինանսական արդյունքները ներառված են այս համախմբ- ված ֆինանսական հաշվետվություններում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի մայր ընկերությունն է «Լայըն Ֆայնենս Գրուպ» ՀՄՊԸ -ն: 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չուներ վերջնական հսկող կողմ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի աշխատակիցների թիվը կազմում էր 2,326 (2024թ-ին՝ 2,036):

Կապակցված կողմերի հետ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 35-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ է զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ և միտված են բարելավման վերջին տարիների ընթացքում:

Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարատև ռազմական հակամարտությունից հետո երկու երկրների միջև խաղաղ բանակցությունները և սահմանազատման գործընթացը դեռ ընթացքի մեջ են: 2025թ. օգոստոսին Հայաստանը և Ադրբեջանը ստորագրեցին համատեղ հռչակագիր, որով արտահայտեցին երկկողմ հարաբերությունները կարգավորելու փոխադարձ մտադրություն և որը ներառում էր հանձնառություններ ուղղված լարվածության նվազեցմանը, սահմանազատման շուրջ քննարկումների

առաջխաղացմանը և տարածաշրջանում կայունության խթանմանը: Այնուամենայնիվ, հռչակագրի գործնական իրականացումը և երկարաժամկետ ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա մնում են անորոշ:

Միևնույն ժամանակ Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող հակամարտությունը շարունակում է անորոշություն ստեղծել բիզնես միջավայրում:

Վերջին տարիներին Հայաստանի տնտեսությունը հաջողությամբ դիմակայել է համաշխարհային տնտեսական ցնցումներին և կարողացել է գրանցել տպավորիչ մակրոտնտեսական ցուցանիշներ՝ 2022-2023թթ. մի շարք ընկերությունների Հայաստան տեղափոխվելու և դրամական փոխանցումների կշանակալի աճի շնորհիվ: 2025թ-ին տնտեսական ակտիվության բարձր մակարդակը, մասնավորապես արտաքին առևտրաշրջանառության արագ աճը, շարունակեցին նպաստել այդ աճին: Նշված գործոնները հանգեցրել են 2025թ-ին ՀՆԱ-ի 7.2% աճի՝ ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի: Չնայած որ Հայաստանի տնտեսական աճը դանդաղեց 2025թ.սկզբին՝ պայմանավորված նախորդ տարիների շարժիչ ուժերի որոշակի չեզոքացմամբ, այնուամենայնիվ, երկրորդ եռամսյակից սկսած աճի տեմպերը կրկին վերականգնվեցին՝ պայմանավորված արդյունաբերական ոլորտի անկման տեմպերի դանդաղման և ծառայությունների, շինարարության և գյուղատնտեսության ոլորտներում արձանագրված կայուն աճով: Կառավարության 2021-2026թթ. տնտեսական ծրագիրը նպատակ ունի խթանել արտահանմանը միտված և ներդրումների վրա հիմնված աճի մոդելը լայնածավալ բարեփոխումների միջոցով:

2025թ. հունիսի 26-ին «Moody’s» վարկանիշային գործակալությունը վերահաստատեց Հայաստանի վարկանիշը Ba3 մակարդակում՝ «Կայուն» հեռանկարով: 2026թ. հունվարի 16-ին «Fitch» գործակալությունը Հայաստանի վարկանիշի հեռանկարը բարձրացրեց «Կայուն» կարգավիճակից «Դրական» կարգավիճակի՝ հաստատելով BB- վարկանիշը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահա- կան հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով, քանի որ ղեկավարությունը համոզված է, որ Խումբն ունի բավարար ռեսուրսներ տեսանելի ապագա- յում գործունեությունն անընդհատության հիմունքով շարունակելու համար: Այս գնահատումն իրակա- նացնելիս ղեկավարությունը դիտարկել է տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ կանխատես- վող շահութաբերությունը, կարգավորող մարմնի կողմից կապիտալին ներկայացվող պահանջները և պահանջվող ֆինանսական միջոցները: Պահատումն իրականացնելիս դիտարկվել են նաև ողջամ- տորեն հնարավոր բացասական տնտեսական սցենարները և դրանց հնարավոր ազդեցությունը Խմբի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

(բ) Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային ար- ժեթղթերի, որոնք չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի և վերջինիս դուստր ընկերությունների ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Խմբի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև հազարա- վորը, եթե այլ բան նշված չէ: 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 381.36 դրամ և 396,56 դրամ 1 ԱՄՆ դոլա- րի համար և 449.01 դրամ և 413,89 դրամ 1 եվրոյի համար:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստան-

դարտների պահանջներին համապատասխան պատրաստելու համար դեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Գնահատումների փոփոխությունները ճանաչվում են առաջընթաց:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ՝ Ծանոթագրություն 4 (ե) (i),
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, ակնկալվող պարտքային կորուստների չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանության որոշում և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն՝ Ծանոթագրություն 31 (գ):

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի ելակետային տվյալները, այդ թվում՝ հատուցման ենթակա դրամական հոսքերը գնահատելու համար կիրառվող հիմնական ենթադրությունները և ապագայամետ տեղեկատվության ներառումը՝ Ծանոթագրություն 31 (գ),
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում՝ Ծանոթագրություն 36:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի փոփոխություններ

Խումբը ժամանակից շուտ չի կիրառել իրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած որևէ նոր ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Որոշ փոփոխություններ և մեկնաբանություններ առաջին անգամ կիրառվում են 2025թ-ին, սակայն նշանակալի ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար Խմբի անդամ ընկերությունների կողմից:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Բանկի և վերջինիս դուստր ընկերությունների ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթով այդ ամսաթվի փոխարժեքով: Դրամային հողվածների գծով արտարժույթով գործառնություններից օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով ամորտիզացված արժեքի՝ ճշգրտված ժամանակաշրջանի ընթացքում արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսներ:

րի և վճարումների մասով, և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթով իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հողվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդներն, այդ թվում՝ ՀՀ դրամով պարտադիր պահուստը և այլ բանկերում պահվող՝ օգտագործման սահմանափակում չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը գերչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Խումբը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լրղացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են:

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները:

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և կորուստներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապահանջվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշոջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այդ գնահատումը լավագույնս արտացոլում է, թե ինչպես է գործունեությունը կառավարվում և ինչպես է այդ տեղեկատվությունը տրամադրվում ղեկավարությանը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառումը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, տոկոսային եկամտաբերության որոշակի մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են տվյալ ակտիվներով կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Խմբի ղեկավարությանը:
- ռիսկերը, որոնք ազդում են բիզնես մոդելի վրա (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների վրա) և ինչպես են այդ ռիսկերը կառավարվում:
- ինչպես են վարձատրվում բիզնեսը կառավարող մենեջերները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՛ հավաքագրված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես ընդհանուր գնահատման մաս այն մասին, թե՛ ինչպես է իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման Խմբի նպատակը և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

վերազնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է հեջի ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե՛ որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված այլ տոկոսային եկամուտը ներառում է իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ պարտքային ֆինանսական գործիքների և ֆինանսական վարձակալություններում զուտ ներդրումների գծով տոկոսային եկամուտը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես Ծանոթագրություն 4 (զ)):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել \$ՀՄՍ 9-ի և մասնակիորեն՝ \$ՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Խումբը նախ կիրառում է \$ՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է \$ՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է \$ՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով և սպասարկման վճարներին, որոնք առաջանում են հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից: Ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են եկամտի առաջացմանը և չեն բխում հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից, Խումբը դասակարգում է որպես այլ գործառնական ծախսեր: Մնացած բոլոր ծախսերը դասակարգվում են որպես ընդհանուր վարչական ծախսեր:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվներում առաջացած կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաժմախմբված հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Խումբը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Խումբը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Խումբը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ իր պայմանագրային պարտակաևությունները կատարվում են կամ չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են:

iii. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերափոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերափոխվում են, Խումբը գնահատում է, արդյոք վերափոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի վերափոխում»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է Նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես վերափոխման մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են Նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,

- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես վերափոխում, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ, եթե Խումբը փոփոխում է տոկոսադրույքները ԶՅ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխության արդյունքում, եթե վարկային պայմանագրով իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են վերափոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Խումբը գնահատում է վերափոխման նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,

- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության:

Եթե դրամական հոսքերի վերափոխումը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն վերափոխման նպատակն է առավելագույն չափով վերականգնել սկզբնական պայմանագրային պայմանները, այլ ոչ սկզբնավորել Նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Խումբը մտադիր է այնպես վերափոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրս գրվի նախքան վերափոխում կատարելը (տես ստորև ներկայացված դուրսգրման քաղաքականությունը): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման պայմանները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Խումբն իրականացնում է նաև որակական գնահատում վերափոխման նշանակալի լինելը գնահատելու համար:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսներ

Այդ գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» ներառում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցումը և շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այդ դիտարկման ժամանակ գնահատվում է, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվն այլևս չբավարարի այդ պայմանը: Գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման պայմանը,

- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,

- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվ) և

- պայմանները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքի պարբերաբար վերասահմանումը:

Խումբն ունի հաստատուն տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի պորտֆել, որի համար հնարավորություն ունի վերանայել տոկոսադրույքը ԶՅ ԿԲ-ի կողմից սահմանված հիմնական տոկոսադրույքի փոփոխության դեպքում: Փոխառուն հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ կամ մարել վարկն անվանական արժեքով առանց տուգանքի: Խումբը որոշել է, որ այդ վարկերի պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ, քանի որ այդ հնարավորությունից օգտվելու դեպքում տոկոսադրույքն այնպես է փոփոխվում, որ դառնում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի համար հատուցում: Փոխարենը, Խումբն այդ վարկերը դիտարկում է որպես ըստ էության լողացող տոկոսադրույքով վարկեր (տես Ծանոթագրություն 4 (ե) (iii)):

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

ii. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ Նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ Նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի հանրագումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում։

Խումբը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար կորստի պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ (բացառությամբ ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումների), որոնց գծով պարտքային ռիսկը Նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես Ծանոթագրություն 31 (գ))։

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից։ Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ։

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում։ Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկը Նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, բայց ֆինանսական գործիքը պարտքային առումով արժեզրկված չէ) և 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքը պարտքային առումով արժեզրկված է)։

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ՝* որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Խմբին հասանելիք դրամական հոսքերի և Խմբի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ՝* որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն,
- չօգտագործված փոխատվության հանձնառություններ՝* որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Խմբին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Խումբն ակնկալում է ստանալ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր՝* որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած ցանկացած գումար, որը Խումբն ակնկալում է հետ ստանալ։

Տես նաև Ծանոթագրություն 31 (գ)։

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ վերափոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 4 (ե) (iii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա վերափոխված ֆինանսական ակտիվից առաջացող՝ ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես Ծանոթագրություն 31 (գ))։

- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեթ՝ վերջինիս ապա-

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Խումբը՝ նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես վերափոխումից օգուտ կամ կորուստ՝ շահույթում կամ վնասում։ Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար վերափոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու նպատակով օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները վերափոխման պահին։ Վերափոխման շրջանակում կրած ցանկացած ծախս կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է վերափոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում։

Եթե նման վերափոխումն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա վերափոխումից օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին։ Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ։

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց Էական տուգանքի, Խումբը հաշվառում է տոկոսադրույքի վերափոխումը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը։ Դա Նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց։

Ֆինանսական ակտիվների վերափոխումները, որոնք տեղի են ունեցել այն ժամանակահատվածում, երբ դրանց գծով կորստի պահուստը չափվել է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, Էական ազդեցություն չեն ունեցել շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության վրա 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում։

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորության դրամական հոսքերը Նշանակալիորեն տարբեր են։ Այդ դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով։ Մարված ֆինանսական պարտավորության և վերափոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում։ Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր վերափոխված ֆինանսական պարտավորությունը։

Խումբն իրականացնում է վերափոխման Նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը։ Խումբը եզրահանգում է, որ վերափոխումը Նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,

- փոխարկման հնարավորության ներառում,

- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն։

Քանակական գնահատման համար պայմանները Նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները՝ առանց ստացված վճարների, և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, Նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից։

Եթե ֆինանսական պարտավորության վերափոխումը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով վերափոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում։ Լողացող տոկոսադրույքով ֆինանսական պարտավորությունների համար վերափոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու նպատակով օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները վերափոխման պահին։ Ցանկացած կրած ծախս կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճզգրտում և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական պարտավորության մնացած ժամկետի ընթացքում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով։

iv. Արժեզրկում

Տես նաև Ծանոթագրություն 31 (գ)։

Խումբը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով հետևյալ ֆինանսական գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

^[1] Քանակական գնահատման համար պայմանները Նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները՝ առանց ստացված վճարների, և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, Նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից

ճանաչման ժամանակ: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները և զուտ ներդրումները ֆինանսական վարձակալությունում պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի Նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, մասնավորապես, պարտագանցումը կամ ժամկետանց դառնալը,
- Խմբի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը Նշանակալիորեն Նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, ֆիզիկական անձանց դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Խումբը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքային գործիքների թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանակությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում Նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Դա ներառում է այդ մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*՝ որպես Նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- *փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ սովորաբար որպես պահուստ,
- *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Խումբը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին*՝ Խումբը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես Նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկն օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի Նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ,

- *իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ*՝ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այդ ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում է ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ Խումբը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Դա սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Խումբը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները վերադարձնելու համար: Այդ գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր կատարման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանություն և ապահովելու նպատակով:

(գ) Զաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը, ֆակտորինգի գծով ստացվելիք գումարները և ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարները (տես Ծանոթագրություն 4 (ե) (ii)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և
- զուտ ներդրումները ֆինանսական վարձակալությունում:

(ե) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը պարտավորությունը Նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

(ը) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Խմբից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են Նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ Նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես Ծանոթագրություն 4 (ե) (iii)) և սկզբնապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Խումբը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Խումբը ճանաչում է կորստի պահուստ (տես Ծանոթագրություն 4 (ե) (iii))՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

(թ) Հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրեր

Վաճառքի և հետզնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, իսկ պայմանագրի կողմի պարտա-

Չեղարկված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ակտիվների ու պարտավորությունների ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող հաշվեկշռային արժեքների և հարկման բազաների միջև ժամանակավոր տարբերությունների գծով։
Չետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի և ո՛չ հարկվող շահույթի վրա։

Չետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային գեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել։ Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների վերացումից առաջացող գումարի հիման վրա։ Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Խմբի գործարար ծրագրերի հիման վրա։
Չետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի։ Այդ նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը։

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել։

Չետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքաչփերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս մարելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ։

Չետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները։

(ծ) Զամախմբման հիմունքներ

(i) Դուստր ընկերություններ
Դուստր ընկերությունները Խմբի կողմից հսկվող ընկերություններ են։ Խումբը հսկողություն ունի ընկերության նկատմամբ, երբ այդ կազմակերպությունում իր ներգրավվածության արդյունքում այն ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և ընկերության նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն։ Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ հսկողությունը սկսելու պահից մինչև հսկողության դադարեցումը։

(ii) Զամախմբման ընթացքում բացառվող գործառնություններ

Ներխմբային հաշվարկների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են։

(կ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր հաշվապահական հաշվառման ստանդարտներ և հաշվապահական հաշվառման ստանդարտների փոփոխություններ գործում են 2025թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների և փոփոխությունների վաղաժամ կիրառումը։ Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված հաշվապահական հաշվառման ստանդարտները։

(i) Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում (ՖՅՄՍ 9 և ՖՅՄՍ 7 փոփոխություններ)

2024թ. մայիսին Չաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը հրապարակել է ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխությունները, որոնց արդյունքում փոփոխություններ են կատարվել ՖՅՄՍ 9-ում և ՖՅՄՍ 7-ում։

Պահանջները գործում են 2026թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, թույլատրվում է դրանց վաղաժամ կիրառումը և վերաբերում են՝

– ճանաչմանը և ապաճանաչմանը, այդ թվում՝ էլեկտրոնային վճարային համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարման հաշվառմանը, և

– ֆինանսական ակտիվների, ներառյալ կայուն զարգացման հետ կապված բնութագրեր ունեցող ակտիվների, պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերի գնահատմանը։

վորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում։ Վաճառքի և հետգնման գների միջև տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։

Չետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները։ Ձեռքբերման և վերավաճառքի գների միջև տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առնտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով։

Գրանցված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ակտիվների ու պարտավորությունների ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող հաշվեկշռային արժեքների և հարկման բազաների միջև ժամանակավոր տարբերությունների գծով։

(ժ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ։ Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ հաշվի առնելով հարկերը։

(ii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ։

(iii) Ծախաբաժիններ

Ծախաբաժիններ հայտարարելու և վճարելու Խմբի կարողությունը կարգավորվում է Չայաստանի Չանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով։

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են։

Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահույթի և շահաբաժինների մարումները ճանաչվում են ակտիվների և պարտավորությունների ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող հաշվեկշռային արժեքների և հարկման բազաների միջև ժամանակավոր տարբերությունների գծով։

(ի) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Խումբը ներկայացնում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նուսրացված շահույթի վերաբերյալ տվյալներ իր սովորական բաժնետոմսերի համար։ Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է Խմբի սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը բաժանելով այդ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին՝ ճշգրտված Խմբին պատկանող բաժնետոմսերի թվով։ Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուսրացված շահույթը որոշվում է ճշգրտելով Խմբի սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը և շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի կշռված միջին թիվը՝ ճշգրտված Խմբին պատկանող բաժնետոմսերի թվով՝ բոլոր նուսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի ազդեցությունը հաշվի առնելու համար, որոնք իրենցից ներկայացնում են աշխատակիցներին տրամադրված փոխարկելի պարտատոմսեր և բաժնետոմսերի օպցիոններ։

(յ) Սեզմենտային հաշվետվություններ

Գործառնական սեզմենտը Խմբի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեությունում, որից կարող է վաստակել հասույթ և կրել ծախսեր (ներառյալ Խմբի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթը և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Տնօրինության կողմից՝ սեզմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն։ Խմբի սեզմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեզմենտների վրա՝ մանրածախ բանկային գործունեություն, կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն, առնտրային գործառնություններ։

(խ) Գարկում

Ծախութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից։ Ծախութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում։

Ընթացիկ հարկը ներառում է հարկի այն գումարը, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող շահույթի գծով կիրառելով հարկի դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները։

Խմբի գնահատմամբ փոփոխությունները նշանակալի ազդեցություն չեն ունենա համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(ii) ՖՅՄՍ 18 «Տեղեկատվության ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում»

ՖՅՄՍ 18-ը կփոխարինի ՖՅՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները:

- Կազմակերպություններից պահանջվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտները և ծախսերը դասակարգել ըստ հինգ դասերի՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, ընդհատված գործառնություններ և շահութահարկ: Կազմակերպություններից նաև պահանջվում է ներկայացնել նոր սահմանված գործառնական շահույթի ենթագումարը: Կազմակերպության զուտ շահույթը չի փոխվի:
- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչները բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների մեկ ծանոթագրությունում:
- Տրվում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվությունը խմբավորելու վերաբերյալ:

Բացի այդ բոլոր կազմակերպություններից պահանջվում է օգտագործել գործառնական շահույթի ենթագումարը որպես մեկնարկային կետ դրամական հոսքերի մասին հաշվետվության համար՝ անուղղակի մեթոդով գործառնական գործունեության դրամական հոսքերը ներկայացնելիս:

Ներկայումս Խումբը գնահատում է նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես, շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվության, դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվության կառուցվածքի և ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ կապված: Խումբը նաև գնահատում է ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

(iii) Այլ հաշվապահական հաշվառման ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Բնական աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրեր (ՖՅՄՍ 9-ի և ՖՅՄՍ 7-ի փոփոխություններ)
- ՖՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան կատարելագործումներ՝ հրապարակում 11

5. Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակների համար Խմբի գործունեությունը բաժանված է հետևյալ երեք գործառնական սեզմենտների՝ հիմք ընդունելով մատուցվող պրոդուկտները և ծառայությունները:

Մանրածախ բանկային գործունեություն	Ֆիզիկական անձանց, փոքր և միկրո ձեռնարկությունների ավանդների սպասարկում, սպառողական վարկերի, օվերդրաֆտների, վարկային քարտերի, փոքր և միկրո վարկերի տրամադրում:
Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն	Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի և վարկային գծերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների սպասարկում, ներդրումային բանկային, այդ թվում՝ անդերրայթինգի ծառայությունների և ֆինանսական խորհրդատվության տրամադրում:
Առևտրային բանկային գործունեություն	Արտարժույթի առուվաճառքի գործառնություններ, պարտատոմսերի պրոտֆեյի կառավարում, կարճաժամկետ միջոցների ներգրավվում կամ տրամադրում միջբանկային վարկերի միջոցով, հետգնման պայմանագրերի կնքում իրացվելիության կառավարման նպատակների համար, բրոքերային ծառայությունների մատուցում և այլն:

Ռեսուրսների բաշխման և գործունեության վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով՝ ղեկավարությունը վերահսկում է իր ստորաբաժանումների գործունեության արդյունքներն առանձին հիմունքով: Ծահութահարկը բաշխվում է գործառնական սեզմենտների միջև՝ հիմք ընդունելով շահույթի համամասնությունը միջև և շահութահարկով հարկումը:

Գործառնական սեզմենտների միջև տեղափոխումների գները սահմանվում են անկախ կողմերի միջև գործարքի հիմունքով, ինչպես և երրորդ կողմերի հետ գործարքների համար: Սեզմենտի տարվա շահույթը օգտագործվում է յուրաքանչյուր գործառնական սեզմենտի կատարողականը գնահատելու համար, քանի որ ղեկավարությունը գտնում է, որ այդ տեղեկատվությունն առավել կարևոր է համապատասխան սեզմենտի գործունեության արդյունքները գնահատելու համար:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված տեղեկատվություն Խմբի գործառնական սեզմենտների եկամտի և շահույթի, որոշ ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ:

	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2025թ.				
Զուտ տոկոսային եկամուտ	52,252,881	49,113,482	17,877,502	119,243,865
Զուտ ոչ տոկոսային եկամուտ*	9,359,920	12,388,746	11,058,816	32,807,482
Միջսեզմենտային եկամուտ	8,259,592	8,857,498	(17,117,090)	-
Գործառնական եկամուտը մինչև արժեզրկումը և այլ վարչական ծախսերը	69,872,393	70,359,726	11,819,228	152,051,347
Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ	(6,406,252)	2,526,758	-	(3,879,494)
Այլ արժեզրկում և պահուստներ	(7,665)	(6,563)	-	(14,228)
Մաշվածություն և ամորտիզացիա	(5,677,861)	(721,644)	(323,001)	(6,722,506)
Անձնակազմի գծով ծախսեր և այլ ընդհանուր վարչական ծախսեր	(38,271,917)	(10,469,515)	(3,816,030)	(52,557,462)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	19,508,698	61,688,762	7,680,197	88,877,657
Շահութահարկի գծով ծախս	(3,570,981)	(11,291,855)	(1,405,826)	(16,268,662)
Տարվա շահույթ	15,937,717	50,396,907	6,274,371	72,608,995

	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2025թ.				
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	762,086,542	934,682,898	311,598,194	2,008,367,634
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	1,016,190,566	885,465,239	41,064,103	1,942,719,908

* Զուտ ոչ տոկոսային եկամուտը ներառում է միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտը, այլ գործառնական եկամուտները, բանկային ուղղակի ծախսերը, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտը, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով զուտ օգուտը:

	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2024թ.				
Զուտ տոկոսային եկամուտ	38,130,734	41,438,192	14,251,047	93,819,973
Զուտ ոչ տոկոսային եկամուտ*	11,454,811	12,476,994	11,631,146	35,562,951
Միջսեզամենտային եկամուտ	10,383,863	2,419,111	(12,802,974)	-
Գործառնական եկամուտը մինչև արժեզրկումը և այլ վարչական ծախսերը	59,969,408	56,334,297	13,079,219	129,382,924
Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ	(1,691,073)	104,998	-	(1,586,075)
Այլ արժեզրկում և պահուստներ	(10,103)	(8,649)	-	(18,752)
Մաշվածություն և ամորտիզացիա	(4,129,675)	(782,540)	(256,738)	(5,168,953)
Անձնակազմի գծով ծախսեր և այլ ընդհանուր վարչական ծախսեր	(35,034,363)	(10,402,331)	(3,239,186)	(48,675,880)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	19,104,194	45,245,775	9,583,295	73,933,264
Շահութահարկի գծով ծախս	(3,592,745)	(8,508,944)	(1,802,239)	(13,903,928)
Տարվա շահույթ	15,511,449	36,736,831	7,781,056	60,029,336

	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2024թ.				
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	596,242,170	726,582,795	232,549,853	1,555,374,818
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	812,409,831	687,547,155	63,023,136	1,562,980,122

Տոկոսաբեր ակտիվները ներառում են իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները, իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերը և փոխատվությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված համախառն վարկերը և փոխատվությունները և ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները:

Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկերի ավանդները և մնացորդները (բացառությամբ լորո հաշիվների), հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառու միջոցները և ստորադաս փոխառությունները:

* Զուտ ոչ տոկոսային եկամուտը ներառում է միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտը, այլ գործառնական եկամուտները, բանկային ուղղակի ծախսերը, իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտը, իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով զուտ օգուտը:

Չասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Ստորև ներկայացված է հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի բացվածքն ըստ սեզամենտների \$ՅՄՍ 15-ի շրջանակում 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2025թ.				
Պլաստիկ քարտերի սպասարկման վճարներ	17,472,483	-	-	17,472,483
Դրամական փոխանցումներ	2,200,584	1,434,254	-	3,634,838
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	584,444	2,352,173	632,888	3,569,505
Եկամուտ խորհրդատվական, գործարքների կազմակերպման, տեղեկատվական և այլ ծառայություններից	169,196	1,932,181	-	2,101,377
Եկամուտ անհատական պահատուփերից	101,701	-	-	101,701
Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	20,528,408	5,718,608	632,888	26,879,904

	Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ	Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ	Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2024թ.				
Պլաստիկ քարտերի սպասարկման վճարներ	11,663,342	-	-	11,663,342
Դրամական փոխանցումներ	1,868,835	1,404,151	-	3,272,987
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	525,934	2,467,625	412,349	3,405,907
Եկամուտ խորհրդատվական, գործարքների կազմակերպման, տեղեկատվական և այլ ծառայություններից	105,107	3,035,923	-	3,141,030
Եկամուտ անհատական պահատուփերից	103,486	-	-	103,486
Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	14,266,704	6,907,699	412,349	21,586,752

Չհաճախորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթը հիմնականում առաջանում է Չայաստանում գտնվող հաճախորդների հետ պայմանագրերից:

2025թ-ին և 2024թ-ին ոչ մի հաճախորդի բաժին չէր ընկնում Խմբի ընդհանուր հասույթի 10%-ից ավելին:

6. Զուտ տոկոսային եկամուտ

	2025 հազ. դրամ	2024 հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	160,712,401	118,941,125
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	13,321,468	10,510,865
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,798,938	2,114,923
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	1,443,182	1,971,135
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	780,923	987,762
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	7,100	34,539
Այլ	62,910	74,051
	179,126,922	134,634,400
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	1,560,541	2,159,920
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	180,687,463	136,794,320
Այլ տոկոսային եկամուտ		
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	7,389,169	5,353,794
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	2,724,681	1,439,748
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	192,376	2,299
Այլ տոկոսային եկամուտ	10,306,226	6,795,841
Ընդամենը տոկոսային եկամուտ	190,993,689	143,590,161
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	41,889,124	29,705,362
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ	10,882,125	4,027,282
Թողարկված պարտքային արժեթղթեր	10,586,191	8,918,961
Բանկերի ավանդներ և մնացորդներ	3,945,513	3,116,521
Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	2,514,124	2,381,625
Վարձակալության գծով պարտավորություններ	1,441,944	1,394,083
Ակրեդիտիվների և տրամադրված երաշխավորությունների գծով վճարվելիք գումարներ	383,648	225,757
Այլ	107,155	597
Ընդամենը տոկոսային ծախս	71,749,824	49,770,188
Զուտ տոկոսային եկամուտ	119,243,865	93,819,973

7. Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ

	2025 հազ. դրամ	2024 հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ		
Պլաստիկ քարտերի սպասարկման վճարներ	17,472,483	11,663,342
Դրամական փոխանցումներ	3,634,838	3,272,987
Երաշխավորությունների և ակրեդիտիվների տրամադրում	2,651,917	1,868,340
Կանխիկացում, հաշիվների սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ	1,935,069	1,947,445
Բրոքերային ծառայություններ և անդերրայթինգ	1,180,619	1,027,800
Վճարահաշվարկային գործառնություններ	340,720	309,713
Այլ	113,097	120,949
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	27,328,743	20,210,576
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս		
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	6,734,030	3,393,861
Դրամական փոխանցումներ	610,975	417,532
ՀՀ ԿԲ-ի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կանխիկ և անկանխիկ գործառնությունների գծով ծախսեր	97,659	87,903
Երաշխավորությունների և ակրեդիտիվների տրամադրում	27,561	11,505
Այլ	65,999	46,300
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	7,536,224	3,957,101
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ	19,792,519	16,253,475

(ա) Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Խմբի հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթը հիմնականում ներառում է միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը, խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայությունների մատուցումից ստացվող հասույթը: Խումբը միջնորդավճարների և այլ վճարների, խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայությունների գծով հասույթը հիմնականում ճանաչում է ժամանակի որոշակի պահին: Հասույթի մեծ մասը ստացվում է կանխիկ վճարումների տեսքով կամ գանձվում է հաճախորդի հաշվից գործարքի կատարման ժամանակ: 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթը ներառում է.

	2025 հազ. դրամ	2024 հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	24,676,826	18,342,236
Եկամուտ խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայություններից	1,931,138	3,023,508
Եկամուտ տեղեկատվական և այլ ծառայություններից	170,239	117,522
Եկամուտ անհատական պահատուփերից	101,701	103,486
	26,879,904	21,586,752

(բ) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով ստացվելիք գումարների վերաբերյալ:

	2025 հազ. դրամ	2024 հազ. դրամ
Այլ ակտիվներում ներառված ստացվելիք գումարներ	220,523	180,022

8. Զուտ օգուտ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով

	2025 հազ. դրամ	2024 հազ. դրամ
Զուտ օգուտ/(վնաս) արժույթային և տոկոսադրույքային ածանցյալ գործիքների գծով	1,484,312	(73,214)
Զուտ օգուտ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով	1,259,840	346,993
	2,744,152	273,779

9. Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

	2025 հազ. դրամ	2024 հազ. դրամ
Զուտ օգուտ սփոթ գործարքներից	19,757,847	23,664,321
Զուտ վնաս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերազնահատումից	(139,579)	65,241
	19,618,268	23,729,562

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության մշտադիտարկմամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (տոկոսադրույքների վերանայման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների (բացառությամբ տոկոսակիր դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցպահանջ ավանդների) եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և դիրքերի հիման վրա:

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Զուգահեռ աճ 100 բազիսային կետով	(305,947)	(443,142)
Զուգահեռ նվազում 100 բազիսային կետով	305,947	443,142

Ստորև ներկայացված է զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2025թ.		2024թ.	
	Զուտ շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ	Զուտ շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ
Զուգահեռ աճ 100 բազիսային կետով	(89,002)	(163,307)	(62,174)	(40,174)
Զուգահեռ նվազում 100 բազիսային կետով	89,002	163,307	62,174	40,174

(ii) Արժույթային ռիսկ

Խումբն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժույթային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Խումբը հեջավորում է իր ենթարկվածությունն արժույթային ռիսկին, այդ գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման հարաբերություններ՝ ՖՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ* հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	45,254,484	13,302,363	13,882,648	72,439,495
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	9,205,675	113,549	-	9,319,224
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	22,574,625	2,204,621	-	24,779,246
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	71,463,737	966,152	-	72,429,889
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	102,194,803	24,429,068	2,585,680	129,209,551
Հակադարձ հետզևման պայմանագրերով ստացվելիք գումարներ	11,145,985	6,126,582	-	17,272,567
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	482,510,658	200,375,273	1,710,029	684,595,960
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	-	529	-	529
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	10,713,159	12,909,816	-	23,622,975
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	3,056,741	2,272,901	192,115	5,521,757
Այլ ֆինանսական ակտիվներ	6,783,923	249,420	13,642	7,046,985
Ընդամենը ակտիվներ	764,903,790	262,950,274	18,384,114	1,046,238,178
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	59,081,728	8,776,502	8,859,482	76,717,712
Հետզևման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	17,172,223	-	-	17,172,223
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	427,033,469	96,688,467	16,040,821	539,762,757
Թողարկված պարտքային արժեթղթեր	90,468,495	6,020,424	-	96,488,919
Ստորադաս փոխառություններ	9,100,163	27,809,515	-	36,909,678
Այլ փոխառու միջոցներ	94,478,277	146,626,182	-	241,104,459
Վարձակալության գծով պարտավորություններ	-	-	-	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,375,435	391,742	2,987	1,770,164
Ընդամենը պարտավորություններ	698,709,790	286,312,832	24,903,290	1,009,925,912
Զուտ դիրքը	66,194,000	(23,362,558)	(6,519,176)	36,312,266
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	(62,352,165)	20,737,255	8,798,727	(32,816,183)
Զուտ դիրքը	3,841,835	(2,625,303)	2,279,551	3,496,083

* Այլ արտարժույթը ներառում է ռուսական ռուբլին և ֆունտ ստեռլինգը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ* հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	71,313,485	16,868,853	8,154,390	96,336,728
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	9,187,779	120,667	-	9,308,446
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	3,121,123	1,884,355	-	5,005,478
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	75,119,271	777,237	-	75,896,508
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	61,653,029	15,508,627	163,832	77,325,488
Հակադարձ հետզևման պայմանագրերով ստացվելիք գումարներ	793,716	-	-	793,716
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	384,278,882	131,730,638	1,139,121	517,148,641
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	-	226,836	-	226,836
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	9,380,817	10,569,582	-	19,950,399
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	941,827	2,096,848	202,776	3,241,451
Այլ ֆինանսական ակտիվներ	5,468,459	178,603	8,847	5,655,909
Ընդամենը ակտիվներ	621,258,388	179,962,246	9,668,966	810,889,600
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի ավանդներ և մնացորդներ	36,098,317	11,014,434	1,720,707	48,833,458
Հետզևման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	-	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	381,129,701	88,200,124	19,127,896	488,457,721
Թողարկված պարտքային արժեթղթեր	85,256,979	20,778,243	-	106,035,222
Ստորադաս փոխառություններ	9,475,505	18,520,692	-	27,996,197
Այլ փոխառու միջոցներ	86,326,504	35,938,475	-	122,264,979
Վարձակալության գծով պարտավորություններ	-	-	-	-
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,652,686	211,550	2,303	1,866,539
Ընդամենը պարտավորություններ	599,939,692	174,663,518	20,850,906	795,454,116
Զուտ դիրքը	21,318,696	5,298,728	(11,181,940)	15,435,484
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	(23,858,451)	(7,450,020)	11,004,110	(20,304,361)
Զուտ դիրքը	(2,539,755)	(2,151,292)	(177,830)	(4,868,877)

* Այլ արտարժույթը ներառում է ռուսական ռուբլին և ֆունտ ստեռլինգը:

Ստորև աղյուսակում ներկայացված 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը նշված արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացվել է առանց հաշվի առնելու հարկերը և հիմնվելով արտարժույթների փոխարժեքների փոփոխությունների վրա, որոնք Խումբը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից առաջացող եկամուտը (ծախսը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվել է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	384,183	(253,976)
ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	(262,530)	(215,129)

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի արժևորումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրի կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Խմբում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), այդ թվում՝ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները, ստեղծվել են Վարկային կոմիտեն և Ռիսկերի կառավարման կենտրոնը, որոնք ակտիվորեն վերահսկում են պարտքային ռիսկը: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրինության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրության և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրի կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկի տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը,
- վարկերի և այլ գործիքների, որոնց հետ կապված Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին, շարունակական հսկողության և մշտադիտարկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային հայտերը պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկային բաժնի, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի բիզնեսի և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Վարկային հայտը և հաշվետվությունն այնուհետև անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկային հայտը Վարկային բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Խմբի Իրավաբանական դեպարտամենտի կողմից՝ կախված դրանց հատուկ ռիսկերից:

Խումբը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վերջինիս կողմից տրամադրված կամ Խմբի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց վարկային հայտերն ուսումնասիրվում են Մանրածախ վարկավորման ստորաբաժանման կողմից: 2020թ-ից Խումբը ներդրել է մեքենայական ուսուցման վրա հիմնված նոր սջորինգային համակարգ ապառիկ գնումների և օկլայն սպառողական վարկերի պորտֆելի համար:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, Ռիսկերի կառավարման կենտրոնը վարկային պորտֆելը գնահատում է վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

1-փուլ Կարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլում ներառվում են նաև այն վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:

2-րդ փուլ: Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, Խումբը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլում ներառվում են նաև այն վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:

3-րդ փուլ Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Խումբը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները բերված կամ սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, իսկ տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է՝ կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում կամ ապաճանաչվում են այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները:

Պարտազանցման սահմանում

Խումբը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտազանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից:

Չաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Խումբը դիտարկում է նաև տարբեր դեպքեր, որոնք, ըստ ղեկավարության դատողության, կարող են վկայել վճարման քիչ հավանականության մասին (Ծանոթագրություն 4(ե)(iv)): Եթե այդպիսի դեպք է տեղի ունենում, Խումբը մանրամասն դիտարկում է, արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ 2-րդ փուլ դասելը նպատակահարմար է:

Պարտազանցման հավանականության գնահատման գործընթաց

Գանձապետական և միջբանկային հարաբերություններ

Խմբի գանձապետական և միջբանկային հարաբերությունների կողմեր և պայմանագրի կողմեր են հանդիսանում ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները, բանկերը, բրոքերները և դիլերները, ֆոնդային բորսաները և քլիրինգային կազմակերպությունները: Այդ հարաբերությունների հետ կապված Խումբն իրականացնում է հրապարակայնորեն հասանելի, մասնավորապես, ֆինանսական տեղեկատվության և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալների, օրինակ՝ արտաքին վարկանիշների վերլուծություն:

Չաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Խմբավորում

2022թ-ին պարտազանցման հավանականությունը գնահատելու նպատակով՝ Խումբը մշակել և ներդրել է իր ներքին վարկանիշային մոդելն անհատական հիմունքով խոշոր վարկերի համար, որոնք կազմում են իրավաբանական անձանց տրված վարկերի ընդհանուր պորտֆելի մոտ 60%-ը:

Որպես մոդել նախընտրելի է օգտագործել լոգիստիկ ռեգրեսիան, որը մոդելավորում է բինարային կախյալ փոփոխականի, այսպես կոչված թիրախային փոփոխականի (12-ամսյա ժամանակահատվածում պարտազանցման տեղի ունենալու ցուցանիշ) հավանականությունները՝ կախված մի քանի անկախ փոփոխականներից:

Պարտազանցման հավանականության կորպորատիվ մոդելի մշակման շրջանակում կառուցվել են գնահատման երեք սանդղակ.

– Վարքազծային. ներառում է Խմբի աղբյուրներից ստացված վարքազծային/գործարքային տվյալների հիման վրա ձևավորված գնահատման պարամետրերը,

– Ֆինանսական. ներառում է Խմբին տրամադրված առանձին ֆինանսական հաշվետվություններից ստացված տեղեկատվության հիման վրա ձևավորված գնահատման պարամետրերը

– Որակական. ներառում է գնահատման պարամետրերը, որոնք հիմնված են Խմբում կուտակված կամ կազմված որակական և այլ քանակական տեղեկատվության վրա, որն արտացոլում է Խմբի պարտատերերի պարտքային ռիսկը:

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը որպես կանոն արտացոլում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարները: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխատվությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության համաձայնագրերի շրջանակում:

Չաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գրավի և այդ վարկերի և փոխատվությունների գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 33-ում:

Վերականգնման և վարկերի կորուստների գնահատման միջոցների ռիսկի կորուստներ

Արժեզրկման գնահատում

2018թ. հունվարի 1-ից Խումբն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասորդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական պակասորդը պայմանագրին համապատասխան Խմբին հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և Խմբի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է: Ստորև ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և հիմնական տարրերը:

Վարկերի կորուստների գնահատման միջոցների ռիսկի կորուստներ

Պարտազանցման հավանականության

Պարտազանցման հավանականությունը որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու հավանականության գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահին՝ գնահատված ժամանակահատվածի ընթացքում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Վարկերի չափը

պարտազանցման պահին

Պարտքի չափը պարտազանցման պահին ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի չափի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը

պարտազանցման դեպքում

Կորուստը պարտազանցման դեպքում կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահին տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ, այդ թվում՝ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին գումարի տոկոս:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա: 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որն առաջանում է ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների պորտֆելի բնույթից:

Խմբի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը:

Վերը նշված գործընթացի հիման վրա Խումբը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված վարկեր, ինչպես ներկայացված է ստորև.

Ներքին վարկանիշ	Պարտազանցման հավանականության տիրույթ
1 (ամենաբարձ միավորը)	0.03% - 0.07%
2	0.07% - 0.13%
3	0.13% - 0.24%
4A	0.24% - 0.43%
4B	0.43% - 0.77%
4C	0.77% - 1.37%
5A	1.37% - 2.44%
5B	2.44% - 4.29%
5C	4.29% - 7.45%
6	7.45% - 12.62%
7	12.62% - 20.59%
8	20.59% - 100%

Վերոնշյալ երեք մոդելները փոխկապակցված են՝ ընտրանքում ընդգրկված յուրաքանչյուր պարտատիրոջ, ինչպես նաև առաջիկա ժամանակաշրջաններում Խմբի կորպորատիվ պորտֆելում ներառման ենթակա բոլոր նոր պարտատերերի համար վերջնական գնահատական ստանալու համար: Դրա հիման վրա իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդները դասակարգվում են ըստ պարտազանցման հավանականության վրա հիմնված հետևյալ վարկանիշների:

Համապատասխան դեպքերում Խումբը կիրառում է մոդելի արդյունքների ճշգրտումներ տոկոսների ծածկույթի գործակցի մոդելի հիման վրա ստացված ակնկալվող պարտքային կորուստների գնահատման գծով՝ ղեկավարության դատողությունները ներառելու համար: Մոդելի արդյունքների ճշգրտումներն իրենցից ներկայացնում են մոդելի միջոցով ստացված ակնկալվող պարտքային կորուստների արդյունքների ճշգրտումներ և կազմում են ղեկավարության գնահատման մաս, որն իրականացվում է պարզելու համար, արդյոք մոդելի արդյունքները պատշաճ կերպով արտացոլում են գերակայող տնտեսական պայմանները և համապատասխան ռիսկի գործոնները հաշվետու ամսաթվի դրությամբ: Այդ ճշգրտումները հիմնված են հասանելի տեղեկատվության վրա և նախատեսված են մոդելների վրա հիմնված գնահատումներին բնորոշ սահմանափակումներին անդրադառնալու համար:

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մոդելի արդյունքների ճշգրտումներն իրենցից ներկայացնում են պարտազանցման հավանականության գնահատման վերին սահմանի սահմանումը որոշ ոլորտներում գործող իրավաբանական անձանց համար: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մոդելի արդյունքների ճշգրտումների ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների վրա կազմել է 3,573,573 հազար դրամ (2024թ-ին՝ 2,763,831 հազար դրամ) իրավաբանական անձանց տրված վարկերի համար:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 1-ին փուլ դասված իրավաբանական անձանց տրված վարկերի պարտքային որակի մասին, որոնց համար Խումբը կիրառել է ներքին վարկանիշային մոդելը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	2025թ.		
	Համախառն գումար	Պարտքային կորստի պահուստ	Ձուտ գումար
Իրավաբանական անձանց տրված վարկեր			
Կարգ 1	12,670,764	913	12,669,851
Կարգ 2	12,308,626	1,495	12,307,131
Կարգ 3	13,980,531	4,958	13,975,573
Կարգ 4. A-C	220,285,917	457,277	219,828,640
Կարգ 5. A-C	459,611,160	3,809,569	455,801,591
Կարգ 6	11,349,198	54,900	11,294,298
Կարգ 7	1,105,556	7,185	1,098,371
Կարգ 8	-	-	-
	731,311,752	4,336,297	726,975,455

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 1-ին փուլ դասված իրավաբանական անձանց տրված վարկերի պարտքային որակի մասին, որոնց համար Խումբը կիրառել է ներքին վարկանիշային մոդելը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	2024թ.		
	Համախառն գումար	Պարտքային կորստի պահուստ	Ձուտ գումար
Իրավաբանական անձանց տրված վարկեր			
Կարգ 1	1,768,948	55	1,768,893
Կարգ 2	6,207,760	890	6,206,870
Կարգ 3	13,702,801	5,995	13,696,806
Կարգ 4. A-C	141,901,495	273,874	141,627,621
Կարգ 5. A-C	312,970,589	3,085,156	309,885,433
Կարգ 6	26,980,337	243,865	26,736,472
Կարգ 7	7,241,579	156,152	7,085,427
Կարգ 8	-	-	-
	510,773,509	3,765,987	507,007,522

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 1-ին փուլ դասված ֆինանսական վարձակալության պարտքային որակի մասին, որի համար Խումբը կիրառել է ներքին վարկանիշային մոդելը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	2025թ.		
	Համախառն գումար	Պարտքային կորստի պահուստ	Ձուտ գումար
Իրավաբանական անձանց տրված վարկեր			
Կարգ 1	13,416	-	13,416
Կարգ 2	369,499	174	369,325
Կարգ 3	134,293	19	134,274
Կարգ 4. A-C	3,668,231	5,402	3,662,829
Կարգ 5. A-C	15,108,335	141,468	14,966,867
Կարգ 6	44,302	109	44,193
Կարգ 7	-	-	-
Կարգ 8	-	-	-
	19,338,076	147,172	19,190,904

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 1-ին փուլ դասված ֆինանսական վարձակալության պարտքային որակի մասին, որի համար Խումբը կիրառել է ներքին վարկանիշային մոդելը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2024թ.		
	Համախառն գումար	Պարտքային կորստի պահուստ	Չուտ գումար
հազ. դրամ			
Իրավաբանական անձանց տրված վարկեր			
Կարգ 1	-	-	-
Կարգ 2	57,386	3	57,383
Կարգ 3	-	-	-
Կարգ 4. A-C	3,157,998	7,016	3,150,982
Կարգ 5. A-C	12,428,385	31,423	12,396,962
Կարգ 6	375,332	1,243	374,089
Կարգ 7	-	-	-
Կարգ 8	-	-	-
	16,019,101	39,685	15,979,416

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 1-ին փուլ դասված ֆակտորինգի գծով ստացվելիք գումարների պարտքային որակի մասին, որի համար Խումբը կիրառել է ներքին վարկանիշային մոդելը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2025թ.		
	Համախառն գումար	Պարտքային կորստի պահուստ	Չուտ գումար
հազ. դրամ			
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ			
Կարգ 1	-	-	-
Կարգ 2	-	-	-
Կարգ 3	208,069	1	208,068
Կարգ 4. A-C	269,634	80	269,554
Կարգ 5. A-C	1,483,907	533	1,483,374
Կարգ 6	4,959,986	23,622	4,936,364
Կարգ 7	-	-	-
Կարգ 8	-	-	-
	6,921,596	24,236	6,897,360

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի կիրառել ներքին վարկանիշային մոդելը ֆակտորինգի գծով ստացվելիք գումարների համար:

Բացի այդ, Խումբն առանձնացնում է նաև պորտֆելների հետևյալ տեսակները.

- իրավաբանական անձանց տրված վարկեր, որոնց համար պարտազանցման հավանականությունը չի հաշվարկվում ներքին վարկանիշային մոդելի հիման վրա,
- հիփոթեքային վարկեր,
- սպառողական վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով պարտազանցման հավանականությունը հիմնված է անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվության վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցների միջոցով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվությունը: Հավանականությունը հաշվարկվում է որպես ժամկետանց դասերի միջև տեղափոխվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերում ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Պարտազանցման հավանականությունը հետագայում ճշգրտում է ապագայամետ տեղեկատվության հիման վրա:

Պարտքի չափը պարտազանցման պահին

Պարտքի չափը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքի համախառն հաշվեկշռային արժեքը՝ հաշվի առնելով ինչպես պարտքի ավելացման հաճախորդի հնարավորությունը մինչև պարտազանցման տեղի ունենալը, այնպես էլ հնարավոր վաղաժամ մարումները: 1-ին փուլի վարկի գծով պարտազանցման պահին պարտքի չափը հաշվարկելու համար Խումբը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ փուլի ֆինանսական գործիքների համար պարտազանցման պահին պարտքի չափը դիտարկվում է գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեպքերի տեսանկյունից:

3-րդ փուլի և ճեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտազանցման պահին հավասար է այդ վարկերի համախառն գումարին:

Պարտքի չափը պարտազանցման պահին որոշվում է պարտազանցված վարկերի՝ նախքան պարտազանցման տեղի ունենալու ամսաթիվն ամորտիզացված արժեքի անցյալ ժամանակաշրջանների փոփոխությունների հիման վրա:

Կորուստը պարտազանցման դեպքում

Անհատական հիմունքով ոչ նշանակալի՝ 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար, Խումբը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է պորտֆելի մակարդակով: Խումբը պարտազանցման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերադարձումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները բոլոր պարտազանցված վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը և գեղչվում է պարտազանցման ամսաթվի դրությամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է պարտազանցված վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարումից, երաշխավորողից, գրավի վաճառքից ստացված դրամական միջոցներ և այլն): Անհատական հիմունքով նշանակալի՝ 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար Խումբը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է անհատական հիմունքով հաշվի առնելով ակնկալվող դրամական միջոցները, այդ թվում՝ գրավի իրացումից ստացվելիք դրամական հոսքերը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անհատական հիմունքով հաշվարկված պարտազանցման դեպքում առաջացող կորուստը կազմում էր 5%-53.7% (2024թ-ին՝ 5%-53.7%):

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Խմբի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Խումբն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Խումբը համարում է, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե այդ ակտիվների գծով վճարումներն ավելի քան 30 օր ժամկետանց են:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Խմբի ղեկավարությունը դիտարկում է նաև հետևյալ գործոնները՝

- տվյալ վարկառուի՝ Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպությունից ստացված այլ վարկի ժամկետանց օրերի քանակը,
- վարկառուի ֆինանսական դժվարությունները,
- մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացումը և դրանց հնարավոր ազդեցությունը վարկառուի ֆինանսական արդյունքների վրա,
- վարկանիշի բացասական փոփոխությունը 3 և ավելի կետով Խմբի համար ծառայում է որպես վաղ նախազգուշացում վարկառուի ֆինանսական վիճակի լրացուցիչ ուսումնասիրություն և վերլուծություն իրականացնելու համար՝ պարտքային ռիսկի նշանակալի աճի հայտանիշները բացահայտելու նպատակով:

Դուրսգրումներ

2025թ-ին Բանկը վերանայել է իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի դուրսգրման պահը՝ ժամկետանց օրերի քանակը 270-ից դարձնելով 1,000 օր գրավով չապահովված վարկերի և 1,730 օր՝ գրավով ապահովված վարկերի համար: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դուրսգրման պահի փոփոխության արդյունքում իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի վերադարձված համախառն գումարը կազմել է համապատասխանաբար 2,143,047 հազար դրամ և 5,224,638 հազար դրամ: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստները կազմել են համապատասխանաբար 1,481,782 հազար դրամ և 4,064, 276 հազար դրամ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար:

Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում խումբը որպես ապագայամետ տեղեկատվություն օգտագործում է մակրոտնտեսական ցուցանիշների լայն շրջանակ, որոնցից են՝

- սպառողական գների ինդեքսը,
- ՌԴ ռուբլի /ՅՅ դրամ փոխարժեքը,
- արտահանման ծավալները,
- Ներմուծման ծավալները,
- ՀՆԱ-ի իրական աճը,
- արդյունաբերական արտադրության աճը,
- զուտ արտահանումը:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները խումբը ստանում է արտաքին աղբյուրներից (Տնտեսական հետաքննությունների բաժնից): Խմբի Պարտքային ռիսկի բաժնի մասնագետները գնահատում են տարբեր սցենարներին վերագրելի կշիռները:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2025թ-ին ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի յուրաքանչյուր սցենարում օգտագործված մակրոտնտեսական ցուցանիշները/ենթադրությունները:

Ֆինանսական գործոններ	Որոշված			
	ԱՊԿ սցենար	հավանականություն, %	2026թ.	2027թ.
Ֆինանսական գործոններ				
Սպառողական գների ինդեքս				
	Լավատեսական	20%	100.464	100.364
	Բազային	60%	103.500	103.400
	Վատատեսական	20%	106.537	106.437
ԱՄՆ դոլար /ՅՅ դրամ փոխարժեք				
	Լավատեսական	20%	362.487	372.487
	Բազային	60%	410.000	420.000
	Վատատեսական	20%	457.513	467.513
ՌԴ ռուբլի/ՅՅ դրամ փոխարժեք				
	Լավատեսական	20%	7.577	7.340
	Բազային	60%	4.540	4.303
	Վատատեսական	20%	1.504	1.266
Արտահանում, մլն. ԱՄՆ դոլար				
	Լավատեսական	20%	10,864.00	10,864.00
	Բազային	60%	7,599.00	7,599.00
	Վատատեսական	20%	4,334.00	4,334.00
Ներմուծում, մլն. ԱՄՆ դոլար				
	Լավատեսական	20%	15,459.00	15,062.00
	Բազային	60%	11,426.00	11,029.00
	Վատատեսական	20%	7,392.00	6,995.00
ՀՆԱ-ի իրական աճ				
	Լավատեսական	20%	109.7557	109.3625
	Բազային	60%	105.1083	104.7637
	Վատատեսական	20%	100.4609	100.1348
Զուտ ներմուծում, մլն. ԱՄՆ դոլար				
	Լավատեսական	20%	2,261.000	1,761.000
	Բազային	60%	2,800.000	2,300.000
	Վատատեսական	20%	3,339.000	2,839.000

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2024թ-ին ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի յուրաքանչյուր սցենարում օգտագործված մակրոտնտեսական ցուցանիշները/ ենթադրությունները:

Ֆինանսական գործոններ	Որոշված			
	ԱՊԿ սցենար	հավանականություն, %	2025թ.	2026թ.
Ֆինանսական գործոններ				
Սպառողական գների ինդեքս				
	Լավատեսական	20%	100.281	98.2801
	Բազային	60%	103.400	101.400
	Վատատեսական	20%	106.519	104.519
ԱՄՆ դոլար /ՅՅ դրամ փոխարժեք				
	Լավատեսական	20%	329.913	390.713
	Բազային	60%	377.100	437.900
	Վատատեսական	20%	424.288	485.088
ՌԴ ռուբլի/ՅՅ դրամ փոխարժեք				
	Լավատեսական	20%	7.255	7.305
	Բազային	60%	4.440	4.490
	Վատատեսական	20%	1.625	1.675
Արտահանում, մլն. ԱՄՆ դոլար				
	Լավատեսական	20%	1,702.625	1,728.382
	Բազային	60%	1,471.817	1,497.573
	Վատատեսական	20%	1,241.008	1,266.764
Ներմուծում, մլն. ԱՄՆ դոլար				
	Լավատեսական	20%	2,080.511	2,032.927
	Բազային	60%	1,821.028	1,773.444
	Վատատեսական	20%	1,561.545	1,513.961
ՀՆԱ-ի իրական աճ				
	Լավատեսական	20%	109.397	109.107
	Բազային	60%	104.858	104.563
	Վատատեսական	20%	100.319	100.022
Զուտ ներմուծում, մլն. ԱՄՆ դոլար				
	Լավատեսական	20%	3,380.000	2,968.000
	Բազային	60%	3,842.000	3,430.000
	Վատատեսական	20%	4,304.000	3,892.000

Վերը աղյուսակում ներկայացված բազային կանխատեսումների հետ մեկտեղ (60% հավանականությամբ) խումբն օգտագործում է նաև կանխամտածված ձևով փոփոխված մակրոտնտեսական փոփոխականներն ակնկալվող պարտքային կորուստները լավատեսական (20% հավանականությամբ) և վատատեսական (20% հավանականությամբ) սցենարներով հաշվարկելու համար: Այդ ցուցանիշները գնահատվում են ակնկալվող պարտքային կորուստների վերջնական ցուցանիշը ստանալու համար:

Ակնկալվող պարտքային կորուստների զգայնությունն ապագա տնտեսական պայմանների նկատմամբ

Ապագա ակնկալվող պարտքային կորուստները զգայուն են այն դատողությունների և ենթադրությունների նկատմամբ, որոնք կատարվել են ապագայամետ տեղեկատվության սցենարների ձևավորման և հաշվարկներում այդ սցենարների ներառման եղանակի հետ կապված: Ղեկավարությունն իրականացնում է իր ակտիվների էական դասերի գծով ճանաչված ակնկալվող պարտքային կորուստների զգայնության վերլուծություն:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի գծով կորստի պահուստը ենթադրելով, որ ապագայամետ սցենարներից յուրաքանչյուրի (օրինակ՝ բազային, լավատեսական և վատատեսական) կշիռը կազմում է 100 տոկոս 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երեք սցենարների նկատմամբ սցենարի հավանականության կշիռները կիրառելու փոխարեն: Համեմատությունը հեշտացնելու համար աղյուսակում ներառված են նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հավանականությամբ կշռված գումարները:

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2025թ.			
	Լավատեսական	Բազային	Վատատեսական	Հավանա-կանությամբ կշռված
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Համախառն մնացորդ	970,918,395	970,918,395	970,918,395	970,918,395
Պարտքային կորստի պահուստ	8,322,527	11,700,000	15,488,668	11,293,649
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Համախառն մնացորդ	665,965,189	665,965,189	665,965,189	665,965,189
Պարտքային կորստի պահուստ	11,364,269	12,638,478	13,854,506	12,583,911

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2024թ.			
	Լավատեսական	Բազային	Վատատեսական	Հավանա-կանությամբ կշռված
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Համախառն մնացորդ	750,040,207	750,040,207	750,040,207	750,040,207
Պարտքային կորստի պահուստ	6,004,314	8,880,251	11,195,346	9,124,165
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Համախառն մնացորդ	517,318,610	517,318,610	517,318,610	517,318,610
Պարտքային կորստի պահուստ	2,768,071	3,667,503	4,466,035	3,647,323

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Խմբի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Նմանատիպ ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը: Ֆինանսական գործիքները, այդ թվում՝ վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Խումբը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերով: Գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Դա նշանակում է, որ որպես գրավ ստացված/ տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այդ պայմանները յուրաքանչյուր պայմանագրի կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը, եթե պայմանագրի կողմը գրավ չի տրամադրում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այդ պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Խմբի կամ պայմանագրի կողմերի կողմից պարտագանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ, Խումբը և վերջինիս պայմանագրի կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվու- թյունում չհաշվանցված գումարներ		Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվու- թյունում չհաշվանցված գումարներ		
	ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվանցված ճանաչված ֆին. պարտավորության/ համախառն գումար	Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու- թյունների զուտ գումար	Ֆինանսական գործիքներ	Զուտ գումար
Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ					
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		-	55,781,510	(60,739,629)	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	55,781,510	-	55,781,510	(60,739,629)	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	55,781,510	-	(17,172,223)	20,883,372	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(17,172,223)	-	(17,172,223)	20,883,372	-

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական

հազ. դրամ

	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցված ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների գումար	Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում չհաշվանցված գումարներ	Ֆինանսական գործիքներ	Չուտ գումար
Հակադարձ հետզևման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	28,760,592	-	28,760,592	(31,230,625)	-	
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	28,760,592	-	28,760,592	(31,230,625)	-	
Հետզևման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(45,064,852)	-	(45,064,852)	48,723,562	-	
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(45,064,852)	-	45,064,852	48,723,562	-	

Վերը աղյուսակներում բացահայտված ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար սկզբունքն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար, քանի որ իրականացվող գործարքները հաճախ ունեն անորոշ ժամկետ և տարբեր բնույթ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Խմբի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Խումբը ձգտում է պահպանել ֆինանսավորման դիվերսիֆիկացված և կայուն բազա, որը ներառում է այլ բանկերից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերը, իրավաբանական և ֆիզիկական անձանց ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների դիվերսիֆիկացված պորտֆելները՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներին արագ և արդյունավետ արձագանքելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված իրացվելի ակտիվների անհրաժեշտ մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես

ապահովություն դրամական հոսքերի ընդհատման դեպքում,

- անկանխատեսելի իրավիճակներում իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության նորմատիվների համապատասխանության հսկողություն:

Ակտիվների և պարտավորությունների բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի և ապագա գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների բաժինը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և փոխատվություններից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ: Ակտիվների և պարտավորությունների բաժինն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «սթրես թեստեր» շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացվում են ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Ակտիվների և պարտավորությունների բաժնի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով: Ֆինանսական երաշխավորության պայմանագրի համար երաշխավորության առավելագույն գումարը բաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանին, որի ընթացքում երաշխավորությունը կարող է օգտագործվել: Վճարումները, որոնց մասին հաճախորդները պետք է ծանուցվեն, դիտարկվում են այնպես, ինչպես եթե ծանուցումն անմիջապես ներկայացված լիներ: Այնուամենայնիվ, Խումբն ակնկալում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումն ամենավաղ հնարավոր ամսաթվին, որին Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակում ներկայացված չեն Խմբի կողմից պահվող ավանդների անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա նշված ակնկալվող դրամական հոսքերը:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ֆինանսական պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	32,780,598	17,143,140	30,177,861	3,326,774	12,606,445	3,284,263	99,319,081	95,759,071
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	23,365,343	-	-	-	-	-	23,365,343	23,365,343
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	835,651,375	70,665,468	110,037,086	234,245,974	144,019,690	13,418,299	1,408,037,892	1,362,273,949
Թողարկված պարտքային արժեթղթեր	760,235	2,128,176	26,776,113	28,339,972	124,430,808	5,892,012	188,327,316	167,840,072
Ստորադաս փոխառություններ	5,128	679,021	398,140	1,539,549	11,254,865	44,697,671	58,574,374	36,909,678
Այլ փոխառու միջոցներ	11,887,736	2,926,071	19,280,431	20,120,658	190,899,749	59,322,156	304,436,801	256,571,872
Վարձակալության գծով պարտավորություններ	466,731	227,067	619,475	1,369,944	9,354,414	13,691,382	25,729,013	14,692,281
Այլ պարտավորություններ	11,475,734	-	-	-	-	-	11,475,734	11,475,734
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	916,392,880	93,768,943	187,289,106	288,942,871	492,565,971	140,305,783	2,119,265,554	1,968,888,000
Փոխատվության հանձնառություններ	224,489,062	-	-	-	-	-	224,489,062	224,489,062
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ (համախառն)	82,428,467	-	-	-	-	-	82,428,467	178,471

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ֆինանսական պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	31,354,471	16,936,693	2,317,519	3,097,939	15,131,296	3,248,512	72,086,430	68,619,504
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	30,040,451	15,024,401	-	-	-	-	45,064,852	45,064,852
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	738,925,027	56,736,624	74,859,749	173,659,454	100,750,543	6,291	1,144,937,688	1,122,212,988
Թողարկված պարտքային արժեթղթեր	547,664	17,738,619	7,370,638	39,634,183	109,710,544	6,483,755	181,485,403	163,153,204
Ստորադաս փոխառություններ	-	714,887	366,759	1,085,169	18,888,435	17,938,505	38,993,755	27,996,197
Այլ փոխառու միջոցներ	382,155	2,589,023	3,116,931	8,669,530	124,876,759	23,449,730	163,084,128	135,933,377
Վարձակալության գծով պարտավորություններ	424,285	172,812	551,901	1,197,740	8,415,765	11,046,576	21,809,079	12,839,765
Այլ պարտավորություններ	10,042,843	-	-	-	-	-	10,042,843	10,042,843
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	811,716,896	109,913,059	88,583,497	227,344,015	377,773,342	62,173,369	1,677,504,178	1,585,862,730
Փոխատվության հանձնառություններ	146,368,566	-	-	-	-	-	146,368,566	146,368,566
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ (համախառն)	39,083,615	-	-	-	-	-	39,083,615	487,082

Վերը և ստորև ներկայացված աղյուսակներում հաճախորդների ընթացիկ հաշիվներում և ավանդներում ներառված են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Խումբը պարտավոր է վճարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն ավանդատուի պահանջով կորցնելով հաշվեգրված տոկոսները: Վերը նշված աղյուսակում այդ ավանդները դասակարգված են ըստ իրենց սահմանված մարման ժամկետների: Ստորև ներկայացված աղյուսակում այդ ավանդները դասակարգված են ըստ պայմանագրային մարման ժամկետների:

